Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

24349

Մ. ՈՍԻՊՈՎ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԱՆ

Թարգ. Հ. ԲՈՂԴ.

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.
Цена 50 коп.

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ „ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ"
1932 թ. ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

331.87
0-48

15 JAN 2010
331.87
0-48

Մ. ՈՍԻՊՈՎ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԱՆ

Թարգ. Հ. Բոզդ.

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»

1932
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

30 SEP 2013

24349

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերական տափաստանը 3
«Գիգանտը» կոլխոզների ուղեցույցն է 9
Ռացիոնալիզատորական արշավը 18
«Ութերորդ կոմյերիտական» 25
Շրջադարձը կատարված է 27
Տեմպի համար, վորակի համար 36
Արշավ՝ կիզանյութը տնտեսելու համար 55
Բոլշևիկյան բերքատվությունը պահպանելու համար . 63
Կոիրապետենք կոմբայնի տեխնիկային 66
Հավելված 74

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ս. ԱՄԱՍԻԱՅԻ ԱՆՎԱՆ

56320-66

«Առջևից կերբան խորհրդանշությունները՝ վորպես գյուղի հին կենցաղի վերակառուցման վողնաշարը:

Նրանց հետևից կերբան բազմաթիվ կոլտնտեսությունները՝ վորպես գյուղում տեղի ունեցող նոր շարժման հենակետերը: Այս յերկու սիստեմների միացյալ աշխատանքից ստեղծվում են ԽՍՀՄ-ի բոլոր մարզերի յիակատար կոլեկտիվացման պայմանները» (ՍՏԱԼԻՆ):

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՏԱՓԱՍՏԱՆԸ

Այստեղ, ուր ներկայումս փռված են «Գիգանտի» արդյունաբերական վրանները և վորտեղից՝ վորպես սոցիալիստական հաղթանակների արձագանք՝ աշխարհիս ամեն կողմը լսվում է պողպատե ձիերի յերգը,—այստեղ, յերեք տարի առաջ, անվար տափաստան եր, վորի պտղությունը դարերի ընթացքումն եր կոփվել:

Բայց բոլշևիկները վորոշեցին նվաճել այդ տափաստանը և դարձնել նրան ինդուստրիալ արդյունաբերական: Յեվ նվաճեցին: Ջե՞ վոր ասված է՝ «չկան այնպիսի ամրություններ, վորոնք բոլշևիկները չկարողանային վերցնել»:

Կուսակցության այստեղ փոխադրած տրակտորների դղրդյունը լսելով, յեկան հավաքվեցին մարդիկ, և այս մարդկանց կամքն ավելի ուժեղ եր, քան թե անվար մնացած խամ հողի շերտերը:

Առաջին իսկ աշնանը վարվեց 80 հազար հեկտար խամ հող: Բոլշևիկյան անդրանիկ սերմերն անյերկյուղ կերպով ձգվեցին սեահողի խորքը: Հենց այդ ժամանակ, վայրի այս տափաստանում, հիմքը դրվեց «Գիգանտի»:

Կային դժվարություններ: Կուլակի դեմ մղված համառ կռիվների արդյունք եյին հաղթանակները: Նվաստացողներն ու թերահավատները խուճապի եյին յենթարկվում:

«Գիգանտին» վատաբանում եյին աջ ոպորտունիստները—վերացման յենթարկվող դասակարգի այդ գործակալները:

Աջերի առաջնորդները, կռվելով կուսակցության քաղաքականության դեմ, վոր նպատակ ուներ խորհտնտների և կոլտնտների զարգացումը, հայտարարում եյին, թե «սովխոզներն ու կոլխոզները հիսուն տարուց հետո միայն կտան մեզ հարկավոր քանակությամբ հաց, այն ինչ մենք հացի պետք ունենք հենց այժմ»:

Բուրժուազիայի գիտնական «տեսաբանները», փրփուրը բերնին, ձգնում էին ապացուցել սոցիալիստական խոշոր հացահատիկային ֆաբրիկների կազմակերպման անարդյունավետությունը և անկարելիությունը։

Պարոն Դոյարենկոն, վոր բուրժուական խոշոր գիտնականներից մեկն է համարվում, շաղակրատում էր, թե նվազագույն ժամկետում հարյուր միլիոն տոն հաց տվող խոշոր հացահատիկային խորհտնտեսություններ կազմակերպելու բոլշևիկյան պլանները ֆանտաստիկ, յուրեակայական ձեռնարկներ են։

«Ես մտածում եմ, վոր յեթե վորևե մեկին առաջարկեին կազմակերպել գեթ մի փոքրիկ տնտեսություն, բայց վոչ 20 դեսյատինանոց, այլ 500—1000 դեսյատինանոց, այնպես վոր լիակատար արտադրանք ստացվեր նրանից,—հնարավոր է իրոք հասնել դրան 4 տարում։ Ես ասում եմ—վոչ։ Հարյուր դեսյատին ունեցող մի տնտեսություն, վոր փոքր տնտեսություն է, կազակերպել այնպես, վոր նա չորս տարում լիակատար արտադրանք տա, չի կարելի թեկուզ նրա համար, վոր դուք 4 տարում չեք կարողանա ցանքաշրջանն իրացնել։ Պարզ է ուրեմն, վոր չորս տարում անկարելի յե կազմակերպել այդպիսի մի մեծ ձեռնարկություն, կամ նրա այն մասը, վորն այս տարի յե սկսվելու։ Այդ մեզ թույլ չի տա ինքը՝ բնությունը, հետևաբար և չի կարելի յենթադրել, վոր չորս տարուց հետո 100 միլիոն փութ հացահատիկ նեռվեր շուկա»։

Սակայն բոլշևիկյան իրականությունը խորտակեց աջ «տեսաբանների» մարգարեությունները և բուրժուական տնտեսագետների ուսմունքը։ Սովխոզներն ստեղծվեցին։

1930 թվին Զերնոտրեստը 143 հատ խորհտնտեսություն կազմակերպեց, 1,750 հազար հեկտար տարածություն ցանեց և մյուս սովխոզների հացահատիկային մասի տնտեսությունների հետ միասին (և առաջին հերթին՝ Սոյուզսախարի հետ) 12 միլիոն ցենտներ հացահատիկ տվեց։ 1931 թվին Զերնոտրեստն իր տնտեսությունն այնպես և ծավալում, վորպեսզի մյուս սովխոզների հացահատիկային մասի տնտեսությունների հետ միասին ապահովել կարողանա 60—65 միլիոն ցենտներ ապրանքային հացահատիկ։

Խորհտնտեսություններն աճում և ամրանում էին՝ հաղթահարելով իրենց զարգացման ճամբու վրա գտնված մեծամեծ դժվարություններն ու խոչընդոտները։

«Խորհտնտեսությունների շինարարությունը տեղի յեր ունենում խորհրդային իշխանության քաղաքականության հանդեպ կուլակների ցույց տված ամենակատաղի դիմադրության պայմաններում։ Այս դիմադրության արտացոլումն եր աջ ուկլոնիստների՝ կուսակցության ներսում մղած պայքարն ինչպես կուսակցության ընդհանուր գծի դեմ, այնպես ել կուլակի վրա հարձակում գործելու դեմ, խորհտնտեսությունների զարգացման դեմ։ Աջ ուկլոնիստներն ամեն կերպ աշխատում էին կասեցնել խորհտնտեսությունների զարգացումը, արգելակել և վիժեցնել բանվոր դասակարգի և չքավորների ու միջակների՝ կուլակի վրա հարձակումը։

Միայն կոմունիստական կուսակցության՝ աջ ոպորտունիստական խմբակցությունների դեմ մղած անողոք պայքարի շնորհիվ հաջողվեց փրկել սովխոզներն, ընկճել կուլակների դիմադրությունը և հող պատրաստել կուլակության՝ վորպես դասակարգի՝ վերացման»։ (Խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումներից, Յակովլևի զեկուցման առթիվ)։

Յեվ քայլ առ քայլ հաղթահարելով դժվարությունները, ջախջախիչ հարվածներ հասցնելով կուլակային վնասարարությանը և փաստացի հաղթանակների շնորհիվ մերկացնելով աջ ոպորտունիստների վոչոչացման ու յերկչոտ դրպարտությունը, «Գիգանտն» առաջ եր գնում բոլշեվիկյան անպարապուրդ քայլերով և նորանոր հաղթանակներ տանելով։

Անբերրի ու ամայի տափաստանից «Գիգանտն» յերկու տարվա ընթացքում ստացավ միլիոն ու կես ցենտներ ընտիր տեսակի հացահատիկ յեվ դրա հետ միասին գյուղական չքավորներից յեվ բատրակներից գուրս յեկան հազարավոր լավ զոդված պրոլետարներ։

Այս պրոլետարները կոփվել են կուլակի և նրա ոպորտունիստ գործակալների դեմ մղված դասակարգային կռիվներում։ Կուսակցական անդրդվելի ղեկավարությունը, տնտեսական-քաղաքական խնդիրների շուրջը կազմակերպված խորհտնտեսային պրոլետարիատը, մասսաների աշխատանքային հսկայական վերելքը, լայնորեն ծավալված սոցիալիստական մրցակցությունն ու հարվածայնությունը և վերջապես ղեկավար մարմնի հեղափոխական կայունությունն ապահովեցին, գիգանտցիներին նրանց սովխոզի հաջող բարգավաճումը, ինչպես նաև նրանց հաղթանակը բոլոր խոչընդոտներին ու դժվարություններին։

Սոցիալիստական մրցակցությունն աշխատանքի մեթոդ դարձավ յուրաքանչյուր հողամասի, բրիգադի, հերթափոխության և ցեխի համար։ Գործնական աշխատանքում սոցիալիստական մրցակցությունը նպաստում եր աշխատանքի արտադրողականության բարձրացմանը։ «Հարվածային» խոսքը պատվանուն դարձավ բանվորի համար։

«Գիգանտը» հացահատիկային անդրանիկ խորհտնտեսությունն է։ Նա մեծամեծ նվաճումների յե հասել։ Այդ մասին ամենից լավ վկայում են թվերն ու փաստերը։ 1928 թվականը «Գիգանտի» ծնված տարեթիվն է։ Այն հողամասում, ուր ամբողջ տարածության միայն 9,2 տոկոսն եր վարված, իսկ 90,8 տոկոս ձգված եր վորպես խամ տա-

փաստան, «Գիգանտը» ցանեց 59868 հեկտար։ Վոչ վոք չի ասում, վոր այդ հեշտ բան եր։ Դա սկիզբն եր, իսկ սկիզբ ասածդ միշտ էլ դժվար է լինում։ Գիգանտացիները մինչև ժամ չեն մոռանա իրենց առաջին ցանքը։ Այն տարին յեղանակը շատ եր խստաշունչ։ Բքաբեր հողմեր։ Սառնամանիք։ Տափաստանի խամ հողը նույնպես ըմբոստ է և անզուսպ, ինչպես և խամ ձին։ Գյուղական տափաստանների այդ Պերեկոպը նվաճողները յեղան 645 հատ տրակտորներ և տրակտորավարներ։ Պերեկոպը վերցրին նրանք։

Առաջին իսկ տարին «Գիգանտը» տվեց մեկ ու կես միլիոն շահույթ։ Մեկ ցենտներ հացահատիկի ինքնարժեքը 5.02 կ. հասավ։ Նրման ինքնարժեք այդ տարին չի ունեցել և վոչ մի գյուղական տնտեսություն, վոր մի հեկտարից 5—6 ցենտներ բերք և ստացած, մինչդեռ «Գիգանտի» մեկ հեկտարից ստացածը 10 ցենտներ է։

1930 թվին «Գիգանտը» ցանեց 112045 հեկտար, բերքահավաքը կատարեց լիակատար մեքենայացմամբ, հավաքեց 800 հազար ցենտներ ապրանքային հացահատիկ, մեկ ցենտների ինքնարժեքը, վոր 1929 թ. 5.02 կ. եր, իջեցրեց 3.66 կոպեկի, ոգնություն ցույց տվեց շրջակա կոլտնտեսություններին, վորոնց ցանքի տարածությունը 77 հազար հեկտարի յեր հասնում, հանձնեց պետության 97 հազար տոննա ընտիր հացահատիկ՝ 5.320 հազար ռուբ. արժողությամբ. հարդի իրացումից նա ստացավ 450.000 ռ.։ Այսպես, ուրեմն, «Գիգանտը» 1930 թվին ստացավ 5.770 հազար յեկամուտ, ծախս ունեցավ 4,553 հազար ռուբ., հետևաբար զուտ հասույթ կլինի 1.217 հազար ռուբլի։

1931 թվի գարնանը ցանված է 113 հազար հեկտար. դրանից 4 հազար—յեգիպտացորեն, վոր «Գիգանտի» հողերում առաջին անգամն է ցանվում։ Ամառը խորհնտեսությունը բերք պիտի ստանա 181 հազար հեկտարից։ Նշված է ստանալ ընդամենը 1.861.712 ցենտներ բերք՝ անցած տարվա 947 հազարի դիմաց, վորից 1.613.700 ցենտներ—ապրանքային հացահատիկ։ Հասկային մշակույթների բերքատվությունն այս տարի հասնելու յե 10,98 ցենտների 1 հեկտարից։ Ցենտների ինքնարժեքը 1931 թվին իջնելու յե 3.15 կոպեկի։

«Գիգանտի» սոցիալիստական հաղթանակները վկայող այս չոր ու ցամաք թվերը դալիս են համոզելու, թե «ջուրն ընկան և հոդս ցնդեցին դիտության առարկումներն այն մասին, թե անկարելի յե և աննպատակահարմար 50—100 հազար հեկտար տարածություն ունեցող հացահատիկային խոշոր ֆաբրիկաների կազմակերպումը» (Ստալին)։

Յեվ այսոր մենք, բոլշևիկներս, բաց ճակատով կարող ենք ասել, վոր միայն բանվոր դասակարգը՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ՝ ընդունակ է նմանորինակ տեմպերով յեվ ամենակարճ ժամանակում իր հետեվը բողնել վո՛չ միայն իր պապենական հետամնացությունն, այլ յեվ տեխնիկա-տնտեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրների գյուղատնտեսությունը։

Իր գոյության հենց առաջին տարվանից «Գիգանտն» անցավ 20 հազար հեկտար հող ունեցող Ամերիկացի Ֆերմեր Կլմպբելլի մեքենայացած խոշորագույն տնտեսությունից։ Իդեպ կարող, ենք ասել, վոր «համաշխարհային ուժ ներկայացնող Կլմպբելլի» ունեցածի չափ հողաբաժինը մեր «Գիգանտում» հաջողությամբ կառավարում է յերիտասարդ մի բոլշևիկ, 12-րդ հողամասի վարիչ՝ կոմյերիտական Տիմաֆեյ Կովալը։

Յեվ առանց քաշվելու կարող ենք ասել, վոր կոմյերիտական Կովալն ավելի լավ է կառավարում իր հողամասը, քան հինավուրց պրակտիկ Կլմպբելլը։

Այս մասին վկայում են աշնանացանի հաղթանակների թվական տվյալները։ Այդ թվերը խոսում են Կլմպբելլի դեմ, վորովհետև նա յերբեք չի ունեցել այնպիսի խոշոր հաղթանակներ, վորպիսին ունի կոմյերիտ ընկ. Կովալի կառավարած 12-րդ հողամասը։

Միստեր Կլմպբելլի կալկուլյատորները դեռ այնպիսի թվերի չեն հասել, վորպիսիներն արդեն հաղթահարել է 12-րդ հողամասը։

Ահավասիկ այդ հաղթանակները։

Այս հողամասն իր ցանքն ավարտել է յոթ որում։ Պարապուրդներն իջեցված են 27 տոկոսի (տրակտորներն հարդարելու և շարքացանները լծելու պարապուրդի նորմալ տոկոսն է 25. 12-րդ հողամասի տրակտորները, գարնանացանի ժամանակ, ակոսում աշխատում եյին 82 տոկոս, այսինքն ամեն տեղ ընդունված ցուցանիշներից 12 տոկոսով ավելի։ Գարնանացանի ընթացքում տրակտորների կոտրվելու դեպքեր հողամասում չեն յեղած։ Գարնանացանի 7 որվա ընթացքում հողամասը մոտ 6 հազար կիլոգրամ վառելանյութ է տնտեսել։ Մի հեկտարի հաշվով ծախսվում եր միայն 2,6 կիլոգրամ, նորման 3,6 կիլոգրամ է։ Ցանքը կատարվում եր դիշեր-ցերեկ։

Ահավասիկ կոմյերիs Կովալի նարsար դեկավարության արsադրական արդյունքները։ Այս հողամասը 15 հազար հեկտար հունձ պատրաստեց։ Յեվ մենք հարց ենք տալիս—առաջավոր մի յերկրում, վորպիսին Ամերիկան է, գյուղատնտեսական մեքենայացման տեսակետից այսպիսի փայլուն հաջողություն ունեցել է արդյոք դեթ մեկ ֆերմերական տնտեսություն։

Վո՛չ, և չեր էլ կարող ունենալ։

Բոլշևիկյան տեմպերի գաղտնիքն ինչումն է։

Նրանում, վոր սոցիալիստական աշխատանքի մարդիկ սովորեցին ռուսական հեղափոխական թափը նմանորեն զուգորդել ամերիկյան գործիմացության հետ։

«Գիգանտի» և մանավանդ նրա առաջավոր՝ 8-րդ և 12-րդ հոդվածների, յերիտասարդ բոլշևիկների հեղափոխական այս թափը կայանում է նրանում, վոր այստեղ ամենքն եվ ընդգրկված են սոցիալիստական մրցակցությամբ և ամեն մեկն եվ հասկանում է, թե պատմության մեջ առաջին անգամն է, վոր նա իր համար է աշխատում, և այդ է պատճառը, վոr «աշխատանքը պատվի ու փառքի, արիության ու հերոսության խնդիր է» (Ստալին)։

Ամերիկյան գործիմացությունը կայանում է նրանում, վոր յուրաքանչյուր հարվածային տիրապետում է բարդ «Կատեր-Պիլլերի» տեխնիկային և հասկացողություն ունի ագրոտեխնիկայի մասին։ Հաղթանակի ուժը կայանում է նրանում, վոր հարվածայինները սովորել են տեխնիկային յեվ գիտությանը տիրապետելու պայքարը զուգորդել գործնական աշխատանքի հետ։

Գարնանը հաղթանակներ տարավ «Գիգանտը»։ Տասն որում ցանվեց և տափանվեց 113 հաղար հեկտար,—տեմպեր, վոր չի տեսել և՛ ամերիկացին։

«Գիգանտի» հաջողությունները կատաղեցնում են բուրժուական գիտնականներին, ինչպես և բովանդակ բուրժուական աշխարհին—խոշոր սոցիալիստական գյուղատնտեսության տապալման ու կործանման այդ մարգարեներին։ Նրանք չեն կարող խոստովանել մեր ունեցած հաջողությունները, վորովհետև դա կնշանակեր խոստովանել նաև սոցիալիստական սիստեմի կապիտալիստականի հանդեպ ունեցած առավելությունները։

Ամեն որ «Գիգանտ» են գալիս պատվիրակություններ և անհատատարբերկրացիներ՝ սեփական աչքերով տեսնելու աշխարհիս ամենամեծ հացի ֆաբրիկան։ Անցած տարի «Գիգանտ» յեկավ ամերիկացի մասնագետ միստեր Նիկկեր-Բոկերը։

Ամերիկա վերադառնալուց հետո, «Նյու-Յորկ Պոստ» յերեկոյան թերթում նա տպագրեց սահոդ և անաչառ չարախոսությամբ լի մի հոդված։ Ամերիկացի ադ «խելոքը» փորձում եր ապացուցել, վոր «Գիգանտը» ֆլաս է անում։ «Գիգանտի» բանվորները թվերի լեզվով հերքեցին այդ պարոնի սահոդ կալկուլացիյան և վերը հիշատակված թվերով ապացուցեցին, թե սոցիալիստական «Գիգանտը» ահագին շահույթ է բերում պետությանը։

Սակայն խորհրդատնտեսությունները միայն հացահատիկային ռեսուրսների աղբյուրներ չեն. նրանք միաժամանակ համատարած կոլեկտիվացման բոլշևիկյան ուղեցույցներ են հանդիսանում։

«Հանձին խորհրդատնտեսների ստեղծվում է գյուղատնտեսական արտադրության աշխարհումս չտեսնված մի տիպար։ ԽՍՀՄ-ն իսկական դրոշակակիրն է, ինչպես և գյուղատնտեսության զարգացման նոր ուղիների կրողը վոչ թե նրա համար, վոր կապիտալիստականի փոխարեն ծնունդ է առնում խոշոր սոցիալիստական գյուղատնտեսությունը, վորպես արտադրության գերագույն ձևը, այլև նրա համար, վոր խորհրդատնտներն աշխատանքի կազմակերպման ավելի նպատակահարմար ձևն են կազմում գյուղատնտեսության մեջ» (Խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումներից)։

«ԳԻԳԱՆՏԸ»— ԿՈԼՏՆՏՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑՆ Է

Սոցիալիստական հնդամյակի առաջին տարիներն ապացուցին, վոր միայն խոշոր, սոցիալիստական տիպի տնտեսությունը կարող է տալ պետությանն եժանագին և բարձր տեսակի հացահատիկ։ Խորհրդատնտների և կոլտնտների ոժանդակությամբ հաջողվեց լուծարքի յենթարկել հացահատիկային դժվարությունները։

«Գիգանտը», ինչպես և հարյուրավոր այլ հացահատիկային սովխոզներ, հանդիսանում է վոչ միայն հաց ժամանակարարող,—նա միաժամանակ գյուղատնտեսության մեքենայացրած խոշոր բազան է և առաջատար ուժը թե գյուղատնտեսության կոլեկտիվացման և թե հին գյուղի նոր ու սոցիալիստական ձևի վերափոխման գործում։ Կուսակցության XVI համագումարում ընկեր Ստալինը այսպես գնահատեց խորհրդատնտների կատարելիք դերը կոլտնտների շինարարության գործում. «սխալ կլինի կարծել, թե մեր հացահատիկային խորհրդատնտեսությունները լոկ հացի ռեսուրսի աղբյուրներ են։ Իրականում խորհրդատներն իրենց նոր տեխնիկայով, շրջաբնակ գյուղացիներին մատուցած ոգնությամբ և իրենց աննախընթաց թափով հանդիսացան այն առաջատար ուժը, վորը հեշտացրեց գյուղական մասսաների շրջադարձը և առաջ մղեց նրանց դեպի կոլեկտիվացման ուղին»։

Այս խոսքերը լիապես արդարանում են «Գիգանտ» սովխոզի կյանքով և աշխատանքով։

Շրջակա կոլխոզներին ցույց տրված ոգնությունը, «Գիգանտի» արշավը դեպի կոլտնտների դաշտերը, արտադրական և քաղաքական ոգնությունը չքավոր—միջակ գյուղացիությանը—խոշորագույն դեր կատարեցին կոլտնտների ամրացման և անհատական չքավոր—միջակ նոր տնտեսությունները կոլխոզների մեջ ներգրավելու գործում։

«Գիգանտ» խորհրդատնտեսությունը գործնականապես իրացրեց Վլադիմիր Իլյիչի այն միտքը, թե «խորհրդային տնտեսությունը նպատակ ունի ատիճանաբար ընտելացնել գյուղական բնակչությանն ինքնուրույն կերպով մշակել նոր կարգը, հանրային աշխատանքի

կարդը, յերբ այլևս չի կարող սնունդ առնել հարստականների մի խմբակ՝ չքավոր մասսային ճնշելու համար»։

Ոգնելով կոլխոզների ամրացմանը և աշխատանք տանելով չքավորներին ու միջակներին կոլխոզներում ներգրավելու համար, «Գիգանտը» նպաստում եր համատարած կոլեկտիվացման իրականացմանը և այդ պայմաններում՝ կուլակության, վորպես դասակարգի վերացմանը։

Խորհտնտների հիմնական խնդիրներից մեկն է՝ ցուցադրական ձեռնարկություն լինել սոցիալիստական հողագործության ոկատում։ Այդ խնդիրը դրված է նաև «Գիգանտի» առաջ։ Յեվ յեթե ներկայումս միջակը կոլխոզային ճամբան, յեթե սոցիալիզմը հասել է նույն իսկ հետ ընկած փոքրիկ գյուղերը, այս բանում նշանավոր դեր են կատարել հացահատիկային խոշոր տնտեսությունները։

1931 թվին «Գիգանտ» խորհտնտը արտադրական մեծ ոգնություն հասցրեց շրջակա կոլտնտներին։ Ոգնություն ցույց տրվեց 80 հատ կոլխոզի՝ միլիոն ռուբլուց ավելի գումարի։ Բանվորական հարվածային բրիգադների նախաձեռնությամբ կազմակերպվեց ութ կոլխոզ, վորոնք ընդգրկում են յերեք հազար տնտեսություն։ 1931 թ. կոլխոզներին ցույց տրված ոգնությունն զգալիորեն ավելանում է։ Այս տարի սովխոզը տնտեսավարական ոգնություն պիտի ցույց տա կոլխոզներին 105 հազար հեկտար տարածության վրա։ Այս տարվա գարնանը սովխոզը ցանել, տափանել և վարել է մոտ 30 հազար հեկտար։ Սպասարկվում է ընդամենը 41 կոլխոզ։

«Գիգանտի» բանվորները շատ կոլխոզների ոգնեցին՝ կանոնավոր կերպով աշխատանքը կազմակերպելու, գործավարձայինը կիրառելու, սոցիալիստական մրցումը և հարվածայնությունը ծավալելու և արտադրական խորհրդակցությունների աշխատանքը կազմակերպելու գործում։

Ահագին փորձ և ձեռք բերել «Գիգանտի» կոմյերիտմիությունը՝ կոլտնտեսականների ու անհատականների միջև աշխատանք տանելու ուղղությամբ։ Կոմյերիտական կազմակերպությունը հանդիսանում է լավագույն հաղորդիչը լենինյան այն ավանդների, թե «կոմյերիտմիությունը պետք է լինի հարվածային բրիգադ, վորն ամեն տեսակ աշխատանքում էլ իր ոգնությունն է ցույց տալիս, իր ինիցիատիվը, իր նախաձեռնությունն է հանդես բերում»։

Դեռ ցանքսը չսկսված, խորհտնտի կոմսոմոլն իր ունեցած փորձը կոլխոզները փոխադրելու կազմակերպության նախաձեռնարկն հանդիսացավ։ Տեղական «Գիգանտ» թերթում տպագրված իրենց կոչի մեջ, վոր ուղղված եր խորհրդային բոլոր բանվորներին, կոմյերիտականները գրում եյին.—

«Մեր կարմրադրոշային սովխոզը հսկայական փորձ ե՞ձեռք բերել աշխատանքի կազմակերպման, սոցմրցակցության, հարվածայնության, աշխատանքի հաշվառման և գործավարձայինի կիրառման գործում։ Հացահատիկային խոշորագույն մեքենայացրած ֆաբրիկայի այդ փորձը պետք է յուրաքանչյուր կոլխոզի սեղանի դիրքը լինի»։

Այս կոչն արձագանք գտավ ամբողջ սովխոզում։ Հողամասերը կոմյերիա բջիջների ղեկավարությամբ՝ իրենց հարվածային հայտարարեցին՝ խորհտնտեսության սոցիալիստական փորձը կոլտնտեսությունները փոխադրելու գործում, այսինքն ցույց տալու, թե ով ավելի կփոխադրի «Գիգանտի» փորձը։

Հողամասերի միջև ծավալվեց սոցմրցումը։ փորձի փոխադրումը ղեկավարելու համար կոմիտեին կից ոպերատիվ շտաբ կազմվեց։

Գործի յե անցած նախաձեռնությունը։ Ահա գործնական քայլերի մասին տրված ռապորտները.—

«Հացահատիկային խորհտնտ «Գիգանտի» դիրեկտորի հրամանը։

«Գիգանտ» սովխոզի կուտակած փորձի սոցիալիստական փոխադրումը կոլխոզներում կազմակերպելու մասին 7-րդ հողամասի կոմերիտական բջջի առաջադրած գաղափարը հանդիսանում և քաղաքական մեծ կարևորություն ունեցող մի գործ։ Յերկու տարի հարվածային աշխատանք տանելով, մենք ձեռք բերինք սոցիալիստական հսկայական փորձ՝ տնտեսությունը և հարվածային աշխատանքը կազմակերպելու գործում։

Յես գործով աջակցում եմ 7-րդ հողամասի կոմյերիտական բջջի նախաձեռնությանը։ «Գիգանտի» աշխատանքի մասին հաշվետու զեկուցումով մասնագետների չորս հարվածային բրիգադ և լավագույն հարվածայիններ եմ ուղարկում կոլխոզները՝ պլանները կազմելու գործին ոգնելու համար։

«Գիգանտի» դիրեկտոր Բոգոմոլկին»։

Ռապորտ և ներկայացնում պրոֆմիությունը.—

«Մենք մասնակցում ենք սոցիալիստական փորձ կազմակերպելու և նույնը շրջակա կոլտնտեսությունները փոխադրելու մասին կոմսոմոլի հայտարարած արշավին։ Մենք ուղարկում ենք շեֆարկյալ Լոպանկա («Սելմաշտրոյ» կոլխոզը) և Միջին Յագորլեցկի («Սոցիալիզմի ուղին» կոլխոզը) գյուղերը յերկու բրիգադ՝ խորհտնտեսության արտադրական փորձը կոլտնտեսությունները փոխադրելու համար։

ԳՏԲ «Գիգանտ» սովխոզի Ռայկոմի նախագահ Ի Բուգայեվ»։

Ուղարկված բրիգադներն ահագին աշխատանք տարան կոլխոզներում, բայց այդ մասին կպատմենք հետո. հիմա ցույց տանք, թե ինչ է արված կոլխոզների տնտեսությունն ամրացնելու ուղղությամբ։

Կոմյերիտական բջջի արծարծած գաղափարն արձագանք գտավ ամբողջ խորհտնտում, իսկ հետո—նաև Հյուսիսային Կովկասի բոլոր խորհտնտներում։ Յեվ կենսալրծվում է գաղափարը։

Փորձի սոցիալիստական փոխադրման ինիցիատորները—7-րդ հողամասի կոմյերիտականները—կոլխոզային դաշտերում կատարելիք աշխատանքի գործնական ծրագիր առաջարկեցին։

«Աշխատանքը կոլխոզներում մեզանից պահանջում է ավելի ևս լարվածություն և ջանադրություն. ցանքսի տեմպերը վոչ մի դեպքում չպետք է թուլացվեն։

Մենք պարտավոր ենք կոլխոզներում ցանքսը ժամանակից մի որ առաջ ավարտել։ Շարունակելով մեր հարվածային աշխատանքի նույն տեմպերը, մենք մեզ համար նորմա պետք է համարենք նրվաճումները մեր լավագույն հարվածային կոմյերիտական Յարովոյի, վորն 8 ժամվա մեջ 52,8 հեկտար է ցանել։ Այդ նորմը մենք մտցնում ենք հողամասի աշխատանքային պլանի մեջ։

Կոլխոզային դաշտերում մենք պետք է ձեռք բերենք ավելի բարձր ցուցիչներ թե վառելանյութը տնտեսելու, թե պարապուրդները պակասացնելու և թե բերքատվությունը բարձրացնելու ասպարիզում։

Այստեղ ևս մենք պետք է ամրացնենք մեր լավագույն հարվածայինների նվաճումները։ Ցանքսի լավագույն անցկացման համար մենք կոլխոզներում կազմակերպում ենք 518-ի և 1040-ի անվան հարվածային նոր բրիգադներ։

Սոցմրցմամբ և հարվածայնությամբ մենք կընդգրկենք բոլոր կոլտնտեսականներին։

Այն գյուղերում և կոլտնտներում, վորոնց մենք ոգնություն ենք ցույց տալիս, մենատնտեսներից դեռ վոչ ամենքն են ընդգրկված կոլտնտներում։ Ահա ինչու համար մենք, բանվորներս, խնդիր պետք է դնենք մեր առջև, վոր գարնանացանի կամպանիայի ընթացքում 100 տոկոսով իրականացնենք մենատնտեսների կոլեկտիվացումը։ Մենք, 7-րդ հողամասի կոմյերիտականներս, մեր միջից ջոկում ենք տասներկու լավագույն հարվածայիններ կոլեկտիվացման աշխատանքի համար։

Մեր բրիգադը զրույցներ պետք է անցկացնի անհատականների հետ կոլտնտեսական շինարարության մասին, «Գիգանտ» սովխոզի աշխատանքի մասին, խոշոր տնտեսության մասին, ինչպես նաև համատարած կոլեկտիվացման իրականացման և կուլակության՝ վորպես դասակարգի վերացման խնդիրների մասին,

Կոլտնտեսությունների հետագա զարգացման և ամրացման նպատակով «Գիգանտի» բանվորներն, ինչ գնով էլ լինի, պետք է ապահովեն կոլտնտների արտադրական ծրագրերի կատարումը։ Մենք, 7-րդ հողամասի կոմյերիտականներս, մեր վրա յենք վերցնում պատասխանատվությունն այն մասին, վոր մեր հողամասին ամրացված կոլտնտների արտադրական ծրագրերը կկատարվեն։

Ակտիվորեն կմասնակցենք կոլտնտեսությունների պլանի հորինման գործին, խորհտնտեսությունների աշխատանքի սոցիալիստական մեթոդների փոխադրումով կանցկացնենք կոլտնտեսականների հետ միասին արտադրական խորհրդակցություններ, կկազմակերպենք աշխատանքի կանոնավոր հաշվառում, կոլտնտեսություններում կըմբռնցնենք դրծավարձային սիստեմը, կոլտնտեսային բրիգադները կվոխանցնենք տնտեսաշվարկի։

Այս աշխատանքն անցկացնելու համար մենք կազմակերպում ենք պլանային—ոպերատիվ խմբեր սովխոզի բանվորներից և կոլտնտեսականներից, ջոկում ենք խմբեր՝ կոլխոզներում աշխատությունը կազմակերպելու, մրցակցությունը հաշվառելու համար և այլն։

Այն կոլտնտներում, վորոնց դաշտերում աշխատելու յենք, մենք աշխատանք կծավալենք տեխնիկային տիրապետելու ուղղությամբ։ Կոլտնտեսականների համար կկազմակերպենք խմբակներ՝ տրակտորները և գյուղատնտեսական մեքենաներն ուսումնասիրելու, ինչպես և կոլտնտներում աշխատանքը կազմակերպելու համար և այլն։Մենք մասնագետների ուժերով կկազմակերպենք կարճատեվ կուրսեր՝ խմբավարների յեվ բրիգադիրների համար։

Բերքատվության բարձրացման և ինքնարժեքի իջեցման վերաբերյալ խնդիրների իրագործման համար, վորոնք դրված են կոլտընտների առջև, մենք կոգնենք ռացիոնալիզատորական փորձի բրիգադներ կազմակերպել կոլտնտներում։ Մենք կկազմակերպենք ռացիոնալացման և գյուտարարության հատուկ բրիգադներ, կստեղծենք կոլտնտներում ռացիոնալիզատորական խմբակներ։

Սոցիալիստական մրցման յերկրորդ տարելիցի առթիվ մենք պարտավորվում ենք բոլոր կոլտնտեսականներին անհատական պայմանագրերով ընդգրկել սոցիալիստական մրցման մեջ։ Հետ մնացողներին բուքսիրի կվերցնեն մեր լավագույն հարվածային բրիգադները և իրենց աշխատանքի փորձը նրանց կվոխադրեն։

Մենք նմանապես կարգի կբերենք մրցման և հարվածայնության հաշվառումը, ինչպես և ձեռք կբերենք լավագույն կոլտնտեսականների պարգևատրումը։ Հաշվի առնելով կուլտ-մասսայական աշխատանքի քաղաքական մեծ նշանակությունը գարնանացանի կատարման գործում, մենք կուլտ-մասսայական աշխատանքը կոլտնտներում պատշաճ բարձրության կհասցնենք։

Մենք, 7-րդ հողամասի կոմյերիտականներս, պարտավորվում ենք վերացնել անգրագիտությունը մեր հողամասին ամրացված կոլտնտեսություններում յեվ կազմակերպում ենք խմբակներ խորհուրդների 6-րդ համագումարի վճիռները մշակելու համար։

Մեր թղթակիցները և պատի թերթի խմբկոլը բուքսիրի յեն վերցնում գյուղթղթակիցներին և կոլտնտի բոլոր բրիգադներում պարբերաբար լույս պիտի ընծայեն բազմատիրաժներ ու պատի թերթեր։

Մենք վստահ ենք, որ խորհտնտի բանվորներն ու մասնագետները և բոլոր կոմյերիտականներն արձագանք կտան մեր այս կոչին ու մեզ հետ միասին մի շարք պարտավորություններ կվերցնեն՝ յերկրորդ բոլշեվիկյան գարունը կոլտնտներում հաջողությամբ անցկացնելու համար, որով և նպաստած կլինեն համատարած կոլեկտիվացման վերջավորմանը և կուլակության՝ որպես դասակարգի՝ վերացմանը։

7-րդ հողամասի բանվորների հանձնարարությամբ կոմյերիտականներ՝ Ցարովայ Իվաշչենկո, Իսկրա, Տոլստյակ, Պերեվերզև, Բագին, Պոպով, Խոլոդենկո, Վորոբյով, Կիրնոս, Խորունժիյ, Կուպրիյ յեվ Զուբ»

Կարողացավ արդյոք կոմյերիտ բջիջը գլուխ բերել այս խոշոր խնդիրները։ Կատարեցին արդյոք կոմյերիտականները սոցիալիստական պարտավորությունները։

Այս մասին վկայում են իրենք՝ կոլտնտեսականները։ Ահա ինչ են գրում մի խումբ կոլտնտեսականներ, որոնք աշխատել են խորհտնտեսային դաշտերում։

«Զուր չանցավ մեզ համար աշխատանքը խորհտնտեսություններում։ Մենք իմացանք, թե ինչպես ե կազմակերպված աշխատանքը խորհտնտում. մենք սովորեցինք, թե ինչպես պետք ե կառավարել մեքենան և նրան կցված գործիքը. մենք սովորեցինք ուղիղ կազմակերպել աշխատանքը, դասավորել ուժերը, կարգի բերել արտադրական խորհրդակցությունների աշխատանքը, կազմակերպել սոցիալիստական մրցումը։

Մեզանից մի քանիսը սովորեցին տրակտորը կառավարել, իրենց անդրագիտությունը և կիսադրագիտությունը վերացնել։ Յերբ վերադառնանք մեր կոլտնտեսությունները, մենք մեր բոլոր ձեռք բերածը, ինչպես նաև այն ամենն, ինչ որ սովորեցինք «Գիգանտում», կգործադրենք մեր դաշտերում։

Մենք այնպես կանենք, որ մեր կոլտնտեսության ամբողջ աշխատանքը դրծավարձային սիստեմի վերածվի։ Դրանով մենք ձեռք բերած կլինենք այն, որ մեր բոլոր կոլտնտեսություններն էլ կաշխատեն հարվածայնորեն, ոչ վոք ծուլություն չի անի։ Մեր կոլտնտեսականների մեջ դեռ կան այնպիսիները, որոնք կոլտընտի գույքի հետ վարվում են ոչ այնպես, ինչպես կվարվեյին իրենց սեփական գույքի հետ։ Այս տեսակ կոլտնտեսականներին մենք

դատի կյենթարկենք, ինչպես որ 7-րդ հողամասի բանվորները դատի յենթարկեցին տրակտորներն ու կցված գործիքները ջարդողներին։

Խորհտնտում աշխատելիս, մենք հաճախում եյինք տրակտորավարների խմբակներն, ինչպես և կոմյերիտականների կազմակերպած անդրագիտության և կիսագրագիտության վերացման խմբակները։ Այսորինակ խմբակները մենք համարում ենք շատ պիտանի և անհրաժեշտ, այնպես որ նման խմբակներ մենք կկազմակերպենք և մեր կոլտնտներում։

Մենք շատ հավանեցինք, որ 7-րդ հողամասի բանվորներն ամեն որ արտադրական խորհրդակցություններ են անցկացնում և՝ քննարկելով իրենց աշխատանքի թերությունները՝ անմիջապես վերացնում են նրանց։ Արտադրական խորհրդակցություններում ձեռք բերված այս փորձն ել մենք մեր կոլտնտեսությունը կփոխադրենք։

Ցանքսը կոլտնտում մենք կանցկացնենք այնպես հարվածայնորեն, ինչպես այդ անցկացրին «Գիգանտի» բանվորները։ Մեր կոլտնտեսականներից մենք կկազմակերպենք հարվածային բրիգադներ ի պատիվ արդյունաբերության նոր գործարկվող 518 գիգանտների և 1040 նոր բացվող ՄՏԿ—ների։

7-րդ հողամասում աշխատող կոլտնտեսականներ՝
Կրիվենկո, Կովալենկո, Մորեխա, Գուիենեն, Կոպնից Գոնչարենկո, Դերնուենսկիյ, Միրոշնիչենկո»։

Խորհտնտների բանվորների ուժերով կոլտնտներում կազմակերպվեց 48 արտադրական խորհրդակցություն։ Շեֆարկյալ «Սելմաշտրոյ» կոլտնտում ցանքսի ժամանակ «Գիգանտի» որինակով կազմակերպվեցին արտադրական խորհրդակցություններ յուրաքանչյուր հողամասում և դյուղատնտեսության ամեն մի ճյուղում։ Արտադրական խորհրդակցությունների դաշտավարության մեջ կիրառված կազմակերպման փորձը փոխադրվեց անասնապահության ճյուղը։ «Սելմաշտրոյ» կոլտնտում կազմակերպվեցին արտադրական խորհրդակցություններ՝ կաթնատնտեսության, ճագարապահության և ձիապահության ճյուղերում։ Արտադրական այս խորհրդակցությունները իրենց աշխատանքը կառուցին «Գիգանտի» հողամասային արտադրական խորհրդակցությունների սկզբունքների համաձայն, տալով նրանց լոկ անասնապահական թեքում։

Անասնապահական ճյուղում արտադրական խորհրդակցությունների կազմակերպման փորձը լիապես արդարացրեց իրեն։ Ներկայումս բարելավված և յեղջյուրավոր կենդանիների ու ձիերի սպասարկումը։ Յերբ կաթնատու կենդանիներն սկսեցին ավելի լավ խնամք տանել, կովերն ել սկսեցին ավելի կաթ տալ։

«Սելմաշտարոյ» կոլխոզն իր աշխատանքները կառուցեց այն սկզբունքներով, որոնցով առաջնորդվում էր «Գիգանտն» իր արտադրական խորհրդակցություններում։ Ամեն մի հողամասում և յուրաքանչյուր ճյուղում (բանջարանոցապահություն, անասնապահություն) արտադրական խորհրդակցություններ են կազմակերպված։ Վարչության անդամներից մեկը ջոկված է իբրեվ արտադրական խորհրդակցությունների հատուկ կազմակերպիչ, որը ղեկավարում է այդ աշխատանքը, բնդհանրացնում է հողամասերի յեվ տնտեսության ճյուղերի արտադրական փորձը, իսկ հետո, կոլտնտի արտադրական կոնֆերանսում լավագույն փորձերը փոխադրվում են դեպի բոլոր հողամասերը։ «Գիգանտի» ունեցած փորձի ոգտագործումը հնարավորություն է տալիս կոլտնտեսական մասսաներին մոտեցնել կոլտնտի կյանքին, որպեսզի նրանք ակտիվ մասնակցություն հանդես բերեն։

«Գիգանտի» խորհտնտի հարվածայինները, որոնք աշխատել եյին «Սոցիալիզմի ուղին» կոլխոզում, կարողացան կոլտնտեսության յուրաքանչյուր հողամասում արտադրական խորհրդակցություններ կազմակերպել։ Արտադրական խորհրդակցությունների աշխատանքի առաջին պլանները կազմեցին պլանային-ոպերատիվ խմբերի հարվածայինները և այնտեղ, կոլխոզի հողամասերում, կազմվեցին պլանային ոպերատիվ խմբեր, որոնք ոգնում եյին հողամասի արտադրական պլանները կազմելուն յեվ աջակցում եյին վարչությանը կոլտնտի տեսության պլանավորման գործում։

«Գիգանտի» հարվածայիններն արտադրական խորհրդակցությունների աշխատանքի մասին հաշիվ եյին ներկայացնում կոլտնտականներին և ցանքսի ընթացքում արտադրական կոնֆերանսներ եյին անցկացնում կոլտնտի հողամասերում՝ կուտակված փորձը նրանց փոխանցելու համար։ Ցուրաքանչյուր «Գիգանտի» փորձը, կոլտնտեսության արտադրական խորհրդակցությունները կարողացան ոգտագործել այդ փորձն իրենց կոլտնտեսության մեջ։

Ցուրաքանչյուր կոլտնտային բրիգադում կազմակերպված եյին սոցիալիստական մրցման և հարվածայնության հաշվառման տախտակներ, կարմիր և սև. ամեն որ կախ եյին արվում յուրաքանչյուր բրիգադի աշխատանքի արտադրական ցուցիչները։ Այս ամենը նպաստում էր սոցիալիստական մրցման ծավալմանը, խթանում էր հետամնացներին և խրախուսում էր առաջավորներին։

«Սոցիալիզմի ուղին» կոլխոզում, գարնանացանի ընթացքում, 3-րդ հողամասը կարողացավ այնպես պատրաստվել աշնանացանին, որ ամեն որ գերակատարում էր իր պլանը, այնինչ 1-ին հողամասը ընդհակառակը, միշտ հետ էր մնում։ 3-րդ հողամասի արտադրական խորհրդակցությունն անցկացրեց յերկու հողամասերի միացյալ հա-

վաք, հաղորդեց 3-րդ հողամասի արտադրության կազմակերպման ապարեզում ձեռք բերված փորձը և բանուժի ու քաշուժի դասավորման գործում իր ունեցած փորձը նրանց փոխադրեց։ Հետո ստեղծվեցին յուղիչների, քշողների և դուբանավորների հատուկ խմբեր. բրիգադների կազմի ընտրությունն ավելի խնամքով կատարվեց։ 3-րդ հողամասն իր փորձված արտադրողներին ոգնության ուղարկեց 1-ին հողամասը, բուքսիրի վերցնելով նրանց։ Սրա հետևանքն այն յեղավ, որ 1-ին հողամասի «Սոցիալիզմի ուղին» կոլխոզը, որ նշանավոր չափով հետ էր մնացել, բարձրացրեց աշխատանքի արտադրողականությունը և հինգ որից հետո կարողացավ լրացնել իր բացերը ու կանոնավորապես սկսեց իրագործել աշնանացանի իր ծրագիրը։ Սոցիալիստական մրցման տեսակետից այս հողամասը յերկրորդ տեղը բռնեց աշնանացանում։ Այս բոլորը կազմակերպվեց «Գիգանտ» խորհտնտի հարվածայինների ոգնությամբ։

Աշխատելով կոլտնտեսային դաշտերում, 8-րդ կոմյերիտական հողամասն ոգնեց կոլեկտիվ տնտեսություն կազմելու, մասնակցեց արտադրական պլանների մշակման գործին՝ կոլտնտեսական աշխատանքի կազմակերպողների հատուկ խումբ ջոկելով իր մեջ։ Կոմյերիտականներն ստեղծեցին հինգ հոգուց բաղկացած ինիցիատիվային խումբ, որ ղեկավարում յեվ պլանավորում եր կոլտնտեսությունների ոգնություն ցնցեռելու գործը։ Ինիցիատիվային այդ խումբը ղեկավարում եր մասսայական ամբողջ աշխատանքն անհատականների ու կոլտնտեսականների միջև, «Գիգանտի» մասին հատուկ զեկուցողներ եր ջոկում և ամենամոտիկ գյուղերն եր ուղարկում նրանց՝ ագիտացիայի համար։ Հսկայական արդյունքներ տվին հողագործների եքսկուրսիաները, որոնք կազմակերպված եյին կոմյերիտական բրիգադի հողամասը դիտելու նպատակով։ Մասսայական քաղաքական աշխատանքը, որ ապացուցված և սոցիալիստական հաղթանակների փաստերով, կոլեկտիվացման հաջողության գործում վճռական դեր խաղաց անտարակույս։ 1930 թվի ընթացքում կոմյերիտական բրիգադը մինչև 300 անհատական տնտեսություն հավաքագրեց կոլտնտեսություններում, իսկ 1931 թվի գարնանացանի ժամանակ—մինչև 500 անհատականներ։ Ությերորդ կոմյերիտային հողամասի այս ամեն հաջողությունները բացատրվում են նրանով, որ դեռ ամեռվանից նա պատրաստվում եր աշխատանք ծավալելու անհատականների յեվ կոլտնտականների միջև։

Կոլտնտային դաշտերում մասսայական աշխատանք ծավալելու համար կազմակերպվել եյին հարվածային խմբեր։ Դրանցից մեկին հանձնարարված եր ուշի ուշով ուսումնասիրել կոլտնտի կանոնադրությունը և ներքին կարգի կանոնները, այնուհետև կոլտնտային պլանի

ՀՍՍՌ Գիտ. Ակադեմիա
Ա. Մ. Մասիսյան անվան գրադարան

հորինումը, յերրորդին—«Գիգանտ» խորհտնտեսության հաշվեռվության մշակումն՝ անհատականներին զեկուցելու համար։

Զոկված եր ագրոնոմիական խումբ, վորն ագրոնոմի ղեկավարությամբ բացատրական աշխատանք եր անցկացնում ագրոնոմիական միջոցառումների մասին, հետազոտում եր կոլտնտեսները յեվ տալիս եր ագրոտեխնիկական բնույթ կրող գործնական խորհուրդներ։

Բրիգադի միջից զոկում եյին ագիտպրոպ աշխատավորներ՝ անհատականների միջեվ քաղաքական աշխատանք տանելու համար։

Խորհտնտի սոցիալիստական փորձի փոխադրումը դեպի կոլտնտները նշանակալից չափով աշխուժացրեց աշխատանքը կոլտնտների միջև։ Այս գարնանն առաջադրված են կոլտնտեսականների միջև տասնելու մասսայական աշխատանքի տասնյակ նոր և հետաքրքրական ձեվեր։ Յեթե անցած տարի խորհտնտի բրիգադները սահմանափակվեցին լոկ մասսայական աշխատանք անցկացնելով կոլտնտներում, ապա այժմ աշխատանքի հիմքում դրված եյին նոր խնդիրներ—աշխատանքի կազմակերպման համար խորհտնտի փորձի փոխադրումը, ուժերի դասավորման համար կոլտնտներին ոգնություն մատակարարելը, ինչպես նայեվ աշխատանքների՝ գործավարձային սիստեմի վերածումը։ Գիգանտցիները շատ բանում ոգնեցին կոլտնտներին՝ կանոնավոր կերպով կազմակերպելու արտադրական խորհրդակցությունների աշխատանքը և սոցիալիստական մրցումն ու հարվածայնությունը ծավալելու։

Սոցիալիստական փորձը կոլտնտներին փոխադրելու մասին կոմյերիտականների ունեցած ինիցիատիվը, վոր հավանություն եր գտած ամբողջ խորհտնտի կողմից, հսկայական արդյունքներ տվեց։ Տնտեսություն կազմակերպելու գործում «Գիգանտի» ունեցած փորձն ոգտագործելով, կոլտնտները կազմակերպչորեն զգալի կերպով ամրանում եյին և ցանքն անցկացնելիս՝ կարողացան հարվածային տեմպեր ձեռք բերել։ Այս աշխատանքը սերտորեն կապված եր անհատականներին կոլտնտներում ներգրավելու գործի հետ։ Գարնանացանի ընթացքում խորհտնտի հավաքագրող բրիգադները մոտ յերեք հազար անհատականներ ներգրավեցին կոլտնտները։

Այսպես են փորձի սոցիալիստական փոխադրման արդյունքները։

ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՐՇԱՎԸ

Աշնանավարը վերջացավ։ «Գիգանտն» անցնում է տրակտորների նորոգմանը, վորոնց վիճակվեց 107000 հեկտար անմշակ հողվարել։

Պետք յեղավ փոխել տրակտորների մաշված շատ մասերը։ հարկավոր եր նորոգել տրակտորներն ու դարձնել նրանց մարտունակ՝ ամենաանգամ համար։

Այս եր պահանջում կուսակցությունը, խորհրդային իշխանությունը։ Սրան եյին ձգտում նաև իրենք՝ բանվորները—արտադրության տերերը։

Բայց պահեստի մասեր չկային։ Նորոգման գործում մի կատաստրոֆիկ ճեղքվածք եր հասունանում։ Արտավորվում եր հարվածային կարմրագրոշ «Գիգանտի» պատիվը։ Սակայն այդ ճեղքվածքի վերացման գործին ձեռնամուխ յեղավ բանվորների ռացիոնալիզատորական միտքը։ Բանվորներն առաջարկում են՝

— Ամերիկյան մասերն այստեղ պատրաստել, մեր կիսասարջավորված արհեստանոցներում։ Ամերիկային սպասելու կարիք չկա։

Տնտեսավարները ու մասնագետները, հենվելով գործի «նորության» վրա, պատասխանում եյին՝

—Դրանից բան չի դուրս գա։ «Գիգանտն» Ամերիկա չե։ Կսպասենք։

Յեվ սպասեցին։ Սպասեցին դեկտեմբերը, սպասեցին հունվարը։

Հեռագիրն ամեն որ հուզիչ խոսքեր եր տանում «Գիգանտից»։—

«Ցանքսի պատրաստությունը վիժում է։ Մասեր չկան»։

Մոսկվան կարճ պատասխանում եր՝

«Ամերիկայից ենք սպասում»։

Ամեն որ Մոսկվայի հետ փոխանակվում եյին հուզիչ խոսքեր։ Բայց ժամանակն անցնում եր։ Մոտենում եր գարունը։ Իսկ սպառնալիքը գնալով մեծանում եր։

Բանվորները վորոշեցին չսպասել։ Բանվորները պահանջում եյին՝

—Սկսել մասերի պատրաստումը։

Արհեստանոցների կոմյերիտական բջիջը, դիրեկցիայի պատասխանին չսպասած, հարվածային բրիգադ ստեղծեց՝ պահեստի մասեր պատրաստելու համար։ Բրիգադը կազմվեց լավագույն վորակավորյալ տրակտորիստներից, լավագույն հարվածայիններից, վորոնք զբաղված եյին դաշտում տրակտորների ընթացիկ նորոգմամբ։ Զուլելու ցեխում կազմակերպվեցին և ծուլիչների հարվածային կոմյերիտական բրիգադներ՝ պահեստի մասեր շինելու համար։ Սա ամենադժվարին աշխատանքն եր, բայց կոմյերիտականները վորոշեցին հաղթահարել բոլոր դժվարությունները և պահեստի մասեր շինել։

Սկսվեցին համառ աշխատանքի որերը։ Արհեստանոցներում հայտարարվում է զինվորական դրություն. անցկացվում են կոմյերից միության կողմից հայտարարված արտադրական մանյովրներ։

Կոմյերիտականները դիմեցին մասնագետներին.—

«Փոխ տվեք մեզ ձեր գիտությունը. մենք նոր գործ պիտի սովորենք։ Մենք պետք է պահեստի մասերը պատրաստելու տեխնիկային տիրապետենք»։

Ոգնության հասան ինժեներները, տեխնիկները և մեքենագետները։ Տեխնիկայի վերաբերյալ դրականությունը դեպի ցեխերը փոխադրվեց։

Յուրաքանչյուր ցեխում կոմյերիտմիությունը կազմակերպեց տեխնիկական գիտելիքների խմբակներ։

Նոր գործի տեխնիկային տիրապետելով՝ կոմյերիտական բրիգադները մեքենաների պահեստի մասերն էին պատրաստում։

Մի շաբաթվա ընթացքում հարվածային աշխատանքի փորձն ապացուցեց, որ առանց Ամերիկային էլ կարելի է յոլա գնալ. պատրաստված մասերն արդեն փորձի են ենթարկված և պիտանի են ճանաչված։

Նորոգման տեմպերն աճեցին։ Բոլոր արհեստանոցներն էլ բարդ մասերի պատրաստմանն անցան։ Կոմյերիտականները առաջադրական նոր հաղթական տարան։

Հեղափոխության նույն հերոսական առորյայում ծնունդ առան բազմաթիվ նոր ու կենսունակ մտքեր։ Հարվածայինների խելքն ու միտքը դեպի արտադրական ֆրոնտն էր ուղղված։ Մարտական այս որերը հնարավորություն տվին «հրապարակ հանելու տաղանդներ, որոնք գոյություն ունեն ժողովրդի մեջ որպես անսպառ աղբյուրներ և որոնց հաղարներով ու միլիոններով տրորել, ճզմել ու խեղդել է կապիտալիզմը» (Լենին)։

Կոմյերիտմիության նախաձեռնությամբ ռացիոնալիզատորական արշավ հայտարարվեց։ Դարբնոցային ցեխի կոմյերիտականները ռացիոնալիզատորական հաշվի նախաձեռնարկը հանդիսացան։

Կոմյերիտմիության կոմիտեին ուղղած իրենց նամակում նրանք գրում էին.—

«Մենք վորոշեցինք արդյունաբերության փորձը փոխադրել հացահատիկի սոցիալիստական ֆաբրիկը և ռացիոնալիզատորական հաշիվ կազմակերպել առանձնապես թե ամբողջ խորհտնտի, թե ցեխերի և թե հողամասերի համար»։

Այս նախաձեռնությանն արձագանք տվին բոլոր խորհտնտեսությունները։ Բանվորները հետեվյալ լոզունգը նետեցին՝

«Գիգանտին» հարկավոր է բոլշեվիկյան ռացիոնալիզացիա։ Ցեկեք ռացհաշիվը պատրաստենք»։

Սկսվեց ռացիոնալացման առորյան։ Սկսվեց ամենորյա մանրակրկիտ աշխատանքը՝ ռացիոնալիզատորական առաջարկների հավաքման ուղղությամբ։

Այստեղ էլ ռացիոնալիզատորական առաջարկների հավաքման գործում, խոշոր աշխատանք կատարեց խորհտնտի կոմյերիտը։

Ռացիոնալիզատորական առաջարկները հավաքելու համար ցեխերում կոմյերիտական բրիգադներ ստեղծվեցին։ Սահմանվեց մնայուն կոնսուլտացիա, խորհրդատվություն։ Ցերեք որը մի անգամ բանվորները կոմյերիտական բրիգադայից պատասխան էին ստանում՝ մուծված առաջարկի ոգտագործման մասին։ Կոմյերիտմիության և «Գիգանտ» պատի թերթի պահանջով խորհտնտում կազմակերպվեց ռացիոնալիզատորական բյուրո։ Ռացբյուրոյի համար ջոկվեցին հարվածային յերիտասարդ ինժեներ Զրկինը և բանվոր ռացիոնալիզատոր ընկեր Վասենկոն։

Ռացբյուրոյի աշխատանքի կենտրոնը փոխադրվեց արհեստանոցներն ու ցեխերը։ Կոմյերիտականների ռացիոնալիզատորական բրիգադների հետ միասին, ռացբյուրոն ամեն որ տեղեկացույց էր փակցնում բանվորական առաջարկների ոգտագործման արդյունքների մասին։ Լավագույն առաջարկները պարգեվատրվում էին։

Մեկ ցեխի ռացիոնալիզացման փորձը մյուս ցեխն էր փոխադրվում։

Լավագույն հարվածային ռացիոնալիզատորների փորձը բոլոր բանվորներին էր փոխադրվում։

Ռացիոնալիզատորական հաշվի պատրաստման գործին մասնակցում էին բոլոր բանվորները։ Մեկը մյուսի հետեվից ռացիոնալիզատորական առաջարկներ էին ստացվում «Գիգանտի» դյուզատնտեսական պրոլետարներից։ Ներկայումս ռացիոնալիզատորական հաշվում բանվորական 500 առաջարկներ են մուծված։ Ռացիոնալիզատորական բյուրոն ընդունել է 297 առաջարկ։ 83 առաջարկ վերաժշակման վիճակումն է։ Մնացածները մերժված են։

Ընդունված առաջարկների եկենոմիկ եֆֆեկտը կկազմի կես միլիոն ռուբլի։

Բայց այս բոլորը չէ։ Իբրև պատասխան տուլացիներին, բանվորները վորոշեցին ռացհաշվի միջոցով տնտեսել մեկ միլիոն ռուբլի և ներկայումս էլ հայտարարված է ռացիոնալիզատորական առաջարկների մի անընդհատ հեղեղ։ Հաշիվը միշտ բաց է և առաջարկները գալիս են ու գալիս։

Մոտորի ցեխում ռացիոնալիզատորական կոմյերիտ բրիգադը 15 առաջարկ հավաքեց։ Ներկայումս դրանց մեծ մասն ընդունված և կենսագործված է։ Սրանց շնորհիվ տնտեսվեց 4311 ռուբլի։

Բանվոր Լեոնովը կատարելագործեց շաբերովկայի գործիքը, ինչպես նաև մխոցի գլանաձև ծայրի մատները շտկելու գործիքը։ Առաջ այդ աշխատանքները ձեռքով էին կատարում, շատ ժամանակ էին խլում և բազմաթիվ խոտան (բրակ) էին տալիս։

Այժմ աշխատանքի պրոցեսը մի քանի անգամ կրճատված է, իսկ խոտանը վերացված։

Մոլչանովը տրակտորի դլանաձև ծայրերին մի գործիք հարմարեցրեց։ Առաջ նույն աշխատանքը կարող էր կատարել միայն բարձրակ փականագործը և շատ ժամանակ էր խլում. ներկայումս նույն աշխատանքը կարող է կատարել յեվ ցածրորակ փականագործը։ Աշխատանքի պրոցեսն էլ շատ է կրճատված։

Բոնդարենկոն «Կատերպիլլեր» տրակտորի մասները շտկելու մի դաղդյահ հնարեց։

Խորհտնտեսային ռացիոնալիզատորական հաշվի ծննդավայրը դարբնոցային ցեխն է։ Այս ցեխը ռացիոնալիզացման որինակելի ցեխ դարձավ։ Դարբնոցային ցեխի բրիգադիր ընկ. Իվանովն առաջինն էր, որ մոտ 10 առաջարկ մացրեց՝ ցեխի՝ աշխատանքի առանձին պրոցեսները մեքենայացնելու հոսմար։ Նրա որինակին հետևեցին և մյուսները։

Հենվելով ցեխի բանվորների ռացիոնալիզատորական սրամտությանը և ակտիվությանը, Իվանովը հնարեց և ռեորտները ծռելու և պատրաստելու մի դաղդյահ։ Այդ աշխատանքն առաջ արժեր 3,96 կոպ., իսկ կատարելագործվելուց հետո—ութը կոպ.։ Նրա ձեռքի գործն է նաև սեկտորներ պատրաստելու շտամպը, որի շնորհիվ արտադրության պրոցեսը չորս անգամ արագ է կատարվում։

Պատահական բան չէ, որ ռացիոնալիզատորական միտքը յեռ է դալիս դարբնոցային ցեխում՝ որովհետև այդ ցեխն աշխատում է որպես միաձույլ ընտանիք։

Տեմպերի՝ մրցում։ Դարբինների համար տեմպն այն մեխանիկական մուրճն է, որ չափով և տրագորեն իջնում է շիկացած յերկաթի վրա։ Նորոդման ասպարիզում դործ դրված տեմպերի մասին վկայում են բոլշեվիկյան թվերը։ Յեթե «Լենա» և «Զիզդազ» տափանների նորոդման համար սահմանված է մեկ ժամ, ապա հարվածայինները այդ նորոդումը 40 րոպեի մեջ են կատարում։

Դարբնոցային ցեխի հարվածայինների աշխատանքի որինակից դաս պետք է վերցնեն խորհտնտի մյուս ցեխերն էլ։ Դաս պետք է վերցնել Իվանով Յակով ծերունուց և Միտյա Միխայլով ջահել կոմյերիտականից։

Միտյան պարգևատրված է հարվածային աշխատանքի համար։ Հարվածային կոչումը նա կրում է հպարտությամբ։ Դիտելով ծերերին և նրանց հետ աշխատանքը, Միխայլովը նրանցից հետ չի մնում և մյուսների պես համառորեն ուսումնասիրում է լավացնել իր արտադրությունը։

Նա առաջարկ ներկայացրեց ելեկտրա—մուրճի կատարելագործման մասին կամ, ինչպես Իվանովն անվանեց, շարժական մուրճի մասին։ Առաջարկ մացրեց նաև ծխատարի մասին։

Այս յերկու առաջարկներն էլ ներկայումս իրացվում են։

Յեթե կարդն այսպես է.—առաջարկը մտնելուն պես, իսկույն խմբովին քննարկում են նրան և կենսագործում են։

Բնորոշն այն է, որ այս կամ այն դյուտարարությունն ու կատարելագործումը մի անձի արտադրանք չի, այլ ամբողջ բրիդադի և ցեխի։

Մի քանի տող առաջ հիշված որինակներում դուդորդված են յերկու ուժ, մեկը—յերիտասարդի բուռն խանդավառությունը, մյուսը—ծերի համառությունը։

Դարբնոցի ցեխի բանվորների ստեղծագործական նախաձեռնությունը պճպճան հեղեղի պես թափվում է ռացիոնալիզատորական հաշվի մեջ։ Կոմյերիտական հարվածայինները ծավալեցին ռացիոնալիզատորական առաջարկների հավաքումը և հավաքեցին քսանից ավելի։ Ռացհաշիվը լրացված է։

Ռացիոնալիզատորական պատրաստի հաշիվը հարվածային դարբինները հանձնեցին հնդամյակի յերրորդ տարվա ֆոնդին։

Նորոդման կամպանիայում ելեկտրոցեխն առաջին տեղն էր բռնում։ Նորոդման պլանը նա իրականացրեց 210 %-ով։ Դրան նպաստեց վոչ միայն հարվածայնությունը, և այլ ռացիոնալիզատորական միտքը։ Ելեկտրոցեխը 14 հատ թանկագին առաջարկներ մացրեց ռացհաշվի մեջ։ Որինակներ—հարվածային Կուպցովը փաթաթարեր անջատող դաղդյահը հարմարացրեց և ահա քեզ 2000 ռ. տնտեսություն։ Հարվածային Պուլմենը տրակտորի դինամոյի համար (դրա մասին առաջ չեյին մտածում և դինամոն փչանում էր) առաջարկեց պահպանակ դնել—այժմ փչացման առաջն առնված է։

Ռացիոնալիզատորական մի շարք առաջարկներ մշակեց ելեկտրոցեխի ամբողջ կոլեկտիվը։ Որինակ, «Կատերպիլլեր» տրակտորի «բոշ» դինամոմեքենան լիովին նորոգում էր մի մարդ՝ բանվորական յերկու որում.—ցեխը վորոշեց փաթաթումը և հավաքումն առանձին առանձին կատարել։ Փորձն աջողվեց։ Ցեխի վարպետ ընկ. Կուպցովի առաջարկն ընդունվեց։ Ցեվ ահավասիկ նրա արդյունքը—դինամոն սկսեցին նորոգել միայն 5 ժամվա ընթացքում։

Լարման ռեգուլյատորների մեկ կոճի կծկումը ութը ժամվա մեջ էր կատարվում ձեռքով, իսկ յերբ հարմարացրին ելեկտրոդազդյահը, արդեն 12 կոճ սկսեցին կծկել ութը ժամում։ Կոմբայնի վրա աշխատող կոմյերիտական ընկ. Մարտինովը հնարեց մի պրես՝ հարդը կոմբայնի վրա կապելու համար։ Այս պրեսի կիրառումը հարդի հավաքման գործում ահագին տնտեսում պիտի պատճառի և դաշտերի մաքրությանը պիտի նպաստե և այլն։ Բնական է, որ խորհտնտեսությունների արհեստանոցներում շինված այս պրեսը խոշոր թերություններ

ունենա։ Բայց ահագին արժեք ունի նրա սարքավորելու գաղափարը և յեթե այդ պրեսը արտադրվի գործարաններում, ընդարձակ կիրառում կստանա։

Ամենագնահատելի առաջարկներից մեկը, վոր հատուկ ուշադրության արժանի յե, դա մեքենագետ ընկ. Վլասենկոյի կցանքն է (сцепка)։ Դիրեկցիայի կողմից հայտարարված լավագույն կցանքների կոնկուրսում առաջնություն ստացավ ընկ. Վլասենկոն։ Նրա հորինած կցանքը լավագույնն է համարված։ Նա պարզ կոնստրուկցիա ունի և պահպանում է շարքացանները ջարդվելուց։ Սելմաշի վեց շարքացանի հարվով շինված այս կցանքը հնարավորություն է տալիս ցանքսի հարկավոր լայնությունը պահպանել և ավելացնում է արտադրողականությունը։ Այս կցանքի պատրաստումը նստում է 300 ռուբլի։ Գերմանական «Ռուդ սակկան» արժե 1000 ռուբլի վոսկով։

Գուկովի միավորման շնորհիվ այս կցանքն ապահովված է կոտրվելուց ինչպես տրանսպորտում, այնպես էլ աշխատանքի ժամանակ։ «Գիգանտում» շինված 11 հատ կցանքները բոլշևիկյան ցանքսի ժամանակ փառավոր քննություն տվին, 12696 ռուբլի յել տնտեսում։ Մասսայական գործածության և Սելմաշի գործարանում շինելու դեպքում սրանից կստացվեր 120 հազար ռուբլի տնտեսում միայն «Գիգանտ» խորհտնտեսության համար։ Իսկ յերբ այս կցանքը կիրառվի Զերնոտրեստ սիստեմի բոլոր խորհտնտներում, այն ժամանակ կստացվի հարյուր հազարների և միլիոնների տնտեսում։

Խորհտնտի ութերորդ կոմյերիտական հողամասը կոլեկտիվ կերպով առաջարկեց՝

> «Կցված գործիքներով՝ մեքենաների մեկ տեղից մյուս տեղ առանց գործի տեղափոխելուց առաջ են գալիս ինվենտարի կոտրվածքներ։ Առանց գործի տեղափոխության դեպքում առաջարկում եմ գաղի ուժը պակասացնել, վորը զգալիորեն կպակասեցնի ինվենտարի կոտրվածքները։ Մի բան ևս։ Մեքենաները հարդարելու ժամանակ շլանգից դեռնի վրա յե թափվում շատ կիղանյութ։ Այս բանից խուսափելու համար առաջարկում ենք շլանգի ծայրին մի ծորակ ամրացնել. նույնպիսի ծորակներ անցկացնելու յե նաև ցիստերներին»։

«ՈՒԹԵՐՈՐԴ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ»

Այս առաջարկներն ընդունված են։

Յոթերորդ հողամասն առաջարկեց մարկերի հետին ծայրի ատիվին ամրացնել խիստ հետք թողնող մի ցուցիչ։ Առաջարկն ընդունված է և կիրառվում է խորհտնտի բոլոր հողամասերում։

Այս բոլոր առաջարկներն էլ հավաքված են կոմյերիտական ռացիոնալիզատորական բրիգադների ձեռքով։ Խորհտնտում ընդամենը հավաքված են 500 առաջարկներ. սրանցից 300-ը հավաքված է կոմյերիտականների ձեռքով։ Բայց բանվորական առաջարկների լոկ հավաքողներ չեյին կոմյերիտականները։ Նրանք իրենք էլ ակտիվ ռացիոնալիզատորներ եյին։ Կոմյերիտականները մուծել են ռացիոնալիզատորական 96 առաջարկ, վորոնք բոլորն էլ ընդունված և մուծված են ռացհաշվում։

Ամերիկան խանդարեց «Գիգանտի» հաշիվները, այսինքն պահեստի մասերն ուշացրեցին շատ ուշ և «Գիգանտում» ստացվեցին ցանքսից հետո։ Ռացիոնալիզատորական միտքը ոգնեց խորհտնտներին սեփական ուժերով պատրաստել մեքենաների պահեստի մասերը։ Կոմյերիտականների ռացիոնալիզատորական հաշիվը շատ բանում ոգնեց մարտականորեն անցկացնելու դարնան համար պատրաստությունը։

Կանգ առնենք ռացիոնալիզատորական հաշիվ կազմելու փորձի վրա։ Այդ փորձը շատ պարզ է։

Ռացիոնալացման հարվածային բրիգադը հավաքում է ցեխում բանվորական առաջարկները։ Դրանք բոլորն էլ քննարկվում են արտադրական խորհրդակցություններում, յենթարկվում են ինժեներների տեխնիկական կոնսուլտացիային և վերջնականապես հաստատվում են։ Հաստատված առաջակը գրվում է ռացիոնալացման հատուկ գրքում, վոր կոմյերիտականների նախաձեռնությամբ մտցված է բոլոր ցեխերում։ Այս գրքում մատնանշվում է առաջարկի բնույթը, արժեքը և կենսագործման ժամկետը։

Ընդունված բոլոր առաջարկներն էլ գրվում են գրքում և ռացհաշիվը պատրաստ է։ Բայց այս դեռ բոլորը չե։ Ընդունելը և գրքում տասնյակ արձանագրություններ կազմելը բավական չե։ Կարեվորն այն է, վոր բանվորական ամեն մի առաջարկ կենսագործված լինի։

Ահա այստեղ ևս հանդես է գալիս կոմյերիտականների նախաձեռնությունը։ Կոմսոմոլն իր շեֆությունն է հայտարարում առաջարկների վրա։ Կոմյերիտականների ռացիոնալիզատորական բրիգադները միշտ ստուգում եյին բանվորական առաջարկների կատարումը։ Նախազգուշացնում եյին նրանց, ովքեր բանվորական առաջարկների

կատարման ժամկետի մասին բանվորների հանած վորոշումները չեյին կենսագործում։

Ռացհաշիվները ունեյին իրենց աշխատանքի տեղամասերը, բայց այստեղ նրանք այլ կերպ են կառուցված և ըստ ամենայնի յել նպատակահարմար ձևով։ Ամբողջ հողամասի մի անգամից տարեկան ռացիոնալիզատորական հաշիվ պատրաստելը հո դժվար բան է։ Ուրեմն բորդ կոմյերիտական հողամասն առաջարկեց.—

Գյուղատնտեսական աշխատանքի յուրաքանչյուր պրոցեսի համար ռացիոնալիզատորական առանձին—առանձին հաշիվ ներկայացնել։

Առաջարկն ընդունված է։ Ռացհաշիվ պատրաստվեց գարնանացանի համար։ Պատրաստվում է բերքահավաքի համար։

Կարելո՞ր բան է արդյոք այս։ Այս մեթոդի արժեքն այն է, վոր ռացիոնալիզատորական հաշվի կազմումը կատարվում է հենց այն ժամանակ, յերբ պատրաստություն են տեսնում, որինակ, ցանելու կամ բերքահավաքի։

Ռացիոնալացումն ոգնեց մոբիլիզացիայի յենթարկել բանվորական մասսաներին՝ գյուղատնտեսական վորոշ աշխատանքներ անցկացնելու համար։ Ռացիոնալացումն ուժեղացնում է նախապատրաստման տեմպերը, ոգնում է ավելի լավ կազմակերպել աշխատանքները։ Ի՞նչ են տալիս մեզ ռացհաշիվները։

Խոսքը, հարկավ, միայն կես միլիոնի մասին չէ։ Ռացհաշիվը բարձրացնում է յուրաքանչյուր բանվորի իր արտադրության առաջադրության հանդեպ ունեցած խնամատար վերաբերմունքը։ Ռացիոնալիզատորական հաշիվը—սոցիալիստական մրցման այդ բարձրագույն ձևը—գաղափարների նորանոր շերտեր է հանդես բերում։ Ռացիոնալիզատորական հաշիվը ստիպում է հնգամյակի համար աշխատել։

«Գիգանտ» խորհտնտում ռացիոնալիզատորական հաշիվը կազմված է նկատի ունենալով արտադրական բոլոր հնարավորությունները։ Նա կոնկրետ կերպով ցույց է տալիս, թե ինչպես է հարկավոր կազմակերպել աշխատանքը դազգյանների, սարֆոցների (վերստակների), տրակտորների ու կոմբայնների վրա, ինչպիսի փոփոխումներ է պետք մրցցնել ցեխերի ու բրիգադների աշխատանքներում՝ վորոնց հետեվանքով աշխատանքը դառնա ավելի դյուրաստար յեվ տա առավելագույն ցուցանիշներ թե՛ ըստ վորակի յեվ թե՛ ըստ քանակի, նպաստի աշխատանքի արտադրության բարձրացմանը և մեկ ցենտներ հացի ինքնարժեքի իջեցմանը,—այն ամենը, ինչ վոր նպաստելու յե ցանքսի, բերքահավաքի ու վարի շուտափույթ անցկացմանը, ինչ վոր ապահովելու յե աշխատանքի տեմպերի արագացումը, առաջն և առնելու դյուղատնտեսական գործում հնարավոր կորուստների,—այդ բոլորը մուծված է ռացհաշվի մեջ։

ՇՐՋԱԴԱՐՁԸ ԿԱՏԱՐՎԱԾ Է

Կոմյերիտմիության աշխատանքի պայմանները սոցիալիստական ոգի խոշոր, մեքենայացրած գյուղատնտեսություններում ունեն իրենց սպեցիֆիկ առանձնահատկությունները։

Խորհտնտների կոմյերիտական կազմակերպություններից և մանավանդ նրա ղեկավարությունից պահանջվում է առավելագույն ոպերատիվություն և տնտեսական խնդիրների արագ կատարման շնորհ։ Խորհտնտի կոմյերիտական կազմակերպությունը ղեկավարելու շնորքը կայանում է հենց նրանում, վոր իր ժամանակին կարելի լինի այդ կազմակերպությունը գյուղատնտեսական աշխատանքների մեկ պրոցեսից դեպի մյուս փոխադրել յեվ կազմակերպության առաջ նոր խնդիրներ դնելիս շնորհ ունենալ գյուղատնտեսական աշխատանքի գլխավոր ողակը գտնելու, իր ժամանակին մոբիլիզացիայի յենթարկելու կոմյերիտների խանդավառությունը՝ հաղթահարելու համար նիմնական ու հերթական խնդիրներ, գլխավորելու յեվ ղեկավարելու սոցիալիստական մրցման յեվ հարվածայնության նոր հոսանքը։

Կոմյերիտական ղեկավարությունը խորհտնտներում պետք է վարպետորեն զուգորդե իր տնտեսական, արտադրական աշխատանքը քաղաքական նպատակների հետ, բազմաբնույթ կոմերիտի համար մղվող ընդհանուր պայքարի հետ։ Ուրիշ խոսքով՝ տնտեսական շինարարության հարցերը, վորոնք սերտորեն կապված են քաղաքական խնդիրների հետ, պետք է սիստեմ դառնան, խորհտնտի յուրաքանչյուր կոմյերիտականի, խորհտնտության ամեն կազմակերպության ուղն ու ծուծը լինեն։

Տեմպերը բարձրացնել, վորակի համար պայքարել,՝ տնտեսական խնդիրների խորքը թափանցել—ահա վորոնք են աշխատանքի հանդուցային հարցերը, ահա ինչը պետք է դառնա յուրաքանչյուր կոմյերիտականի, յուրաքանչյուր կոմյերիա բջջի հեղափոխական պատասխանատվության առարկան։

Խորհտնտային աշխատանքի սպեցիֆիկ առանձնահատկությունը կայանում է նաև նրանում, վոր խորհտնտի կոմյերիտը չունի բազմամյա աշխատանքի գործնական փորձառություն յեվ առորյա աշխատանքում պարտավոր է ինքը գտնելու յեվ հարթելու այն ուղին, վորով կարելի լինի տանել կոմյերիտական աշխատանքը՝ զուգորդելով խորհտնտի տնտեսական և քաղաքական խնդիրների հետ կոմսոմոլի բովանդակ ներմիութենական աշխատանքը։

Խորհտնտների կոմյերիտը չի կարող ամբողջությամբ փոխ առնել վոչ միության արտադրական կազմակերպությունների և վոչ էլ

կոլտնտեսների կոմբերիտի փորձը։ Կոլտնտեսային աշխատանքի պայմանները արդյունաբերության եվ գյուղատնտեսության միջին ողակն են հանդիսանում։

Խորհտնտեսների աշխատանքի պայմանները կոլտնտեսային պայմաններից նրանով են տարբերվում, որ խորհտնտեսում տնտեսությունը և բոլոր աշխատանքներն ամբողջապես մեքենայացված են, այնինչ կոլտնտեսներում դեռ մինչև որս եվ մեծ դեր են խաղում կենդանի քաշող ուժը (ձիերը, եղները) և արտադրության գործիքները, իսկ խորհտնտեսությունում արտադրության հիմնական միջոցները հանդիսանում են մեքենաները— տրակտորներն ու կոմբայնները։ Բայց «տրակտորը և իր ուղեկիցները հիմնովին փոխում են գյուղատնտեսական արտադրության մեթոդներն ու ձևերը, հետը մեկտեղ փոխելով նաև սոցիալիստական-եկոնոմիկ հարաբերությունները» (Յակովլև, XVI Համազ. Հ.Ա.Մ. ԿԿ-ի)։

Մյուս կողմից «ի տարբերություն խորհտնտի, որ պետական միջոցներով ստեղծված պետական մի ձեռնարկություն է, կոլտնտը հանդիսանում է գյուղացիների կամավոր հանրային մի միավորում, որ ստեղծվում է իրենց, գյուղացիների միջոցով և ունի այս հանգամանքից բղխող բոլոր հետևանքները» (XVI կուսհամագումարի վորոշումներից)։

Պարզ է, որ սրա առնչությամբ փոխվումեն կոմբերիտական աշխատանքի մեթոդն ու ձեվերը, վորովհետև կոմբերիտական աշխատանքը կառուցվում է արտադրական պայմանների ու ինարավորությունների համաձայն։

Կոմբերիտ աշխատանքը խորհտնտներում տարբերվում է նաև Միության արդյունաբերական կազմակերպություններից նրանով, որ խորհտնտային բջիջները իրենց գործունեության հիմքում դնում են գյուղատնտեսությունը՝ գյուղատնտեսական աշխատանքներին հարակից պեսպեսություններով։ Հետևաբար խնդիրը նրանումն է, որ խորհտնտային արտադրության պայմաններում կանոնավոր կերպով ոգտագործվի գործարանների եվ կոլտնտների փորձը, կիրառելով այն իրենց արտադրական առանձնահատկությունների համաձայն։

«Գիգանտ» խորհտնտի կոմբերիտին հարկ եղավ վերակառուցել իր աշխատանքը յերեսով դեպի արտադրությունը, ոգտագործելով անցած տարվա փորձը և ստուգելով աշխատանքի նոր ձևերն ու մեթոդները, որ առաջադրվում են վարից, բջիջների կողմից։

Պետք է պարզապես ասել, որ միայն այս գարնանը, կոմբերիտական կազմակերպության ամրացումից հետո, շրջադարձը դեպի արտադրությունն արգելակող ոպորտունիստների ղեկավարությունից հեռացնելուց հետո, «Գիգանտի» կոմբերիտը վերակառուցվեց եվ նիմնականում յերեսը դեպի արտադրությունը դարձրեց։

Կոմիտեի նոր ղեկավարության առջև դեռ դարնանացանից առաջ, ծառացավ այն խնդիրը, թե վորտեղից սկսելու է գործը։ Յեվ սկսեցին մարդ պատրաստել, քարտուղարների ու պրոպագանդիստների կադրեր հավաքել և ուժերը դասավորել։

Բջիջների քարտուղարների համար յերկամսյա կուրսեր անցկացրին, վորով ընդգրկեցին 30 հոգի, ապա մեկուկես ամսվա կուրսեր— բջջային պրոպագանդիստների համար, վորից անցան 25 հոգի։

Տրակտորավարների և մեքենագետների կուրսերում, ուր սովորում եյին 900 հոգի (վորոնցից 70%-ը կոմբերիտականներ), կոմբերիտ կոմիտեն, դիրեկցիայի հետ համաձայնությամբ, ծրագրի մեջ մտցրեց 60 ժամ հատուկ կոմբերիտական հարցերին նվիրված։ Այսպիսով, բացի բջջային ղեկավարների կուրսերից, կոմբերիտական աշխատանքի հանդուցային հարցերի հետ ծանոթացել եյին բանվորների հիմնական կադրերը, ղեկակալ կոմբերիտականները։

Հաջող անցան բջիջների քարտուղարների կուրսերը։ Ուսուցումը սերտորեն կապված եր կոմբերիտական գործնական աշխատանքի հետ։ Առանձին հարցերի նկատմամբ կուրսերը կոմբերիտ բջիջների, ցեխ-կազմակերպիչների և ցեխերում յեռեերթյա աշխատանքի անցած արհեստանոցների հետազոտությունն եյին կատարում։ Կուրսերում մշակվում եր հողամասերի լավագույն բջիջների փորձը։ Յերեսով դեպի արտադրությունը շրջադարձի մասին թեման մշակելուց հետո անմիջապես տրվում եր արտադրական աշխատանքի փորձ կուտակած լավագույն բջիջի ղեկուցումը։ Բոլոր հարցերի մշակումն եվ զուգորդված եր տեղական պայմանների հետ. կուրսերի ղեկավարների թեզիսները համակված եյին կոմբերիտականների աշխատանքի տեղական փաստերով։

Որինակ, կուսղեկավարության հարցի մշակումից առաջ, կուրսանտներն ուսումնասիրեցին կոմբերիտականների խորհտնտում տարած ղեկավարությունն, ինչպես նայեվ կաստարեցին բջիջների հետազոտումը։ Տեսական նախապատրաստման և գործնական աշխատանքի այս սերտ կապը վոչ միայն նոր բան է մտցնում ուսուցման մեջ, այլև հնարավորություն է տալիս ավելի խորն ուսումնասիրել հարցը յեվ ամեն կողմից ըմբռնել նրան։

Սակայն բջիջների ղեկավարներ պատրաստելով ամեն բան չի վերջանում. այդ դեռ բավական չե՝ կադրերով ապահովված ենք ասելու համար։ Կոմբերիտական աշխատավորների կադրը են հարկավոր մեր վարի սկզբնական արտադրական միավորի համար, այսինքն հերթափոխության ու ագրեգատի համար։ Ճիշտն ասած՝ հերթափոխության մեջ ու տրակտորի վրա յե գտնվում արդիինպլանի կատարման, այսինքն ցանքսի պլանի, սոցիալիստական մրցման ու հարվածայնութ-

յան ծավալման համար մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելու խնդրի ծանրության կենտրոնը:

Հերթակազմակերպիչների համար տասնորյա, իսկ խմբկազմակերպիչների համար (խմբկազմակերպիչներին ագրեգատն է ղեկավարում) յերեքօրյա հատուկ կուրսեր կազմակերպեց կոմյերիտական կոմիտեն: Կուրսերն անցկացրին հերթակազմակերպիչների ընտրությունից հետո: Կուրսերը կազմակերպվում եյին հողամասերում, գումարվում եյին շաբաթվա յերեք չորս հողամասերի հերթակազմակերպիչները: Կուրսերի ղեկավարին ղեկավարում եր կոմիտեն: Յուրաքանչյուր հողամասում անցկացվում եյին խմբկազմակերպիչների կուրսեր: Դրանց ղեկավարում եյին բջիջների քաղաքականապես ավելի զարգացած կոմյերիտական հարվածայինները: Կոմիտեն առաջուց ղեկեց այդ մարդկանց, ունեցավ նրանց հետ մի քանի խորհրդակցություն և ծրագրեր տվեց նրանց: Հերթակազմակերպիչների կուրսերում ընդգրկված եյին 60 կոմյերիտական, իսկ խմբակազմակերպիչների կուրսերում—150 հոգի:

Այսպիսով բջջային աշխատավորներ, հերթկազմակերպիչներ և խմբկազմակերպիչներ պատրաստող կուրսերն անցան 265 հոգի, այսինքն բոլոր կոմյերիտականների 30%-ը: «Գիգանտի» կոմյերիտը գարնանացանը դիմավորեց կոմյերիտական կազմակերպության վարի ողակների ղեկավարների քաղաքականապես և կազմակերպչորեն պատրաստված կազմով:

Կուրսերն անցան բացառապես հարվածային կոմյերիտականները, վորոնք նախաձեռնություն հանդես բերին իրենց աշխատանքում: Այդ իսկ պատճառով, գարնանացանի հենց սկզբից կոմյերիցական աշխատանքի հրամանատար դիրքերը, այսինքն բջիջների քարտուղարներից սկսած մինչև խմբկազմակերպիչներ, զբաղվում եյին արտադրությունն իմացող վստահելի յեվ ինիցիատիվայի տեր կոմյերիցականների ձեռքում: Բացի այս բոլորից, «Գիգանտի» կոմսոմոլը գարնան համար նախապատրաստեց 30 հոգի՝ կոլտնտեսներում կոմյերիտական աշխատանք տանելու համար:

Գարնանացանից առաջ, հողամասը դեռ դաշտ դուրս չեկած, ընտրվեցին բյուրոն և հերթակազմակերպիչները. արդեն բաշխված եյին պարտականությունները և կազմված եր կոմյերիտական աշխատանքի պլանը՝ ցանքսի տասնորյա հարվածային որերի համար (ընորոշ է, վոր յուրաքանչյուր կոմյերիտ բջիջ ինքն է կազմում յուրաքանչյուր տնտեսական կամպանիայի անցկացման պլանը): Այսպիսով կոմբերիտ աշխատանքի պլանը զուգորդվում է հերթական տնտեսական խնդիրների հետ և ամբողջովին ստորադասվում է նրանց:

Դեռ ցանքսից առաջ կոմյերիտականներն հավասարապես բաշխված եյին հերթապահությունների մեջ, բացի գիշերայիններից: Աշխատանքը գիշերային հերթափոխություններում ամենապատասխանատուն է ու բարդը. նա պահանջում է հատուկ հոգատարություն, տոկունություն և վոգեվորություն: Ահա թե ինչու կոմյերիտական բջիջներից շատերը ստեղծում եյին հարվածային, յերիտասարդ-կոմյերիտականների գիշերվա հերթափոխություններ: Հերթակազմակերպիչն ինքնուրույն աշխատավոր եր հերթափոխում. նա յեր ըստ եությունյան կոմյերիտ աշխատանքի ղեկավարը. նա յեր բջիջի բյուրոյի առջև պատասխանատուն հերթափոխության աշխատանքի համար: Յեկեք համառոտ կերպով պատմենք այստեղ հերթկազմակերպիչների, խմբկազմակերպիչների և բջիջի բյուրոյի ղեկավարության՝ գարնանացանի շրջանում ցույց տված՝ աշխատանքների փորձի մասին: Ասեն մի հերթափոխության մեջ կային հինգ խմբկազմակերպիչներ—կոմյերիտական աշխատանքն ագրեգատում կազմակերպողներ: Գարնանացանի որերին, աշխատանքից հետո անմիջապես, հերթակազմակերպիչը գումարում եր խմբկազմակերպիչների տասրոպեյական խորհրդակցություն: Խմբկազմակերպիչները ռապորտ եյին ներկայացնում ագրեգատի կացության մասին, աշխատանքի տեմպերի մասին, մեքենաների ջարդվածքների մասին, վերջապես աշխատանքի վորակի, ինչպես և վառելանյութի ծախսման մասին և այլն: Հերթափոխություններից մի քանիսը կազմակերպեցին փորձի կարմիր դիրք, վորի մեջ խորհրդակցության ժամանակ արձանագրվում եր հերթափոխության պահին ձեռք բերված արտադրական և մասսայական աշխատանքի ամբողջ փորձը:

Մի որ անցած յուրաքանչյուր հողամասում անցկացվում եր հանրահողամասային խմբկազմակերպիչների հավաք, ուր քննարկվում եյին յերկու որվա աշխատանքի արդյունքները: Այդ հավաքների առաջ տրվում եր հարվածային ագրեգատների և անհատ հարվածայինների հաշվետվություն, ստուգվում եր ցանքսի պլանի կատարումը և վառելանյութի ծախսումը:

Հավաքն ի մի յեր բերում յուրաքանչյուր ագրեգատի յերկորյա տնտեսական-քաղաքական աշխատանքի արդյունքները: Հետաքրքրականն այն է, վոր նման հավաքները մշակում եյին որվա չարիքը կազմող արտադրական այս կամ այն հարցերը: Հողամասային յուրաքանչյուր բջիջ ունի իր աշխատանքի ամեն որվա պլանը: Ճիշտ է, այդ պլանները խախտվում եյին, ցանքսի յուրաքանչյուր որը նոր հարցեր եր մտցնում կոմյերիտականների աշխատանքի որակարգում, բայց և այնպես աշխատանքի պլանայնությունը, ինչպես և հերթակազմակերպիչների և խմբկազմակերպիչների ղեկավարությունը պահպանվում եր:

Հերթակազմակերպիչը հինգ որը յերկու անգամ կամ մեկ անգամ կանոնավորապես հաշիվ եր ներկայացնում բջիջի բյուրոյին:

Կոմյերիտական բջիջի քարտուղարն ամեն որ ոպերատիվ հեռախոսագրեր էր ուղարկում խորհնտի կոմիտեյին։ Ցանքսի որերին կոմիտեյում գիշեր-ցերեկ հերթապահություն էր սահմանված, այնպես վոր բջիջն, ուզած ժամանակ, կարող էր հեռախոսով կապվել կոմիտեյի հետ։

Այստեղ, կոմիտեյում, հերթապահություն էր անում բյուրոյի մեկ անդամն ու շրջագայող հրահանգիչը, վորն ուղարկվում էր ճեղքված ունեցող հողամասերն ու հերթափոխությունները։ Գարնանացանի պահին կոմիտեն շրջապատեց իրեն արտահասիկային հրահանգիչների ցանցով, վորոնք հողամասերն էին սպասարկում։ Հրահանգիչներն այսպես էին բաշխում իրենց մեջ աշխատանքը. յերեք հոգին սպասարկում էին ցերեկվա հերթափոխությունները, իսկ չորսը-գիշերվանը, մեկ հրահանգիչ էլ ղեկավարում էր կոմյերիտականների աշխատանքն՝ արշավա-նորոգման արհեստանոցներում։

Հրահանգիչների միջև, կոմիտեյի բյուրոյի անդամների միջև, աշխատանքը բաշխված էր մանրամասնորեն։ Նրանցից յուրաքանչյուրն ուներ բոլշեվիկյան ցանքսի տասնորյա աշխատանքի պլանը։ Բոլոր հրահանգիչներն, ինչպես և կոմյերիտ բյուրոյի անդամներն ու քարտուղարը, շարունակ հողամասերումն էին գտնվում։ Դեռ ցանքսից առաջ կոմյերիտ կոմիտեն մոբիլիզացիայի յենթարկեց 15 հոգի հարվածային-ակտիվիստներ, վորոնք մինչև ցանքսի ավարտումը ամրացված էին հողամասերի բջիջներին։

Բոլշեվիկյան ցանքսը կոմյերիտական ղեկավարությունից պահանջում էր ճկունություն, պարզորոշություն և ամենագլխավորը—ոպերատիվություն աշխատանքի մեջ։ Գարունը—դա մի զորաճակատ է, տնտեսական հաղթանակը տանելու համար մղվող պայքարի զորաճակատը։ Ցեվ հաղթանակն էլ կախված է այն բանից, թե զորաճակատի ղեկավարները վորչափ շնորհով յեվ վարպետորեն կկարողանան ղեկավարել շարժումը։

Կոմիտեն մոբիլիզացիայի յենթարկվեց։ Ղեկավարության բոլոր թելերը նետված էին դեպի վար, մասսայի խորքերը։ Կոմյերիտ կոմիտեն ամեն ինչ ոգտագործեց հողամասերի հետ կապ պահպանելու համար։ Շատ բանում ռադիոն ոգնեց նրան։ Կոմյերիտ կոմիտեն հընդարյակում մի անգամ ռադիոյի միջոցով մրցակցություն էր անցկացնում հողամասերի բջիջների հետ։ Ռադիոյով տրանսլյացիա էին անում հարվածայինների փորձը, մասսայական աշխատանքի և աճման համար մղված պայքարի փորձը, կանխում էին ճեղքվածքները։ Ցանքսի որերին կոմյերիտը ռադիոյի միջոցով բաց թողեց ոպերատիվ 6 հատ տեղեկատու՝ կոմյերիտական աշխատանքի փորձի մասին։

Կոմյերիտ կոմիտեն հեռախոսի միջոցով ամեն որ հողամասային բջիջների քարտուղարների խորհրդակցություն էր գումարում։ Դա կատարվում էր շատ հասարակ կերպով։ Բոլոր հողամասերի հեռախոսները կապվում էին կոմիտեյի հեռախոսի հետ։ Բջիջի յուրաքանչյուր քարտուղար հերթով ու կարճ, 3-5 րոպե, ինֆորմացիա յեր անում որվա աշխատանքի արդյունքի մասին։ Բջիջների ռապորտներից հետո կոմիտեյի քարտուղարը կամ հերթապահը ընդհանրացնում էր աշխատանքի փորձը և նոր առաջադրանքներ էր տալիս, կանխում էր սխալները և հաղորդակից էր անում փորձի ամենափոքը մասնիկներին։ Յերեսուն-քառասուն րոպեյանոց այս խորհրդակցությունները նրանով են գնահատելի, վոր բոլոր բջիջներին էլ հնարավորություն են տալիս աշխատանքի փորձով փոխանակվելու և լավագույններին հենց աշխատանքի ընթացքումն էլ ոգտագործելու։

Շատ նոր բաների զարկ տվեց կոմյերիտ աշխատանքը դաշտերում։ Շրջադարձը դեպի արտադրությունը ստիպեց կոմյերիտ բջիջին լրջորեն զբաղվել արտադրական հարցերով ու խորը թափանցել արտադրության մեջ։

Կոմյերիտ աշխատանքի վերակառուցման գործում կոմյերիտականների ութերորդ հողամասն որինակելի ցեխ է հանդիսանում։ Կոմյերիտական ութերորդ հողամասի հարվածայինների նախաձեռնությամբ մտցված է յուրաքանչյուր ագրեգատի, իսկ ագրեգատում—յուրաքանչյուր կոմյերիտականի որական բաղկարգագիր (полит-наряд) տալու սիստեմը։ Աշխատանքից հետո հերթկազմակերպիչներին և խմբկազմակերպիչներին խորհրդակցության էր հավաքում քարտուղարը։ Այդ խորհրդակցություններում քննարկվում էին կոմյերիտական և արտադրական աշխատանքների վերաբերյալ ռապորտները, ինչպես և ցանքսի արտադրության թվական տվյալներն ու առանձին էլ յուրաքանչյուր կոմյերիտականի արտադրողականությունը։ Այսպիսով կարճատեվ (25 րոպեի չափ) խորհրդակցությունից հետո քարտուղարը տալիս էր առանձին ոպերատիվ առաջարկներ, հաշվի առնելով ամեն մեկ հերթափոխության և ագրեգատի արտադրական սպեցիֆիկ առանձնահատկությունները։ Բաղաքական կարգագիրների այս սիստեմը, ինչպես և կոմյերիտականների աշխատանքների, կարգագիրների ու գործնական առաջադրանքների սիստեմներն արագորեն փոխադրվեցին խորհնտի բոլոր հողամասերը։ Այս սիստեմը չափազանց արժեքավոր է նրա համար, վոր նա կենսական ե. որական առաջադրանքներ կյանքից են բղխում յեվ նեստաֆրբական են, իսկ ամենագլխավորը—նրանք կոնկրետ են, հետեվաբար յեվ նեստությամբ են կոնտրոլի յենթարկվում։ Կոմյերիտական ամեն որվա աշխատանքի կարգագրված լինելու այս սիստեմը, վոր գործադրվում է դաշտային աշխատանքի ամենայեռուն որերին, գնահատելի յե նրանով, վոր ամեն մի առանձին առաջադրանք միշտ կոնտրոլի տակ է։ Հետեվյալ որվա նոր առաջադրանքներից առաջ նախընթաց որվա կարգագրի կատարումն էր ստուգվում։

Շրջադարձը դեպի արտադրությունը բարձրացրեց բջիջների անտեսավարական նախաձեռնությունը։ Հարվածային-կոմյերիտականներին եյին հավասարվում ամբողջ հերթափոխությունը, հողամասը և նույնիսկ խորհտնտը։

Տնտեսական աշխատանքի ղեկավարն հանդիսանալով և տնտեսական ղեկավարության տեխնիկային տիրապետելով, կոմյերիտը կարողացավ իր հետևից տանել բանվորական անկուսակցական յերիտասարդությանը՝ ներգրավելով նրան կոմյերիտմիության մեջ։

Կոմյերիտմիության նախաձեռնությամբ ութերորդ հողամասում լայնորեն ծավալվեց սոցիալիստական մրցումը։ Սոցմրցումը կազմակերպված է հերթափոխությունների և միատեսակ աշխատանք կատարող մարդկանց միջև։ Որինակ, տրակտորիստը մրցում է տրակտորիստի հետ, յուղիչը—յուղիչի, խմբավարը—խմբավարի հետ։

Կոմյերիտականների մեծամասնությունն ընդգրկված է ամենատական պայմանագրերով։ Տրակտորիստները մրցում են իրար հետ։ Առաջադեմները բուքսիրի յեն վերցնում հետամնացներին, ազնում են վերացնելու այս ու այն տրակտորի աշխատանքի ճեղքվածքները, վորպեսզի կարող լինեն ապահովելու իրենց խմբի և հերթափոխության հաջողությունը։

Կոմյերիտական աշխատանքը վերակառուցված է։ Հաշվառված են հերթափոխությունների կոմյերիտականները։ Ընտրված են հերթակամակերպիչները, կոմսոմոլի նախաձեռնությամբ աշխատանքի պլանը հասցված եր յուրաքանչյուր ղեկակալի։

Ութերորդ հողամասի կոմյերիտները գործնականապես կենսագործում են շեֆությունը տրակտորների և նորոգման կետերի վրա։ Նորոգման կետում աշխատանք տանելու համար լավագույն հարվածային-կոմյերիտական և ջոկված։ Ավելի վորակյալ տրակտորիստները շեֆություն են անում ոչ միայն իրենց տրակտորի վրա, այլև շեֆություն են վերցնում պակաս վորակյալ ղեկակալների մեքենաների վրա։

Կուլտուր-մասսայական ընդարձակ աշխատանք է ծավալված, բաց է թողնված պատի թերթը։ Դարնանացանի ժամանակ վորոշված է ամեն մի հերթափոխում բաց թողնել փոքրիկ թռուցիկներ։ Ծավալված է ուսուցումը։

Ութերորդ հողամասում աշխատանքը մարտորեն և կառուցված։ Յերկրորդ հողամասի կոմյերիտականներն ել իրենց աշխատանքը կառուցին ութերորդի որինակով։ Հանդիպական պլանի կազմակերպման գործում նրանք նախաձեռնություն հայտարարեցին։ Կոմյերիտականները մոբիլիզացիայի յենթարկված համարեցին իրենց և կոմյերիտական հատուկ հերթափոխություն կազմակերպեցին։ Ամենադժվար աշխատանքը հանձն առավ կոմյերիտների այս հերթափոխությունը, այսինքն դիշերվա աշխատանքը։

Խորհտնտի տնտեսությունը կազմակերպելու և պլանավորելու նոր ձևերի վորոնման հետևանքով հողամասային շատ բջիջներ պլանային ոպերատիվ խմբեր ստեղծեցին։

Մեծ աշխատանք անցկացրեց ութերորդ հողամասի պլանային ոպերատիվ խումբը։ Այս աշխատանքին մասնակցում եյին յոթը լավագույն հարվածայիններ՝ կոմյերիտական-ագրոնոմի գլխավորությամբ։

Պլանային խումբը, դեռ դարնանացանը չսկսած, տափանման ու ցանքսի պլանը հասցրեց տրակտորներից յուրաքանչյուրին։ Ամեն մի տրակտորիստի հանձնում եյին պլանը, ուր մատնանշված եր, թե վորքան հարկավոր է ցանել ցանքսի ամբողջ ընթացքում, վորքան ցանել որական և թե ինչքան կտանա նա իր արտադրանքի համար։

Հուշագիր-պլանի այս ձևն անհրաժեշտ է։ Նույն փորձն ոգտագործելու յե նաև բերքահավաքի ժամանակ։ Հողժողկոմ Յակովլևը, «Գիգանտ» խորտնտում յեղած ժամանակ ասել եր՝ «Կոմբայնի աշխատանքի պլանը պետք է տրվի ամեն մի բանվորի ձեռքը՝ բերքահավաքը դեռ չսկսած։ Նրանց ձեռքը տրվելիք հուշագիր-պլանում անհրաժեշտ է նշել՝ թե վորքան գործավարձ է ստանալու բանվորն իր աշխատանքի համար։ Բանվորին հարկավոր է բացատրել, վոր նորմայից դուրս նրա մշակած յուրաքանչյուր հեկտարի համար նրան փոխհատուցում է տրվելու»։ Ահավասիկ այս պրակտիկ գործով է զբաղված պլանային-ոպերատիվ խումբը դեռ դարնանը։

Բերքահավաքի նախապատրաստման ,ասպարիզում հետաքրքրական աշխատանք անցկացրեց ութերորդ կոմյերիտ հողամասի ոպերատիվ խումբը։ Հողամասում հայտարարված եր բերքահավաքի նախապատրաստման վերաբերյալ առաջարկների հավաք, կոմբայնի բեռնվածության փորձի հավաք։ Կոմբայնիստներն ու ղեկակալները բերքահավաքի կազմակերպման գործում գնահատելի նորույթներ մտցրին։ Ղեկակալների պատասխաններն ընդհանուրի սեփականություն դարձավ և այս ձևով հավաքվեց անցած տարվա բերքահավաքի փորձը և պարզվեցին թե յեղած կորուստների և թե պարապուրդների և հացահատիկի փչացման պատճառները։

Ութերորդ հողամասը, պլանային խմբի նախաձեռնությամբ, անցած տարվա բերքահավաքի հեղինվածքների հաշիվը հերկայացրեց ամբողջ խորհտնտեսությանը։ Ութերորդ կոմյերիտական հողամասի հարվածայինները վորոշեցին յուրաքանչյուր կոմբայնի բեռնվածությունը, բերքահավաքի ամբողջ տևողության ընթացքում (20 որ), ավելացնել մինչև 700 հեկտար, այն ինչ անցյալ տարի ամեն մի կոմբայնի նորմը 500 հեկտար եր։

Համախորհտնտային արտադրական կոնֆերանսը ընդունեց ութերորդ հողամասի հարվածայինների առաջարկը և վորոշեց ամբողջ խորհտնտում յուրաքանչյուր կոմբայնի արտադրանքի նորմը բարձրացնել 700 հեկտարի։

Վեցերորդ հողամասի կոմյերիտների պլանային-ոպերատիվ խումբը համախորհտնտային բերքահավաքի պլանում բազմաթիվ արժեքավոր առաջարկներ մտցրեց։

Այս հողամասում, տնտեսական այս կամ այն հարցերը մշակելիս, ոպերատիվ խումբը կազմակերպեց նաև նրանց մասսայական քննարկումը բանվորական ժողովներում։ Կազմակերպում էր յերիտասարդական ռեյդեր՝ հողամասի տարեկան պլանի կատարումն ստուգելու համար։ Պլանային-ոպերատիվ խմբերն արտադրության մեջ հանդիսանում էին վորպես մարտական հարվածային բրիգադներ և բարձր տեմպերի որինակներ էին ցուցաբերում։

Կոմյերիտբջիջն իր պլանային ոպերատիվ խմբերի միջոցով ուսումնասիրում էր տնտեսական հարցերը և ֆուղակի մասնակցում էր տնտեսության պլանավորման և պլանը յուրաքանչյուր բանվորին հասցնելու գործին։

Ճիշտ է, պլանային-ոպերատիվ խմբերի կազմակերպումն ամենուրեք հաղթանակով չպսակվեց։ Տեղ-տեղ գործնական այս նախաձեռնությունը չկարողացան իրենց հողամասի արտադրական խնդիրների հետ կապել. ստեղծված խմբերը խորհտնտի հետ իսկական առնչություն չունեցող վերացական հարցերի ուսումնասիրությամբ էին զբաղված։ Բջիջներից մի քանիսը չըմբռնեցին նույն խմբերի նշանակությունը և միայն ձևականորեն ծնունդ տվին նրանց (կոմիտեյին հաշիվ տված լինելու համար)։ Ձևականորեն ստեղծված խմբերը, հարկավ, մեռնում էին դեռ չծնված։ Այս թերությունները հաշվի պետք է առնվեն բջիջների հետագա աշխատանքներում, վոր նվիրված են լինելու խորհտնտի արտադրության պլանավորմանը։

ՏԵՄՊԻ ՀԱՄԱՐ, ՎՈՐԱԿԻ ՀԱՄԱՐ

Արտադրական կոնկրետ խնդիրների լուծման նկատմամբ կատարված շրջադարձն ապահովեց կոմյերիտ կազմակերպության աճման տեմպի զգալի բարձրացումը։

Դարձանացանի որերին հարվածայիններից կազմված հատուկ մի խումբ ջոկվեց՝ կազմակերպության աճն ուսումնասիրելու համար։ Այս իսկ խմբի միջից ջոկված և աճի գործով զբաղված մի հրահանգիչ, վորը

գարնանացանի պահին ոգնում էր բջիջներին՝ անկուսակցական յերիտասարդության միջև աշխատանքը կազմակերպելու, ոգնում էր կոմյերիտմիության մեջ ընդունման գործը ձևակերպելու, ինչպես և աճման վերաբերյալ աշխատանքների փորձը հանրայնացնելու։

Աճման գործով զբաղվող հարվածայինների խումբը գործում էր կոմիտեյի ընդունման հանձնաժողովում և այդ հանձնաժողովի հետ միասին կազմակերպում էր բանվորական և կոլտնտային յերիտասարտության ներգրավումը կոմյերիտմիության մեջ։ Աճման փորձի տեղեկացույցներն ուղարկվում էին բջիջներին։ Ցանքի ընթացքում բջիջների միջև տեղի ունեցավ յերկու ռադիոկանչ։ Բացի սրանից, հաղորդվեց նաև լավագույն բջիջի աշխատանքի փորձը։ «Դիգանտի» կենտրոնական բազայից տրանսլյացիայով հաղորդվեց յոթերորդ հողամասի կոմյերիտական բջիջի քարտուղար ընկ. Բալդինի զեկուցումը. այդ հողամասում բանվորական ամբողջ յերիտասարդությունն, առանց բացառության, մտավ կոմյերիտմիության մեջ։

«Դիդանտ» խորհտնտի կոմյերիտն ընդարձակ աշխատանք ծավալեց՝ բանվորական և առաջավոր կոլտնտային յերիտասարդությանը կոմսոմոլում ներգրավելու համար։ Աճման համար մղվող ամենորյա պայքարում կոմյերիտի կողմից առաջադրվեցին անկուսակցական յերիտասարդության միջև տարվելիք աշխատանքի բազմաթիվ նոր և հետաքրքրական ձևեր։ Ցանքսի տասն որում «Դիդանտի» դաշտերում աշխատող բանվորական և առաջավոր կոլտնտեսային յերիտասարդության միջից 200 հարվածայիններ լցվեցին կոմյերիտականների շարքերը։ Այսպիսի հաղթանակներ ձեռք բերվեցին շնորհիվ այն բանի, վոր հավաքագրման աշխատանքի կենտրոնը՝ հերթափոխություններում և տրակտորների վրա յեր գտնվում։

Կոմյերիտական ութերորդ հողամասում յուրաքանչյուր տրակտորի ամրացված էր անկուսակցական յերիտասարդների միջև տարվող աշխատանքի կազմակերպիչը, վորն անցկացնում էր հավաքագրման աշխատանքը։ Այս իսկ ընկերը՝ մասսայական աշխատանք էր տանում իր ագրեգատում, զրույցներ էր անցկացնում, ընթերցումներ և տեխնիկական ու քաղաքական հանրամատչելի բրոշյուրների վաճառումներ էր կազմակերպում։

Կոմյերիտական զեկավարին էր հանձնարարվում տեխնիկական ուսուցման ծավալումը սերմացանների միջև։ Յուրաքանչյուր տրակտորի կից տեխնիկային տիրապետելու խմբակ է կազմակերպված։ Այդ խմբակներում ընդգրկված էին 80 հոգի կոլտնտեսային յերիտասարդներ, վորոնք ութերորդ հողամասում էին աշխատում։

Ցանքսի ընթացքում կոմյերիտականները յուրաքանչյուր կոլտնտեսականի կարողացան ծանոթություն տալ բարդ տրակտորի, «Կա-

տերպիլերի» մասին։ Ցանքսի պրոցեսում կոլտնտի յերիտասարդության միջից առաջ քաշվեցին լավագույն հարվածային սերմանիչները՝ յուղիչների աշխատանք կատարելու համար և թողնվեցին խորհտնտում։

Ութերորդ հողամասում միայն աշխատանքի համար թողնվեցին 25 հարվածային կոլտնտեսականներ։ Այս 25 հոգի հարվածայինները բոլորն ել կոմյերիտ շարքերը մտան և ակտիվ մասնակիցներ դարձան խորհտնտի ընդհանուր քաղաքական ու տնտեսական կյանքին։

Կադրերի անընդհատ նախապատրաստման այս մեթոդը փոխադրվեց նաև մյուս հողամասերը։

Անկուսակցական յերիտասարդության միջև տարված աշխատանքի արժեքավոր փորձ ունի յերկրորդ հողամասի կոմյերիտական գիշերային հերթափոխությունը։ Յերբ հերթափոխության հարվածայիններն իմացան, թե վոր կոլտններից պետք է մարդիկ ջոկվեն իրենց դարմանացանի համար, խնդրեցին բրիգադներ ուղարկեցին այդ կոլտնտները՝ մասսայական աշխատանք տանելու համար։ Դեռ ցանքսը չսկսած՝ ուղղակի կոլտններում ստեղծվեցին կոլտնտեսականներից կազմված հարվածային բրիգադներ։ Ցանքսից առաջ կոլտնտեսականները բաշխվեցին ու ամրացվեցին շարքացաններին և աշխատանքի պրոցեսներին ծանոթացան։

Ցանքսից առաջ կոմյերիտականներն իրենց հողամասում անցկացրին կոլտնտեսային յերիտասարդության հավաք, ուր տրվեց լավագույն հարվածայինների աշխատանքի հաշիվը, մանրամասն բացատրվեցին սոցմրցման խնդիրները և կոլտնտեսականներից փոխհսկողության բրիգադ ստեղծեցին։ Փոխհսկողության կազմակերպումը շատ բան ավեց։ Կոլտնտեսականներն ուշադրությամբ հետևում եյին շարքացանին, խնամքով եյին վարվում սերմացվի հետ։ Շարքացանները լցնելու ժամանակ փոխհսկողության բրիգադի հարվածայինները սերմացուն թափում եյին շարքացանի մեջ՝ առանց տրակտորը կանգնեցնելու։ Փոխանակ 12 րոպեյի, վոր շարքացանները լցնելու համար, հանդիպական պլանի կարգով, սահմանել եյին կոմյերիտականները, փոխհսկողության բրիգադի հարվածայինները նույնը կատարում եյին 2-3 րոպեյում (բանվորական պլանով տրակտորը լցնելու համար նախատեսված է 24 րոպե)։ Խնամքոտ վերաբերմունքի շնորհիվ հարվածայինները կարողացան կանոնավոր կերպով ոգտագործել տրակտորներն ու շարքացանները։ Ցանքսի ընթացքում, չնայած, վոր կոմյերիտականների հերթափոխությունը գիշերներն եր աշխատում, շարքից դուրս չեկավ վոչ մի տրակտոր, վոչ մի շարքացան։ Մինչդեռ խորհտնտում տեղի եյին ունենում կցանքների և ժարկերների մասսայական կոտրվածքներ, յերկրորդ հողամասի կոմյերիտական հերթափոխում վոչ մի կոտրվածք չպատահեց։ Ցանքսից հետո յել ժարկերներն ու կցանքները պետք եր մնացին աշխատանքի համար և կրկին նորոգման չտարվեցին նրանք։

Կոմյերիտական գիշերային հերթափոխությունն առաջին տեղը գրավեց հողամասում։ Հարվածայիններին մեծամասնությունը պարգևատրվեց։ Կոլտնտեսային վողջ յերիտասարդությունը, վոր այդ հերթափոխումն է աշխատում, ներգրավված է կոմսոմոլում և թողնված է խորհտնտում՝ միայն աշխատանք տանելու համար։

Հետաքրքրական է տասներորդ հողամասի կոմյերիտականների փորձը։ Այստեղ կազմակերպված է աճի սոցմրցման տախտակ։ Ամեն որ այդ տախտակի վրա հայտարարվում են հերթափոխությունների միջև տեղի ունեցող սոցմրցման արդյունքները։

Յոթերորդ հողամասի բջիջը, բացի նրանից, վոր կարողացել է բանվոր յերիտասարդներին 100 տոկոսով կոմսոմոլի մեջ ներգրավել, մեծ աշխատանք է տարել նաև կոլտնտեսականների միջև։ Սալսկի ռայոնի կոլտններից մեկում հողամասի կոլտնտեսականները բջիջ կազմակերպեցին։ Խորհտնտի կոմյերիտականներն ոգնեցին կոլտնտին դործավարձակինի անցնելու և աշխատանքը կազմակերպելու։ Ստեղծեցին կոմյերիտականների հատուկ խումբ՝ անհատականներին կոլտընտների մեջ հավաքագրելու համար։ Կոմսոմոլի հեղինակությունն զգալի չափով մեծացավ կոլտնտում։ Կոմյերիտմիությունն ամեն որ դիմումներ եր ստանում լավագույն հարվածային կոլտնտեսականներից։ Բջիջին առընթեր կազմակերպվեց նախաձեռնության խումբ, վորը գեխեռում, յերիտասարդության միջև, մասսայական քաղաքական աշխատանք ծավալեց։ Աշխատանքից հետո յուրաքանչյուր կոմյերիտական բացատրում եր իր ընկերոջը, թե ինչու յե պետք կոմյերիտ շարքերը մտնել և թե վորպիսի խնդիրներ են դրված ներկայումս կոմսոմոլի ու բոլանդակ յերիտասարդության առջև։

Անկուսակցական տղաներին քաղդպրոցներն եյին ընդդիմել։ Նրանք մշակում եյին Համամիութենական 9-րդ համադումարի վորոշումները։ Արտադրության մեջ իրենց ունեցած հարվածային աշխատանքի շնորհիվ նրանք հեղինակություն ձեռք բերին յերիտասարդության աչքում։

Անկուսակցական ջահելներն սկսեցին դիմումներ տալ՝ կոմսոմոլ ընդունվելու համար։ Իրենց ընդունելությունը նրանք ամրացնում են հարվածային աշխատանքով արտադրության մեջ։

Պարխոմենկոյի կոմյերիտական խմբից յերեք հարվածային կոմսոմոլ են ընդունված։ Կոմյերիտական այս բրիգադը կոմբայնների նորոգման գործում առաջին տեղն և բռնել։ Յուրաքանչյուր կոմբայնի նորոգման համար 145 ժամվա տեղ գործադրված է 131 ժամ։

Մայիսի 1-ից մինչև 15-ը բջիջը կոմսոմոլ ընդունեց արհեստանոցներից 31 հատ լավագույն հարվածային յերիտասարդ։

Անկուսակցական յերիտասարդներին կոմսոմոլի մեջ ներգրավելու գործում «Գիգանտի» կոմյերիտմիությունը մասսայական աշխատանքի թանկարժեք փորձ կուտակեց։ Ներկայումս խորհանտի կոմյերիտական կազմակերպությունն իր շարքերում ունի մինչև 900 հոգի։

Սակայն անկարելի է լռել այն թույլ աշխատանքի մասին, որ ցուցաբերված է կոմյերիտներին կուսակցության մեջ ներգրավելու գործում։

«Կոմսոմոլը կուսակցության ահի հզոր ռեզերվն է հանդիսանում։ Սակայն այդ ռեզերվը մինչև որս դեռ հարկավոր չափով չի ոգտագործված», ասաց Կաղանովիչը 9-րդ համագումարում։

Սա ամբողջովին բնորոշում է թե «Գիգանտի» կոմյերիտմիության և թե կուսակցական կազմակերպության կոմյերիտներին կուսակցության մեջ ներգրավելու ասպարիզում ունեցած աշխատանքը։ Վերջին յերկու ամսում մոտ 20 հոգի յեն միայն հանձնված կուսակցությանը։ Պլանային աշխատանք չի տարվում։ Անմիջապես պետք է ուղղել այս։

«Պատվի ու փառքի, արիության ու հերոսության խնդիր է այս»։

Միայն աշխատանքի արտադրողության բարձրացմանը չէ, որ նըպաստում է մրցումը։ Սոցմրցումն ու հարվածայնությունն այն դրոշն է, որ աշխատանքը հաղթահարելու համար մասսաներին դեպի կռիվ է առաջնորդում, մի կռիվ, որ բանվորները՝ դեռ յերեկ գյուղից յեկած՝ մղում են կորղողների, քյալլագյոզների, դասակարգային թշնամու այդ ագենտների դեմ։

«Կուլակները միայն,—ասում էր Ստալինը 16-րդ կուսհամագումարում,—չեն տեսնում այն ահագին բեկումը, որ առաջ է յեկել մասսաների հոգեբանության մեջ, ինչպես և դեպի աշխատանքը նրանց ունեցած վերաբերմունքի մեջ, բեկում, որ հիմնովին փոխել է մեր գործարանների և ֆաբրիկների կերպարանքը։ Դեռ շատ ժամանակ չէ, մեր մեջ կային մարդիկ, որոնք ասում էյին, թե մրցումն ու հարվածայնությունը ժամացածին և անհիմն բաներ են։ Ներկայումս այդ խելքները նույնիսկ հեգնանքի յել չեն արժանանում—նրանց պարզապես իրենց դարն անցրած իմաստակների տեղ են դնում։ Մրցումն ու հարվածայնությունն այսոր արդեն նվաճված են և ամրապնդված»։

Յեվ քիչ հետո Ստալինը մատնացույց է անում. «Մրցման գործում վոչ պակաս նշանակալից է այն փաստը, որ մրցումը տարածվել է սկսում նաև գյուղում, նվաճելով սիանգամայն մեր խորհտնտներն ու կոլտնտները։ Ամենքին հայտնի յեն աշխատանքային իրական ենտուզիազմի բաղմաթիվ փաստերը խորհտնտեսականների և կոլտնտեսականների միլիոնավոր մասսաների միջև»։

Ինչո՞ւմն է կայանում աշխատանքի այդ ենտուզիազմը։

Նրանում, որ մրցման շնորհիվ «ամոթալի և ծանր բեռ լինելու փոխարեն աշխատանքը դարձել է պատվի ու փառքի, արիության ու հերոսության խնդիր»։ Նրանում, որ հենց իրենց՝ հարվածայինների կողմից սոցիալիստական վերաբերմունք էր հայտարերվում դեպի աշխատանքը, մի վերաբերմունք, որ անդրադառնում էր ինչպես աշխատանքի արագ տեմպերի, այնպես էլ դեպի մեքենաները տածած խնամքի և արտադրական փոխադարձ ոգնության վրա։ «Գիգանտ» խորհտնտի կոմյերիտականները սոցմրցման մեջ առաջին տեղը գրավեցին. նրանք եյին արտադրանքի հանդիպական բարձրացրած նորմաների նախաձեռնարկները ցանքսի և տափանման ասպարիզում. կոմյերիտականներն եյին, որ պայքարում եյին կիզանյութի տնտեսման համար։ Յեվ կոմյերիտականները միշտ գնում եյին առջևից՝ արտադրական աշխատանքում առաջնություն նվաճելով։

Յոթերորդ հոդամասում մրցում է հայտարարված։ Հարվածայիններն անձնվիրաբար կռվում են գարնանացանի ասպարիզում առաջնություն գրավելու համար։ Ներկայումս արդեն հնարավոր է վորոշել, վոր առաջնությունը նրանցն է։ Առաջնության մասին թվերն են խոսում։

Խորհտնտի յերեկվա բատրակ ու այսորվա հարվածային ղեկավար կոմյերիտ Լեդնևի անունը ցուցակում կարմիր մատիտով է ընդգծված։

Գարնանացանի որերին Լեդնևը ցանեց 381 հեկտար։ Այս աշխատանքի համար հարկավոր էր 68 ժամ, այն ինչ նա վերջացրեց 42 ժամում։ Ամեն մի հեկտարի համար նա 2,2 կիլոգրամ կիզանյութ ծախսեց։ Դա նշանակում է, որ մեկ հեկտարից ստացվել է 1 կիլոգրամ տնտեսում. դա նշանակում է, որ հարվածային Լեդնևը ցանքի ընթացքում 381 կիլոգրամ սև վոսկի յե տնտեսել, վորը ներկայումս ձեռք է բերվում թանգ գնով։

Բայց Լեդնևը հասկանում էր, որ հարկավոր է վոչ միայն ընթանալ մրցման առաջին շարքերում, այլև ոգնել ուրիշներին, վորպեսզի ընդհանուր վերելք ձեռք բերվի։ Հարվածային Լեդնևը լավ գիտե կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի նակաղն այն մասին, թե «սոցիալիստական մրցման սկզբունքն այն է, որ առաջավորներն ընկերական ոգնություն ցույց տան հետամնացներին, վորպեսզի հնար լինի ընդհանուր վերելք ձեռք բերել» և Լեդնևը բուքսիրի յեր վերցնում հետամնացներին։

Սակայն Լեդնևներ շատ կան յոթերորդ հոդամասում։ Նրանց թիվը տասնյակներով է։ Ահա ձեզ կոմյերիտական Սալոպով Վասյան։ Սրա աշխատանքը նշող թվերը վկայում են, որ նա հարվածային է։ Սալոպովը 411 հեկտարը ցանել է վոչ թե պլանով պահանջված 80 ժա-

ում, այլ 59 ժամվա մեջ։ Հանդիպական պլանը գերակատարեց նա։ Սոցիալիստական աշխատանքի որինակներ տվեց նա։ Ցանքի ամբողջ ընթացքում Սալոպովը տվեց կիզանյութի նորման։Ցանքի սկզբում Սալոպովը անհատական մրցման մեջ մտավ հարվածային Վդովենկոյի հետ։ Յերկու մրցակիցներն էլ գարնանացանի ասպարիզում առաջնություն ձեռք բերին։

Հանդիպական պլանը գերակատարեց նաև հարվածային Կրեշչենկոն։ Տափանման ընթացքում նա մի ժամում 6 հեկտար ավելի տափանեց։ 562 հեկտար տափանելու համար նա գործ դրեց 72 ժամ։ Տընտեսեց կիզանյութը։ Յոթերորդ հողամասի հարվածայինները նույնպիսի ենտուզիազմով պայքարում են նաև կոլտնտեսային դաշտերում։

Սոցմրցմամբ ընդգրկված է ամբողջ յոթերորդ հողամասը։ Այստեղ սոցիալիստական պայքար է մղվում առաջնության համար։ Ամեն մեկն ուզում է առաջնությունը ձեռք բերել, վորովհետև հացահատիկի սոցիալիստական ֆաբրիկայի հարվածայինի համար առաջնությունը «պատվի ու փառքի, արիության ու հերոսության խնդիր է»։

Շատ հետաքրքրական են հերթափոխությունների փորձը՝ սոցիալիստական մրցման և նրա հաշվառման ասպարիզում։

Յոթերորդ հողամասում սոցմրցումն ընդգրկել է բոլոր բանվորների 90%-ը։ Մրցման ղեկավարն արտադրական ժողովի նախագահն է, վորին ոգնելու համար ջոկված է մեկ կոմյերիտական։ Արտադրական հանձնաժողովի նախագահը վարում է սոցմրցման արդյունքների հաշվառումը, ինչպես և յուրաքանչյուր հարվածայինի աշխատանքի վորակի ու քանակի հաշվառումը, ստուգում է անհատական պայմանագրերը, գումարում է հերթափոխային արտադրական խորհրդակցություններ։ Խոշոր նվաճումներ է արել անշուշտ հերթափոխային արտադրական խորհրդակցություններ կազմակերպելու փորձը։ Այդ փորձը պետք է փոխադրել խորհրդի յուրաքանչյուր հողամասը։

Յոթերորդ հողամասում, հնգորյակում մի անգամ, գումարվում է հողամասային արտադրական խորհրդակցություն, վորը լսում է հերթափոխային արդյունքների մասին, հաշվի է առնում տնտեսական բոլոր ճեղքվածքները, քննարկում է լավագույն հարվածայինների աշխատանքի փորձը։ Հերթափոխային արտադրական խորհրդակցությունները գումարվում են ամեն որ և քննարկում են յուրաքանչյուր ղեկավարի, յուղիչի և սերմացանի կատարած աշխատանքի արդյունքները։

Հերթափոխային արտադրական խորհրդակցություններում լսվում են աշխատանքի նորման գերակատարած և կիզանյութի տնտեսումը ձեռք բերած լավագույն հարվածայինների հաշիվները։ Այս փորձն ոգտագործում են նաև տրակտորները։ Հենց այստեղ էլ քննարկվում է պլանը չկատարող վատթար ղեկավարի աշխատանքը։ Արտադրական

խորհրդակցությունը կոնկրետ որինակներով յուրաքանչյուր ղեկավարին սովորեցնում է խնամքով վարվել տրակտորի հետ, ոգտագործել առաջավորների փորձն՝ իր գործնական աշխատանքում կիրառելու համար։

Հերթափոխությունները շատ լավ են անում, վոր արտադրական խորհրդակցություններն անցկացնում են աշխատանքը դեռ չկտրված, վորպեսզի առաջ քննարկվի նախընթաց որվա աշխատանքի և ապահեռևյալ աշխատանքի պլանն ուրվագծվի։ Արտադրական խորհրդակցություններն անողորմաբար խարազանում են քայլադյողներին ու կորզողներին, կիրառելով կորզողների նկատմամբ դաստիարակչական միջոցներ, աշխատելով վերադաստիարակել նրանց, ոգնել նրանց աշխատանքում։ Բայց յեթե մարդն անուղղելի յե, հարվածայինները վտարում են նրան իրենց շարքերից։ Ահա որինակներ—Դրոնյա անունով մի ղեկավար իրեն հարվածային հայտարարեց, բայց գործնականում յերևվաց, վոր նա կեղծ հարվածային է։

Մի անգամ Դրոնյան՝ տրակտորը կիզանյութ չլցրած դաշտ դուրս յեկավ, առանց հետը կիզանյութ ունենալու, և զուր ճամբա յեր կտրել տալիս տրակտորին։ Նման դեպքեր հաճախակի եյին տեղի ունենում։ Վերջապես, յերբ Դրոնյան կոլտնտեսային դաշտերն եր անցնում աշխատանքի, տրակտորով ջարդեց ճզմիչը։ Նա միանգամայն անփույթ եր դեպի տրակտորը։ Դրա համար էլ հարվածայինները նրան քշեցին իրենց բրիգադից։

Դուրս անելով կորզողներին և կեղծ հարվածայիններին, արտադրական խորհրդակցությունը լավագույն հարվածայիններին պարգևատրում եր, նույնիսկ ցանքի պրոցեսում, ամեն կերպ խրախուսելով նրանց արտադրական նախաձեռնությունը։

Սոցիալիստական մրցումն ու հարվածայնությունը յուրաքանչյուր հողամասի, յուրաքանչյուր խմբի և ագրեգատի աշխատանքի հիմնական մեթոդն են դառնում. գարնանացանի որերին մրցմամբ ընդգրկված եր արտադրության մեջ յեղած կոմյերիտների 90 տոկոսը։ Հատկապես արժեքավոր է սոցիալիստական մրցումն այն ժամանակ, յերբ կազմակերպված է նաև նրա արդյունքների ստուգումը. մրցման արդյունքներին կարևոր է վերահասու լինել հենց աշխատանքի պրոցեսում, վորպեսզի ամենքն էլ տեսնեն, թե ով է առջևից գնացողը, ով է առաջնությունը գրավողը և ումն իրենք պետք է հավասարվեն։

Արդյունքները կարևոր են նաև նրա համար, վոր տեսնեն, թե ուր և վոր հողամասում ծայր է առնում ճեղքվածքը, շոշափելի ճեղքվածքների կարելիությունն ստեղծող «նեղ տեղերը», վորպեսզի ճեղքվածքների առաջն առնվի և ժամանակին մոբիլիզացիա արվի՝ դժվարությունները հաղթահարելու համար։ Յեվ ահա հերթափոխությունը

վորոշեց անցնել անհատական մրցակցության։ Հետաքրքրականն այստեղ այն է, վոր անհատական մրցման մասնակցում էին գլխավորապես ըստ պրոֆեսիայի, որինակ՝ դեկակալը մրցում էր դեկակալի հետ, սեմացանը—սեմացանի հետ յեվ յուղիչը—յուղիչի հետ։ Այս սիստեմի շնորհիվ ավելի լավ կարելի յե կազմակերպել մրցման ստուգումը։ Աշխատանքից հետո հարվածայիններն իրենք էին ստուգում մեկը մյուսի՝ մի որում կատարած աշխատանքը։ Մրցման այս սիստեմը նրանով է լավ, վոր նա հարկադրում է ամեն մի հարվածայինի ուսումնասիրել յեվ իմանալ իր արտադրական աշխատանքի յուրաքանչյուր որվա ցուցանիշները թե վորակի յեվ թե քանակի կողմից։ Ցեվ վոչ միայն իր աշխատանքը, այլյեվ աշխատանքն այն ընկերոջ, վորի հետ նա մրցում է, իսկ սա հնարավորություն է՝ տալիս ոգտագործել միմիանց աշխատանքի փորձը։ Յուրաքանչյուր հարվածային հնարավորություն ունի ամեն որ տեսնելու, թե իր յեվ թե իր ընկերոջ աշխատանքի պտուղները։ Անհատական մրցմամբ ընդգրկված եր խորհտնտի կոմյերիտականների կեսը։ Հողամասերից շատերում տեխնիկային տիրապետելու ուղղությամբ մրցում ծավալվեց։

Ցերկրորդ հողամասում, յուրաքանչյուր տրակտորիստին ամրացրին մի նորընծա կոլտնտեսական. բաժանում էին տրակտորի կազմությունը բացատրող հանրամատչելի գրքույկներ։ Դեկակալն ամեն որ առաջադրանք եր տալիս, թե ինչ է հարկավոր մշակել տրակտորի մասին, նրա վոր բաղկացուցիչ մասն է հարկավոր փակել։ Ազատ բոպեին տրակտորիստը շեֆարկյալ կոլտնտեսականի հետ միատեղ պարապում էին տեսական ուսողությամբ։

Տեխնիկական ուսողությունը սերտորեն կապված է գործնական աշխատանքի հետ։ Կոմբայնների նորոգման աշխատանքից շատ բան շահեցին կոլտնտեսականները։ Նորոգման ժամանակ ահագին հնարավորություն է ստեղծվում գործնական վարժություն ձեռք բերելու համար։ Ցանքի ժամանակ «ձեռաց» տրակտորիստներ պատրաստվեցին կոլտնտեսականների միջից։ Ցերկրորդ հողամասը պատրաստեց 15 տրակտորիստ, վեցերորդը—10 տրակտորիստ, ութերորդը—28, տասնչորսերորդը—18 տրակտորիստ։ Կոլտնտում տրակտորիստների կուրսերն անցան կոլտնտի յերիտասարդներից ընդամենը 200 հոգի։

Սակայն տեխնիկական արշավի իմաստն այս չէ միայն։ Հիմնական խնդիրը նրանումն եր, վոր տրակտորիստների հիմնական կադրերի տեսական գիտելիքներն ընդլայնվեն, վոր տրակտորի առավելագույն բեռնավորման և յեռահերթ աշխատանքի դեպքում տրակտորիստները կարողանան ավելի լավ շահագործել տրակտորը։

Ցեվ բնորոշն այն է, վոր հնամաշ և յերկու անգամ նորոգված տրակտորային պարկն այս գարնանը տվեց տրակտորի պարապուրդի

նվազագույն քանակը. տվեց «Դիգանտի» համար տակավին չտեսնված արտադրողականություն։

Տրակտորի տեխնիկային տիրապետելու ձևերը բառի բուն նշանակությամբ ամեն որ էին ծնվում։ Համարյա բոլոր հողամասերն էլ ունեին տեխնիկական վարժությունների բազմազան ձևեր։ Վեցերորդ հողամասի կոմյերիտականներն իրենց վարժության համար ոգտագործեցին արտադրական խորհրդակցությունները, վորոնք տեխնիկային տիրապետելու դաշտային համալսարաններ դարձան։ Արտադրական խորհրդակցություններ ամեն որ էին տեղի ունենում հերթափոխությունների։ Հարցեր էին դրվում առանձին տրակտորիստների մասին, ինչպես յեվ տրակտորի առանձին ջարդվածքների մասին, մերկացվում էին վատար աշխատանքի պատճառները։ Քննարկվում եր ամբողջ հերթափոխությունը. փորձառու—հարվածայինները հաղորդում էին իրենց աշխատանքի փորձերի մասին։ Քննարկվում եր այս կամ այն հարվածայինի աշխատանքը։ Վեցերորդ հողամասի յերիտասարդական հերթափոխության մեջ, արտադրական խորհրդակցության ժամանակ միշտ քննարկվում եր լավագույն հարվածայինների աշխատանքը։

Ահա շատերից մի որինակ։

Խորհրդակցությունը գումարվեց աշխատանքից հետո անմիջապես։ Նիստը բացողը կոմյերիտական Կովալենկոն եր հերթափոխի արտադրական խորհրդակցության կազմակերպիչը։

Արագությամբ ի մի բերեցին որվա ցանքի արդյունքների հանրագումարը։

Բանից դուրս յեկավ, վոր կոմյերիտ Սերովը հերթափոխության մեջ առաջին տեղն է գրավել։

Կովալենկոն հայտարարում է.—

— Այսոր մենք կքննարկենք Սերովի արտադրական աշխատանքը. նա յերրորդ որն է, վոր 60-ական հեկտար է մշակում։ Վո՞րն է Սերովի բարձր տեմպերի «գաղտնիքը»։

Սերովը ռապորտ է տալիս.—

— Տրակտորի հարդարումը մենք կատարում ենք աշխատանքից առաջ։ Յուղում ենք և կիզանյութը լցնում աշխատանքի ընթացքում, բանալիս։ Շարքացանները լցնում ենք առանց տրակտորը կանգնեցնելու։ Հենց վոր մոտենում ենք սերմացվի պաշարատեղին, յես տալիս եմ ազդանշանը։ Բոլոր սերմացանները, մի ակնթարթում, վազում են դեպի սերմացվի պունկտը։ Այստեղից վերցնում են պարկերն ու թափում շարքացանի մեջ հենց աշխատանքի ընթացքում։ Իմ տրակտորս պարապուրդ ասածդ չդիտե։ Այսոր յես ցանեցի 61 հեկտար։

Յերիտասարդների վողջ հերթափոխությունն ոգտագործեց Սերովի փորձը։ Կազմակերպվեցին շարքացանը լցնելու կոնվեյերական սիս-

տեմ—տրակտորի մոտորը մի ոտքե չեր պաղում։ Յերիտասարդական հերթափոխության արտադրողականությունը բարձրացավ։ Յուրաքանչյուր տրակտորիստ ցանում եր 48 հեկտար, հետևապես ցանքի նորման դերակատարում եր որական 6 հեկտար։ Նպատակին հասել են. բոլշեվիկյան տեմպերը նվաճվում են։ Սակայն ձեռք բերվածով չեն բավարարվում յերիտասարդական հերթափոխության հարվածայինները։ Նրանք պատասխանատու յեն համարում իրենց գիշերային այն հերթափոխության պարապուրդների համար, որի հետ իրենք մրցում են։

Գիշերվա հերթափոխությունը ցանքի ֆրոնտում պարտական և հավասարվել յերիտասարդներին։ Զի՞ որ «սոցիալիստական մրցման սկզբունքն այն է որ առաջավորներն ողնություն ցույց տան հետամնացներին, որպեսզի հնար լինի ձեռք բերել ընդհանուր վերելք» (Ստալին) և յերիտասարդական հերթափոխությունը բուքսիրի յե վերցնում գիշերայինին, հետամնացին։ Նա իր ուրինակի ուժով, իր փորձի փոխադրումով խթանում է հետամնացներին։ Յերիտասարդական հերթափոխության բուքսիրի վերցնելու գործում այն է գնահատելին, որ իսկույն հարց դրվեց, թե ինչո՞ւ յեք հետ մնում։

Արտադրական աշխատանքը հետաղոտելու համար յերիտասարդների հերթափոխությունը ջոկում է հարվածայինների բրիգադ։ Բրիգադը կրիայի տեմպերի պատճառներն է մերկացնում, ուսումնասիրում և պարապուրդների և ջարդվածների պատճառները։ Պարզվում է, որ գիշերվա հերթափոխության մեջ դիմադրությունը վերացված է ձևականորեն։ Համարյա ամեն որ տեղի յե ունենում տրակտորիստների տեղահանություն և տեղափոխություն։ Զափազանց շատ ժամանակ են կորցնում շարքացանները լցնելու համար, շատ պարապուրդ է լինում։

Յերիտասարդների հերթափոխությունը գումարում է յերկու հերթերի միացյալ խորհրդակցություն, որտեղ քննարկում է պարապուրդների պատճառները։ Այստեղ փոխանակվեցին փորձերով, ուրվագծեցին արտադրական թերացումների վերացման ուղիները։ Յերիտասարդների հերթափոխությունը տեխնիկական շեֆություն վերցրեց տրակտորիստների վրա, ջոկեց վորակյալ աշխատավորներ՝ տեխնիկական ուսուցում առաջ տանելու համար, ծավալեց մասսայական ընդարձակ աշխատանք։

Յեվ արդեն ցանքի վերջերին, մրցման մասնակցող բրիգադը հավասարվեց առաջավորներին։ Նա կես հեկտարի չափ դերակատարեց նորման։ Տրակտորի յուրաքանչյուր կցանքը 42-ի փոխարեն ցանում եր 42 և կես հեկտար մի հերթափոխում (8 ժամ աշխ. որ)։

Այսպես են յերիտասարդական բուքսիրի արդյունքները, այսպես և «Գիգանտի» յերիտասարդ բոլշևիկների վերաբերմունքը դեպի աշխատանքը։ Կարելի յե մեջ բերել և ուրիշ որինակներ սոցիալիստական այսպիսի վերաբերմունքի դեպի աշխատանքը։

Ահավասիկ կոմյերիտականների մեջ կնքված մրցման արտադրական պայմանագրերը։ Այս պայմանագրերը վկայում են, վոր հարվածային, մրցման մեջ մտնելով իր ընկերոջ հետ, հասկանում եր, վոր յեթե ինքն աշխատում է հարվածայնորեն, դրանով իսկ նա ոգնում է խորհտնտային հնգամյակը յերեք տարում կատարելուն։

«Յես, կոմյերիտական, Ֆ. Ա. Որբակովս, գտնում եմ, վոր մրցումը լավագույն մեթոդ է խորհտնտային հնգամյակը յերեք տարում կատարելու և տնտեսությունը սոցիալիստական ուղիով վերակառուցելու գործում։ Ցանքի կամպանիայի ընթացքում համարում եմ ինձ հարվածայնորեն մոբիլիզացիայի յենթարկված և պարտավորվում եմ լավապես խնամք տանել մեքենային, ավելի լավ վարվել կցված գործիքների հետ, արտադրանքի նորման դերակատարել 20 տոկոսով, պայքարել արտադրանքի վորակի համար, կիզանյութի 15 տոկոս տնտեսում ունենալ և վերջ տալ պարապուրդներին։ Պայմանագիր կնքելու կոչ է անում ընկ. ընկ. Կամենևին, Սուրմենկոյին, Շիշուկովին, Կաղանովին և Սալդունովին։ Ղեկակալ՝ Որբակով»

Մրցումն ընդգրկել եր բոլոր կոմյերիտականներին։ Ահա մի որինակ ևս կոլեկտիվ պայմանագրի։

«Մենք, 7-րդ հողամասի կոմյերիտականներս, գարնանացանի ասպարեզում հայտարարում ենք մեզ հարվածային։ Պարտավորվում ենք կատարել լավորակ աշխատանք, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը և իջեցնել մեկ ցենտներ հացի ինքնարժեքը։ Ցանքն ավարտել պլանով սահմանված ժամկետից որ առաջ։ Շեֆություն ենք վերցնում մեքենաների, կցված գործիքների և կիզանյութի վրա։ Յեվ վստահացնում ենք, վոր կոմյերիտների մեքենաները մյուսներից կարգին կլինեն. պարտավորվում ենք թույլ չտալ մեքենաների և կցված գործիքների ջարդվածքներ ու խանգարումներ։ Տնտեսարար ծախսել կիզանյութը։ Որինակելի կուլտքաղաքական աշխատանք ծավալել կոլտնտեսականների մեջ։ Բոլոր կոմյերիտականներին և վողջ յերիտասարդությանը ընդգրկել քաղխմբակներով։ Վերոհիշյալ կետերի նկատմամբ մրցման կոչ ենք անում յերիտասարդական բրիգադին։

7-րդ կոմսոմոլական բրիգադի հանձնարարությամբ՝

Բայդին. Ցեսկո. Պերեվերզև. Մելկուլով.

Անհատներից հերթափոխություններին անցավ մրցումը։ Մեկ հերթափոխությունը մրցում եր մյուսի հետ։ Առաջադրվում եյին արտադրական կոնկրետ ցուցանիշներ, մրցում եյին վոչ թե ընդհանուր խոսքերով, այլ վերցնում եյին արտադրական կոնկրետ խնդիրներ, վերց-

նում էին թվերը, վորոնց իրագործման համար պետք է պայքարել։ Ահա 8-րդ կոմսերիտական հողամասի հերթափոխությունների սոցիալիստական պարտավորագրությունը։

«Ցանքսի կամպանիայի հանդիպական պլանի հաջող իրագործումը մեծապես կախում ունի յուրաքանչյուր հերթափոխության պարզորոշ և անխափան աշխատանքից, ինչպես նայած այն բանից, թե ամեն մեկ տրակտորիստ ինչպես կկարողանա պահպանել իր տրակտորը, տնտեսել կիզանյութը և ուսումնասիրել իր մեքենան։

Ահա ինչո՞ւ մենք, 8-րդ հողամասի առաջին կոմսերիտական հերթափոխության ղեկավարներս հայտարարում ենք մեզ մոբիլիզացիայի յենթարկված՝ բոլշեվիկյան յերրորդ գարունն անցկացնելու համար և սոցիալիստական մրցման կոչ ենք անում 2-րդ և 3-րդ հերթափոխություններին, առաջարկելով հետևյալ կետերը.

Որինակելի կարգապահություն պահպանել արտադրության մեջ, լավագույն հոգատարությամբ ապահովել տրակտորներն և կցված գործիքները։

Պայքարել կիզանյութի ծախսումը սահմանված նորմայից պակասացնելու համար։

Յուրաքանչյուր հերթափոխության պարապուրդի միջոցը պակասեցնել՝ 1 ժամ 12 րոպե տափանելու և 1 ժամ ցանելու համար։

Աշխատանքի արտադրողականությունը հասցնել առավելագույն բարձրության. միաժամանակ ձեռք բերել բարձրորակ աշխատանք։

Մշտապես բարձրացնել մեր կվալիֆիկացիան, մեր գիտությունը՝ հաղորդելով նույնը հերթափոխություններին և կոլտնտեսականներին, վորոնք մեր հողամասերումն են աշխատում։ Ակտիվ մասնակցություն ունենալ կազմակերպվող խմբակցությունների աշխատանքներին։

1-ին հերթափոխության ղեկավարներ՝ Ուրբակով, Լեվչենկո, Ջեռնյայեվ, Ջեռնոով, Ալեխին, Խոյլավկա յեվ ուրիշներ։

1-ին հերթափոխության մրցականը 2-րդ և 3-րդ հերթափոխություններն ընդունում են լրիվ և վստահացնում են, վոր սոցմրցումից հաղթանակով դուրս կգան։

2-րդ հերթափոխություն՝ Գորբանով, Նովոբրանցով, Կուրոխին յեվ ուրիշներ։

3-րդ հերթափոխություն՝ Սանդուլով, Բիսով, Աբրամով, Անտիպով յեվ ուրիշներ։

9-րդ հողամասի ղեկակալ կոմսերիտական Կնյազեվը միշտ դերակատարում եր ցանքսի հանդիպական պլանը։ Ագրեգատի համար ցանքի նորման 43 հեկտար է, այնինչ նա ամեն որ 55 հեկտար եր մշակում։ Ցանքի 10 որվա ընթացքում, բանվորական 80 ժամում, նա ցանեց 547 հեկտար, այսպիսով պլանից դուրս 120 հեկտար արտադրեց։ Իբրև յերիտասարդ բոլշեվիկ, վորը յերկրորդ տարին է միայն ինչ աշխատում է խորհտնտեսում, Կնյազեվը, այդ դեռ սակավորակ կոմսերիտականը, կարողացավ այդպիսի ռեկորդային տեմպեր ցուցաբերել։

Գլխավորն այն է, վոր ագրեգատում աշխատանքը մանրամասնորեն բաժանված է. մարդիկ աշխատում եյին կազմակերպչորեն, ամեն մարդ գիտեր տվյալ որվա իր արտադրական խնդիրները։ Շատ ոգնեց ամեն որվա համար տրված արտադրական կարգացուցակի (նարյադ) սիստեմը, վոր մտցրեց Կնյազեվը։ Աշխատանքից առաջ ինքը, Կնյազևն ստուգում եր շարքացանների աշխատանքը, կանոնավոր կերպով յուղած լինելը, մոլախոտերի մաքրումը և սերմացուի պարպումը։ Կնյազեվը ամեն մի սերմացանի ցույց եր տալիս, թե ցանքսի վո՞ր որը և ինչի՞ վրա հատկապես պետք է ուշադրություն դարձնել (այստեղ, որինակ, մեծ դեր ունի հողի նամությունը, մակերևույթի ռելեֆը և այլն)։ Կնյազեվի տրակտորն աշխատում եր առանց պարապուրդի։ Տրակտորի յուղումը կատարվում եր նրա բանած ժամանակը։

Շարքացանների մեջ սերմացուն լցնում ենք նույնպես բանած ժամանակ։ Հենց վոր տրակտորը մոտենում է այն տեղին, ուր դարսված է սերմացուն, բոլոր սերմացան կոլտնտեսականներն առաջ են վազում, վերցնում են լիքը պարկերը, բերում—դարսում են շարքացանի արկղի վրա և ապա, մեքենայի բանած ժամանակը, պարկերը պարպում են։ Պարապուրդներն յերբեմն մի րոպե յեն տևում, յերբ սերմացուն շարքացաններից հեռու յե դարսված լինում։

Հոգատար վերաբերմունքը դեպի շարքացանները, խնամքով և ժամանակին նրանց յուղումն այն արդյունքն ունեցան, վոր Կնյազեվի ագրեգատում գարնանացանի ընթացքում վոչ մի շարքացան շարքից դուրս չեկավ։ Կնյազեվը հատուկ տեխնիկական հսկողություն եր տանում սերմացան—կոլտնտեսականների վրա։ Նա կազմակերպեց տրակտորը ուսումնասիրող մի խմբակցություն, ուր սովորում եյին բոլոր սերմացանները։

Յերբ Կնյազեվի ագրեգատն ստացավ գարնանացանի առաջնությունը, բոլոր սերմացաններին պարգևատրեցին՝ տրակտորիստների կուրսերն ուղարկելով նրանց։ Վեց սերմացանից 5-ը Կնյազեվի կողմից կոմսոմոլի մեջ քաշվեցին։ Բացի տեխնիկական ուսուցումից, նա անցկացնում եր նաև մասսայական ու քաղաքական աշխատանք։ Ծրագիրը եր հայթայթում տղաներին, խորհուրդների VI հաժագումարի վորոշումներն եր բացատրում, կոմսերիտական կանոնագիրն եր մշակում։

Կնյազեվը միայն ինքը չէ, վոր գնում է առջից։ Նա իր փորձը տալիս եր իրեն հետ մրցող ղեկակալ՝ կոմյերիտական Կիաշկոյին։ Կիաշկոն ոգտագործեց Կնյազեվի փորձը, թողեց հետամնացներին և տեղ բռնեց հաղթողների շարքում։

Կնյազեվին և Կիաշկոյին—բոլշեվիկյան ցանքի այդ յերիտասարդ ենտուզիաստներին—հավասարվեց ամբողջ հողամասը։

Կոմյերիտ բջջի հեղինակությունն իհարկե մեծացավ հողամասում։ Բանվորներն ասում եյին. «Մեր կոմյերիտները գործունյա, լավ տղաներ են. նրանք վոչ թե խոսքով, այլ գործով հարվածային դարձան։ Մենք պարծենում ենք մեր բջջիով»։

Միայն 9-րդ հողամասը չեր, վոր իր ցանքային ֆրոնտով կոմյերիտներին եր հավասարվում։ Ամբողջ խորհտնտը, խորհտնտի բոլոր բանվորներն ել պարծենում եյին կոմսոմոլի մարտական աշխատանքով, ամբողջ խորհտնտով հավասարվում եյին կոմյերիտական կուրսիստներին, 8-րդ կոմյերիտական որինակելի հողամասին։ Ահա ինչ եյին գրում բանվորներն իրրև պատասխան Տուլայի բանվորների դիմումին.—

«Մենք, «Գիգանտի», բանվորներս, յերեկվա բատրակներս ու չըքավորներս, հավաքվեցինք, վոր միայն խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների կառուցումն ե հանդիսանում այն յեղակի ուղին, վոր աշխատավոր գյուղացուն ազատում ե կուլակի ստրկացումից։

Բանվոր դասակարգի հետ միասին մենք հաղթանակներ ենք տանում «Գիգանտի» դաշտերում։

Տուլայի բանվորների հրավերով մենք սոցիալիստական մրցման մեջ ենք մտնում և կամենում ենք մի քանի խոսքով պատմել այն հաղթանակների մասին, վոր ձեռք բերին «Գիգանտի» բանվորները բոլշեվիկների կուսակցության ղեկավարությամբ։

1930 թվին «Գիգանտը» 112 հազար հեկտար ցանք ուներ, այնինչ 1929 թվին ցանքի տարածությունը հավասար եր միայն 59432 հեկտարի։

Անցած տարվա գարնացանը, պլանով նախատեսված 10 որվա տեղ ավարտեցին 8 որում։ Աշխատանքի պրոցեսները հաստատ ամբողջովին մեքենայացված եյին, և անցած տարի սենք կարողացանք հավաքել 850 հազար հեկտար ապրանքային հացահատիկ և շրջակա կոլտնտներին ել արտադրական խոշոր ոժանդակություն ցույց տալ։

Ամերիկական «Կատերպիլլերների» նորոգումն այս տարի մենք կատարեցինք առանց Ամերիկային։ Մեր կիսասարքավորված արհեստանոցներում, մեր սակավ վորակյալ միջոցներով, մեր համառ և հարվածային աշխատանքով, մեր այն մարդկանց ձեռքով, վորոնք

ամերիկյան գործարարության հետ ունեցան նաև ռուսական հեղափոխության թափը, մենք անցկացրինք 230 հատ խոշոր «Կատերպիլլերների» նորոգումը, վորի համար 200 պես-պես տեսակի մասեր շինեցինք։ Յեվ մերոնց շինած այդ մասերն իրենց վորակով թերևս ամերիկականից վատ չեն, իսկ արժեն նրանցից շատ պակաս։

Յեթե «խոշոր Կատերպիլլեր» տրակտորի համար հարկավոր ամերիկական ողակն արժե 69 կոպ., «Գիգանտի» արհեստանոցից դուրս յեկած ողակն ավելի լավ ե վորակով և արժե միայն 35 կոպ։ Յեթե արտասահմանյան փակիչը (կլապան) արժե 2 դոլլար 20 ցենտ, ապա «Գիգանտինն» արժե միայն 2 ռուբլի։ Միայն մեր շինած միջադրանքները (պրիկլադկա) մի կոպեկով թանգ են ամերիկականից։ Բայց մենք ինչ ել լինի՝ միջադրանքի արժեքը կպակասեցնենք։ Մեր միջադրանքներն ամերիկականից մի կոպեկ պակաս կարժենան։

Այս տարի մենք բերք հավաքելու յենք 183 հազար հեկտար տարածության վրա և հավաքման աշխատանքի բոլոր պրոցեսներն ել մեքենայացված են լինելու։ Այս գարնանը պիտի ցանվի 115 հազար հեկտար։ Դիրեկցիայի պլանով ցանքը նախատեսված ե ավարտել 10 և կես որում։ Բայց «Գիգանտի» բանվորների նախաձեռնությամբ ցանքի ժամկետը կրճատված ե։ Հարվածային բրիգադներից մի քանիսը վորոշեցին պլանը կատարել 8 և 9 որում։ 8-րդ կոմյերիտական հողամասը, վորի նախաձեռնությամբ «Գիգանտը» պատասխանում ե կարմիր Տուլայի պրոլետարներին և մտնում ե սոցիալիստական մրցականչի մեջ, գարնանացանի հենց սկզբում, հանդիսական պլանի կարգով, ցանքսի ամբողջ կամպանիան վորոշեց անցկացնել 8 որում։ Ներկայումս, ի պատասխան կուսակցության Կենտրոնական կոմիտեյի ժամկետների կրճատմանը վերաբերյալ կոչին, 8-րդի կոմյերիտականները վերանայեցին իրենց պլանը և 1 ու կես որով նորից կրճատեցին այն.—8-րդ կոմյերիտականը պլանը կկատարեն 6 ու կես որում։

Կոմսոմոլական ամբողջ հողամասը—ղեկակալները, սերմացանները, յուղիչները, մասնագետները, խոհարարուհիները—518-ի և 1040-ի անվան հարվածային հայտարարեցին իրենց։

Աշխատանքային պլանը հասցված ե յուրաքանչյուր հերթափոխության, յուրաքանչյուր տրակտորի։ Ամեն մի բանվոր գիտե իր ծրագիրը ցանքսի հենց առաջին որից. նա գիտե, թե վորքան պարտավոր ե արտադրել և ինչքան պետք ե ստանա ինքն իր արտադրածի համար։ Ներկայումս 8-րդ կոմյերիտականը թե տափանման ու գարնանացանի և թե կիզանյութի տնտեսման ու մշակման վորակի ուղղությամբ ընթանում ե առաջին շարքերում։ Ի պատասխան Տուլայի

բանվորների և կուսակցության ԿԿ-ի ցանքսի ժամկետների կրճատման մասին բաց թողած կոչին, խորհտնտի հարվածայիններն ասացին.

—Այսուհետև տափանման ու ցանքսի մեր նորման հանդիսանալու է կոմյերիտ Կուրոխտինի, այդ լավագույն հարվածային տրակտորիստի, նորման։ Նա մի հերթափոխման (աշխատանք 8 ժամում) տափանում է 59 հեկտար և ցանում է 46 հեկտար։ Ահա այս նորման ենք մտցնում մենք մեր աշխատանքային պլանում, և այդ նորման կկատարվի։

Աշխատանքի արտադրողականության բարձրացումը հնարավորություն կտա մեկ ու կես որով կրճատել ցանքի ժամկետները և դործով աջակցել կուսակցության ԿԿ-ի մեկ փութ հացի ինքնարժեքը 20 տոկոսով պակասացնելու մասին դուրս բերած վորոշման իրագործմանը։ Աշխատանքի վորակի բարձրացմամբ մենք միաժամանակ նպաստած կլինենք բերքատվության 20 տոկոսով բարձրացմանը։ Հանուն այս թվերի կռվի յեն յելնում 8-րդ հողամասի բոլոր հարվածայինները։

8-րդ հողամասի կոչին արձագանք տվին «Գիգանտի» բոլոր հարվածայինները։ «Գիգանտի 15 հողամասերը, 8-րդի կոչի համաձայն, կրճատեցին ցանքսի ժամկետները, բարձրացրին տափանման ու ցանքսի նորմաները, պայքարում են վորակի համար։

Վիթխարի եյին մեր նվաճումները։ Դրանց հաղթանակել կարելի յեր միայն հարվածային աշխատանքի հետևանքով, վորպիսին կարող են ցուցաբերել միայն այն մարդիկ, վորոնք աշխատում են իրենց համար, և մենք այդ մարդկանցից ենք։

Սակայն շատ թերություններ ունենք մենք։ Բայց այդ թերությունները ու դժվարությունները կվերանան. չէ՞ վոր բոլշևիկների համար չկան դժվարություններ, վորոնց չկարողանան հաղթահարել նրանք, և մենք կհաղթահարենք։

Այժմ մեր թերությունների մասին։ Մենք դեռ ցածր վորակի տեր աշխատողներ ենք. բերքահավաքի ժամանակ հացահատիկի մեծաքանակ կորուստներ ենք ունենում, գերածախսում ենք կիրանյութը, անփույթ վերաբերմունք ենք ցուցաբերում մեքենաների և դյուղատնտեսական գործիքների հանդեպ։ Այս բանը յերևան յեկավ 1930 թվին, ինքնարժեքի իջեցման պլանը կատարելու ժամանակ։ Ներկա տարում մենք նման ճեղքվածքներ չենք կարող թույլ տալ, մանավանդ հիմա, յերբ խորհտնտեսությունն անցել է տնտեսաշվարկի։ Մենք վորոշել ենք վերացնել այդ թերությունները։

Միության խորհտնտների, ֆաբրիկների, գործարանների և կոլտնտների միջև հայտարարված մրցականչի մեջ մտնելով, մենք առաջադրում ենք հետևյալ դործնական միջոցառումները.—

1. Մենք, «Գիգանտ» Խորհտնտի բանվորներս, խնդիր ենք դրել մեր առաջ հնգամյակի յերրորդ տարին սոցիալիստական ռացիոնալացման տարի դարձնել։ Խորհտնտի ռացիոնալիզատորական հաշիվը, վոր ստեղծել են մեր հարվածայինները, ոդնեց մեզ հաղթությունը տանելու նորոգման կամպանիայում։ Ռացիոնալիզատորական հաշիվը 1931 թվին կտա մեզ սեկուկես միլիոն ռուբլու տնտեսում։ Բայց այն խնդիրները, վորոնք դրված են մեր առջև կուսակցության կողմից, այսինքն՝ բերքատվությունը բարձրացնել և ինքնարժեքը իջեցնել վոչ պակաս քան 20 տոկոսով, ել ավելի ռացիոնալիզատորական աշխատանք են պահանջում «Գիգանտ» խորհտնտի արտադրության դյուղատնտեսական բոլոր պրոցեսներից։ Մեր ռացիոնալիզատորական հաշիվը մենք դարձնում ենք անընդհատ։ Ռացառաջարկների կոնվեյերական ժապավենի շնորհիվ մենք ձեռք կբերենք մեկ ռուբլի դումարի տնտեսում։

Զերնոտրեստի միջոցով մենք առաջարկում ենք բանվորական ռացիոնալիզատորական առաջարկների համամիութենական հավաք կազմակերպել և Զերնոտրեստի բոլոր խորհտնտների համար համամիութենական ռացիոնալիզատորական հաշիվ պատրաստել։

2. Այս տարի «Գիգանտ» խորհտնտը պատրաստել և դերապատրաստել է պեսպես կվալիֆիկացիայի հազարից ավելի բանվորներ (տրակտորիստներ, մեխանիկներ հողամասի վարիչներ և ուրիշներ)։

Տեխնիկային տիրապետելու մասին ընկ. Ստալինի լոզունգը գործնականում կատարած լինելու համար մենք մեզ մոտ կազմակերպում ենք կվալիֆիկացիայի բարձրացման խմբակներ թե հողամասում և թե հերթափոխության մեջ հետևյալ ժամանակների համար՝ տրակտորիստներ, յուղիչներ, սերմացաններ և այլն։ Այսպիսով մենք կկարողանանք աշխատանքի պրոցեսում սերմացանից յուղիչ պատրաստել և յուղիչ-տրակտորիստ։ Կադրերի վերապատրաստման և տեխնիկային տիրապետելու այս մեթոդն առաջարկում ենք փոխադրել նաև մյուս խորհտնտները։

3. Աշխատանքի ամենաբարդ պրոցեսը բերքահավաքն է։ Բերքահավաքի կամպանիայի համար մենք այժմ իսկ առաջարկում ենք խորհտնտի համամիութենական մրցականչ կազմակերպել։ Այդ մրցականչի նպատակն է հայտարարել բոլոր նվաճումները և փոխադրել նրանց մյուս խորհտնտներին, հայտարարել նաև բոլոր թերացումները՝ նրանց ուրիշ անդամ չկրկնելու համար։

4. Հնգամյակի յերրորդ, վճռական տարվա համար հաստատուն ֆինանսական բազա ստեղծելու նպատակով մենք դիմում ենք կառավարությանը և խնդրում, վոր բաց թողնի լրացուցիչ փոխառություն «Հնգամյակի յերրորդ, վճռական տարին»։ «Գիգանտի» բան-

վորներս սկսում ենք բաժանորդագրվել այս փոխառությանը և փոխարինարար տալիս ենք պետությանը մեր ամսական աշխատավարձը։

5. Պարտավորություններ վերցնելով մեր վրա, մենք պարտական ենք հարվածայնորեն աշխատել։ Յեվ միայն հարվածային աշխատանքով կկարողանանք մենք դերակատարել խորհտնտի հնգամյակը յերեք տարում և նույնպես դերակատարել հնգամյակի յերրորդ, վճռական տարվա պլանը։ Ուստի մենք դիմում ենք ԽՍՀՄ-ի բոլոր խորհտնտներին և կոլտնտներին 518-ի և 1040-ի անվան հարվածայինների հավաքագրման ամսորյակ հայտարարել։ «Գիգանտի» հողամասերն այդ աշխատանքը ծավալել են արդեն մարտորեն։

6. Գյուղատնտեսությունը նոր, սոցիալիստական ձևի վերածելու գործում խորհտնտներն առաջատար դեր են խաղում։ Խորհտնտներն անգին արտադրական փորձ ունեն։ Մենք առաջարկում ենք սոցիալիստական փորձի փոխանակում կատարել մեր յերկրի խորհտնտների ու կոլտնտների միջև։ Զերնոտրեստի միջոցով կազմակերպել բոլոր խորհտնտներից ստացված խորհտնտային աշխատանքի փորձի փոխադրումը բոլոր խորհտնտեսությունները։ «Գիգանտի» բանվորներն՝ իբրև առաջինը՝ մտնում են սոցիալիստական մրցականչի կազմակերպության մեջ և սկսում են այդ աշխատանքն անցկացնել։

Առաջադրելով այս բոլոր միջոցառումները, մենք հանձն ենք առնում ամենից առաջ կենսագործել նրանց և խորհտնտային շինարարության բոլոր ճյուղերում ել որինակելի աշխատանք տանել։

Մեր այս սոցիալիստական պարտավորագրություններով պատասխանելով Տուլայի բանվորներին, մենք վստահացնում ենք, վոր բոլշևիկների կոմունիստական կուսակցության փորձառու ղեկավարությամբ մենք կկարողանանք իրացնել մեր առաջ դրված խնդիրները։ Հաղթահարելով դժվարությունները, ջարդ ու փշուր անելով հակահեղափոխական տրոցկիզմի մնացորդները, աջ խոտորումը և հաշտվողականությունը, մենք սոցիալիստական հողագործության կոլոնայում հաղթությունը կտանենք»։

Այս դիմումը մշակված և ընդունված է «Գիգանտ» խորհտնտի բոլոր հողամասերի կողմից, ինչպես և այն 2500 կոլտնտեսականների կողմից, վորոնք աշխատում են խորհտնտներում։

Այն փաստերը, վորոնց մասին մենք վերևում խոսեցինք, վկայում են այն մասին, վոր գիգանտցիները պատվով են իրացնում հանձն առած պարտավորագրությունները։

Խորհտնտի յուրաքանչյուր բանվորի համար պատվի խնդիր դարձավ պայքարը կոմյերիս Կուրոխտինի տեմպերի համար, 8-րդ կոմյերիսական հողամասի տեմպերի համար, վորովհետև գարնանացանի հաղթանակն ապահովողները կոմյերիսականների բարձր տեմպերը յեղան։

ԱՐՇԱՎ՝ ԿԻԶԱՆՅՈՒԹԸ ՏՆՏԵՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գարնան սկզբները, յերբ դեռ արևի ճառագայթները չեյին հալեցրել ձյունի կույտերը, 12-րդ հողամասի կոմյերիականները քննարկում եյին գարնանացանի հողամասային պլանը, վոր և հասցնում եյին մինչև յուրաքանչյուր ագրեգատի։ Ագրեգատները (ագրեգատն ունի 5 շարքացան և մեկ տրակտոր) տվին իրենց հանդիպական պլանը։ Մանրամասն հաշվեցին, ամեն բան հաշվի առան, պարապուրդները կրճատեցին և բոլշևիկյան պարտավորություն տվին ցանքն ավարտել 8 որում՝ փոխանակ պլանով նախատեսված 10 և կես որվա։

Բայց կոմյերիս հարվածային Գոլիկովը, վորի ագրեգատն և հանդիսանում հանդիպականի ինիցիատորը, դրանով գոհ չմնաց։

— Այդ դեռ բոլորը չե,—ասում եր Գոլիկովը։—Այդ քիչ է։

Լռություն տիրեց։ Տղաները սովոր են ուշադրությամբ ականջ դնել առաջավոր-հարվածային Գոլիկովին, վորը «զուր տեղը» բերանը չեր բաց անում։

— Մենք մի բանի մասին մոռացանք—կիզանյութի մասին։ Անկասկած, ցանքի արագ տեմպերն իջեցնում են ինքնարժեքը։ Տեմպերն ու վորակն ամեն բան են վորոշում։ Բայց մենք պետք է շոշափենք տնտեսության բոլոր ոլորտները և ուրվագծենք տնտեսման ուղիները, չե՞ վոր մեր հողամասը անցել է տնտհաշվարկի և ներկայումս ռուբլու կոնտրոլն է, վոր ստուգում է տնտեսատեր լինելու կարողությունը։ Յես առաջարկում եմ տնտեսել այնքան կիզանյութ, վորքան անցած տարի դերածախսեցինք—կիզանյութի տնտեսում անելով պարտական ենք իջեցնել մեկ փութ հացի ինքնարժեքը։—վերջացնում է խոսքը Գոլիկովը։

Հոգնածությունից ամենքի գլուխը պտույտ եր գալիս։ Ամենքի քունն եր տանում, վորովհետև փոքրիկ վագոնի նեղ պատուհանից արշալույսն եր յերևվում արդեն։ Բայց և այնպես կիզանյութի մասին հարուցված հարցն սկսեցին քննարկել։ Դա շատ կարևոր հարց է։

Յեվ կարևոր է նրա համար, վոր «Գիգանտի» մեքենացրած խոշոր տնտեսության գլխավոր և հիմնական ծախսը հանդիսանում է նավթամթերքի արժեքը։ Ծախսի այս մասն է հանդիսանում ինքնարժեքի գլխավոր առարկան և մնացյալ ծախսերի 40 տոկոսն է կազմում։

Յեվ յեթե «Գիգանտում» մեկ փութ հացի ինքնարժեքը հավասար է 62 կոպեկի, ծախսի մեծագույն մասն ընկնում է կիզանյութի վրա, այսինքն՝ 25 կոպեկ փութից։

Հսկայական մի գումար։ Յեվ իհարկե իրավունք ունի Գոլիկովը, յերբ ասում է, վոր պետք է արտադրանքի ինքնարժեքն իջեցնել կիզանյութի տնտեսման հաշվին։

Ճիշտ է, շատ աշխատանք եր հարկավոր գործ դնել հասկացնելու համար ամենքին, թե տնտեսումը և հնարավոր է և կարելվոր։

Կոմյերիտականները պարտավորություն հանձն առան ցանքի որերին թույլ չտալ կիզանյութի գերածախս ունենալ և 1 տոկոսի չափ կիզանյութ տնտեսել։ Բայց այդ քիչ է։ Շատերն այս մեկ տոկոսն ել մեծ դժվարությամբ եյին ընդունում։ Վախկոտներն ու թերահավատները պանիկա եյին տարածում չորս կողմը։

—Դա չի հաջողվի։ Յերրորդ տարին ահա, վոր դերածախսից աչք չենք բաց անում։ Վոչ մի տնտեսում։ Նորման քիչ է։

— Ե՞լ բան չմնա՞ց... ուզում են անկարելին կարելի՞ դարձնել։ Չե՞ վոր մեր մեքենաները խախտված են —նրանք ել ավելի կիզանյութի պետք ունեն։

Բայց և այնպես կոմյերիտի ինիցիատիվան անխորտակելի մնաց։ Միայն պանիկյորների նվոցը չեր, վոր խորտակեցին կոմյերիտականները. նրանք ստիպեցին, վոր մաշված մեքենաները պակաս կիզանյութ լափեն։

Տասնեյերկրորդ հողամասի կոմյերիտականները, Գոլիկովի առաջարկությամբ, վորոշեցին շեֆություն վերցնել կիզանյութի և մեքենաները հարդարելու պունկտերի վրա. նրանք մրցման հրավիրեցին խորհնտտի կոմյերիտական բոլոր բջիջները։

Սոցմրցման ուղեգիրը (պուտյովկա) տրված է։ Կոմյերիտի կոմիտեն «դեկրետավորել է» ինչպես հարվածային Գոլիկովի, այնպես ել 12-րդ հողամասի ամբողջ կոմյերիտ բջիջի առաջարկը։ Դուրս է բերված կոմիտեյի, ինչպես ասում են, ծավալուն վորոշումը։ Կոմսոմոլի կոմիտեյի այս վորոշումն այն արժեքն ունի, վոր կիզանյութի վրա շեֆություն վերցնելու վորոշումն անելիս, նա տվեց յուրաքանչյուր բջիջին այն գործնական հարցերի ցուցակը, վորոնց հաշվին կիզանյութի տնտեսումն է արվելու։ Այս ցուցակը կազմված եր լավագույն տրակտորիստների ունեցած փորձի հիման վրա. իսկ այդ տրակտորիստներն անցյալ տարի կիզանյութի տնտեսում ունեցան և պարգևատրվեցին։

Գարնանացանից առաջ կոմյերիտ միության կոմիտեն կիզանյութը տնտեսելու համար պարգևատրված հարվածային տրակտորիստների կոնֆերանս գումարեց և առաջավորների տեխնիկական փորձն

ընդհանրացրեց։ Այս փորձը, ցանքից առաջ, վորպես հուշագիր, վորպես կիզանյութը տնտեսելու հրահանգ, տրվեց տրակտորիստներից ամեն մեկին։

Կոնֆերանսում ներկա եյին հարդարման պունկտերի ղեկավարները (հարդարման պունկտ կոչվում է այն տեղը, ուր տրակտորները կիզանյութ են ստանում) և կիզանյութը փոխադրող կոմյերիտականները։ Դեռ ցանքից առաջ, հարդարման պունկտերում աշխատելու համար մոբիլիզացիայի եյին յենթարկված 45 կոմյերիտական, վորոնք կոմյերիտմիության կոմիտեյի նախաձեռնությամբ կազմակերպված կարճատև կուրսերն եյին անցել։

Կոնֆերանսի պարապմունքներն ընթանում եյին շատ կենդանի կերպով և նոր ձևով—առանց որակարգի և զեկուցողի։ Պատմեցին տղաներին այս տեխնիկական կոնֆերանսի նպատակը և սկսեցին քննարկումը։ Բոլոր վիճաբանություններն ընդհանրացողը ինժեներն եր, վոր հանդես յեկավ բացատրություններով և առաջարկներով։

Կոնֆերանսը գումարված եր կոմյերիտական կոմիտեյի քարտուղար Կրեյդմանի նախաձեռնությամբ. այս Կրեյդմանը բանվոր եր, վոր «Գիգանտ» եր ուղարկված՝ կազմակերպությունը ամրացնելու համար, ռպորտունիստական ղեկավարության պաշտոնից հանվելուց հետո։

Կոնֆերանսում և կիզանյութի տնտեսման վերաբերյալ հուշագրի մշակման գործում ակտիվ մասնակցություն ունեցան խորհնտտի մասնագետները՝ ինժեներները և տեխնիկները։ Խորհնտտում աշխատող և ռացիոնալացման բյուրոյի վարիչ և յերիտասարդ մասնագետ ինժեներ Զըկինը կիզանյութի տնտեսման հուշագրում տասնի չափ արժեքավոր առաջարկներ մտցրեց։

Սկսվեց ցանքը։ Շարքացանները ակոսեցին փափուկ սեահողը։ Կիզանյութի տնտեսման համար մղվող պայքարի ֆրոնտը բացված է։ Կոմյերիտի մրցման առաջին քայլն արված է։ Կիզանյութի տնտեսման համար մրցումն ստեղծեց տասնյակ նոր ձևեր և գործնական յեղանակներ։ Ամեն բջիջ հանդես բերեց իր նոր ձևերը։ Յեվ կիզանյութի տնտեսման համար կատարված արշավի նորությունների մասին մենք մանրամասն կպատմենք։

Տասնեյերկրորդ հողամասի կոմյերիտ բջիջը, ցանքից առաջ, տրակտորիստների արտադրական խորհրդակցությանը ներկայացրեց մեխանիկի զեկուցումն այն մասին, թե ինչպես և վորի հաշվին տընտեսել։ Հենց այստեղ ել մշակվեց տրակտորիստների համախորհնտտային կոնֆերանսում ընդունված հուշագիրը։

Այս նոր արտադրական խորհրդակցությունը կատարվում եր տրակտորի կողքին, ուր մեխանիկը գործնականապես ցույց եր տալիս, թե ինչպես պետք է կարգավորել տրակտորը, ինչպես հարդարել, յուղել, վորպեսզի քիչ ծախսվի։

Ցանքի առաջին որվա փորձից յերևվաց, վոր յուրաքանչյուր տրակտոր մեկ հեկտարի վրա, մեկ կիլոգրամ կիզանյութ ե գերածախսում։ Մեկ հեկտարի համար նորմայով պիտի ծախսվի 3,2 կիլոգրամ։ Փաստորեն ծախսված ե 4,2 կիլոգրամ։

Հուզմունք և անհանգստություն առաջ յեկավ հողամասում։ Ամենուրեք ցուցադրեր են փակցրված։ Բաց ե թողնված պատի թերթի արտակարգ համարը և «Գիգանտը հողամասում» տպագիր թռուցիկը (խորհտնտի «Գիգանտ» լրագիրը հատուկ հսկողություն սահմանեց այն հողամասի վրա, ուր շրջիկ խմբագրություն ուղարկվեց։ Այստեղ ել բաց եր թողնվում տպագիր թռուցիկը)։

Գումարվեց տրակտորիստների արտադրական խորհրդակցությունը։ Ամենքին հայտնի յեր հուզմունքի ու անհանգստության պատճառը, ամենքը գիտեին, վոր կիզանյութի գերածախսումը հողամասի հարվածայինների, շեֆության ինիցիատորների պատիվն ե արատավորում։

— Այդ ինչ ե,—հարցրեց հարվածային Գոլիկովը,—ինչի՞ց ե այդ ճեղքվածքը։ Ի՞նչ ե դրա պատճառը։

— Ի՞նչ ե պատճառը,—քեզ հարցրու,—լսվեցին ձայներ ամեն կողմից։

— Դու ել հո չես տնտեսել։

— Չե, տնտեսել եմ,—տաքացավ Գոլիկովը։ Յես ծախսել եմ 3,1 կիլոգրամ։ Նորմայից մի քիչ պակաս։

— Ի՞նչ ե պատճառը,—նորից կրկնվում ե հարցը։

Պարապուրդի պատճառների մասին եր խոսում հողամասի տեխնիկը։

Գերածախսումի գլխավոր պատճառն այն ե, վոր հողը թաց ե, պարապուրդներ շատ յեղան և պարապուրդների ժամանակ տրակտորները չեյին կանգնեցնում. յես աչքովս տեսա, վոր տրակտորները առանց աշխատանքի մի ժամ կանգնած եյին մնում, այնինչ մոտորը գործում եր։ Հաճախակի տեղից տեղ են փոխադրվել՝ առանց աշխատանք կատարելու։ Մեկ կողմից ցանքսի արդյունքներն են աննշան, մյուս կողմից ել շատ ե գերածախսված։ Արտադրական խորհրդակցությունը մերկացրեց կիզանյութի գերածախսման պատճառները, ցույց տվեց, թե ով ե անձնապես մեղավորը և ինչու յե նա մեղավոր առաջին որվա ճեղքվածքի համար։

Գիշերը, ուշ ժամանակ, արտադրական խորհրդակցությունից հետո, գումարվեց կոմյերիտ բջիջի բյուրոն և ակտիվը։ Դրված եր դարձյալ կիզանյութի հարցը։ Պարզվեց, վոր յերեք տրակտորիստ մեկ հեկտարի համար կարողացել են ծախսել նույնիսկ 6,5 կիլոգրամ, վորը նշանակում ե նորմայից 2 անգամ և մի բան ել ավելի։

Բջիջի բյուրոն դուրս բերեց մի կարճ վճիռ։

«1. Կոմյերիտական Բոնդարենկոյին, վոր կիզանյութի վրա շեֆություն անելու փոխարեն լեզրոյինով ու կերոսինով սկսեց խարույկը հրահրել, հանդիմանություն անել։

2. Մեկ դույլ բենզին գետնով անելը և գերածախսումն ի ցույց դնել կոմյերիտական-մեխանիկին։

3. Կիզանյութի գերածախսման համար Մաքսիմենկոյին նախազգուշացում անել և ամրացնել նրան վորակավորյալ տրակտորիստ-հարվածային ընկ. Շիրյավին, վոր շեֆություն ե վերցնում Մաքսիմենկոյի վրա։

Բոլոր կոմյերիտականներին առաջարկել՝

— Իսպառ թույլ չտալ, վոր տրակտորի կանգնած ժամանակ մոտորն աշխատի, վորովհետև տրակտորի մոտորը մի ժամում ծախսում ե 16 կիլոգրամ կիզանյութ, իսկ սրա հետ նաև յուղանյութեր։

— Հետևել մոտորի ճշտիվ կարգավորմանը (փակիչի կարբյուրացիան, ֆիլտրերի մաքրումը, պաղեցումը,) վորովհետև մոտորի անկանոն կարգավորումն ավելացնում ե կիզանյութի ծախսումը։

— Այս բոլորի կատարման մասին բյուրոյում լսել կոմյերիտական-տրակտորիստների զեկուցումները»։

Այսպես ե վճիռը։ Այս վճիռն ունեցավ շատ խոշոր արժեք, վորովհետև խոսում եր վոչ թե ընդհանրապես շեֆության մասին, այլ կոնկրետ կերպով ցույց եր տալիս, թե ինչի վրա հարկավոր ե ուշադրություն դարձնել և թե վորն ե նեղ տեղը։ Իսկ դեկավարել գիտենալը հենց նրանումն ե կայանում, վոր հնարավոր լինի մոբիլիզացիայի յենթարկել կոմյերիտական կազմակերպության վարի ողակները աշխատանքի տեմպերն արգելակող հիմնական հարցի համար և արագապես գտնել այն միջոցները, վորոնք հարկավոր են ճեղքվածքների վերացման դժվարությունները հաղթահարելու համար։

Տասնյերկրորդ հողամասի կոմյերիտ բջիջը դարձնանացանի ընթացքում ամեն որ քննարկման եր յենթարկում կիզանյութի վրա շեֆություն վերցնելու հարցը։ Դրվում եյին լավագույն հարվածայինների հաշվետու զեկուցումները, ինչպես և պատրաստման պունկտի զեկուցումները. հետամնացների հետազոտության համար հատուկ տեխնիկական բրիգադ ստեղծվեց. հետամնացներին ամրացնում եյին առաջավորներին։

Յուրաքանչյուր տրակտորի ծախսած կիզանյութի մասին ամեն որ տեղեկացույցներ եյին փակցվում հողամասում։ Ստուգատեսի եկրանը փոխվեց փորձի տախտակի։ Սրա վրա ամեն որ փակցվում եյին լավագույնների փորձի մասին կարճառոտ թռուցիկներ, թե ինչպես են տնտեսել նրանք կիզանյութը, ուսումնասիրվում եր վատթարների աշխատանքը և մշակվում եյին առաջարկներ։

Իրագործելով գործարար շեֆությունը կիզանյութի վրա, տասնյերկրորդ հողամասի կոմյերիտականները գարնանացանի ընթացքում 6 հազար կիլոգրամ կիզանյութ տնտեսեցին։ Դա նշանակում է, որ պլանի նկատմամբ 25 տոկոս տնտեսում է յեղել։ Դա նշանակում է, որ յուրաքանչյուր հեկտար ցանքից մեկ կիլոգրամ սև վոսկի յե տնտեսվել։

Ո՞վ եր ասում, թե դրանք ցնորք են։ Ո՞ւր եք դուք, կիզանյութի դերածախսման մեջ փորձված պրակտիկաներդ։ Բաց արեք աչքերդ և ուշի ուշով դիտեցեք հարվածայինների տրակտորագրերը։ Դուք այնտեղ կտեսնեք ուրիշ թվեր։ Դուք կհամոզվեք, որ բարձրացող թվերի կորագիծն իջել է վար և իրեն հենակետ է հաստատել ամերիկական մակարդակից ցած։

Բայց միթե տասնյերկրորդ հողամասը մենակ է։ Իհարկե վոչ։ Վերցնենք փաստեր ուրիշ բջիջներից։

Հինգերորդ հողամասի կոմյերիտ բջիջը սովորություն ուներ հետաքրքրել պատրաստման պունկտերի աշխատանքներն ու ցիստերնների վիճակը։ Տեխնիկական բրիգադի անակնկալ հետազոտումից յերեվան յեկավ, որ տրակտորների մեջ կիզանյութը դույլերով են ածում և վոչ թե շլանգների կամ խողովակների միջոցով։ Դույլով կիզանյութ ածելն անթույլատրելի յե, որովհետև դրանից շատ դերածախս եր լինում։ Հետազոտումից յերեվան յեկավ, որ ցիստերնների բերանների անցքերը չունեյին լավ և ամուր փակվող խուփեր, պակասում եյին միջադրանքները, հայտնաբերված են դեպքեր, որ ցիստերնները լցնում են մինչև բերանի անցքը և փոխադրման ժամանակ կիզանյութը թափվում եր։ Տեխնիկական այսպիսի հետազոտման շնորհիվ հնար յեղավ ժամանակին կանխել սխալները և մեծ կորուստների առաջն առնել։

Տափանման և ցանքսի առաջին որերում ութերորդ կոմյերիտական հողամասը ճեղքվածք ուներ։

Կիզանյութի դերածախսումը 160 տոկոսի յեր հասնում։ Հարվածային հողամասի համար այս թիվը խայտառակ և անհանդուրժելի մի բան եր։ Յերկրորդ որն է, որ յուրաքանչյուր հերթափոխություն արտադրական խորհրդակցություն է անցկացնում։ Հայտաբերվում են ճեղքվածքների պատճառները։ Ուրվագծվում են կիզանյութի կորստի վերացման ուղիները։ Ութերորդ հողամասի հարվածային կոմյերիտականների հերթափոխությունն ահա այսպիսի առաջադրանք ուղղեց բոլոր տրակտորիստներին իր նամակում։

«Սուգեցեք մեր փորձը։
Ցեկեք պահպանեցեք կիզանյութի ամեն մի կաթիլը։
Ութերորդ կոմյերիտական հողամասի բոլոր հերթափոխություններին։

«Գիգանտ» խորհտնտեսության բոլոր բանվորներին, այս տարվա գարնանացանի կամպանիայի ընթացքում պարտավորություն հանձն առան մեկ կողմից ընդարձակել ցանքսի տարածությունն ու բարձրացնել բերքատվությունը, մյուս կողմից էլ, վոչ պակաս քան 20 տոկոսով իջեցնել դաշտային աշխատանքների ինքնարժեքը։

Մեր տնտեսության ամենադլխավոր և հիմնական ծախսի առարկան հանդիսանում է կիզանյութի և յուղամթերքների արժեքը։ Պարզ է ուրեմն, որ առանց կիզանյութի առավելագույն տնտեսման և նրա ռացիոնալ կերպով ոգտագործման մենք անկարող կլինենք իրականացնել ինքնարժեքի իջեցման խնդիրը։ Մինչդեռ աշխատանքի առաջին որերում կիզանյութի տնտեսում ունենալու տեղ մենք 160 տոկոսով դերածախս արինք։ Այս հանդամանքը ձախողում է խորհտնտային հնգամյակը յերեք տարում կատարելու պլանը։

Կիզանյութի այսպիսի խոշոր դերածախսումը վիժման սպառնալիքի տակ է դնում նաև ցանքսի հանդիպական պլանի կատարումը։ Կիզանյութի և պատրաստման պունկտի վրա շեֆություն վերցնելով, մենք, ութերորդ հողամասի կոմյերիտ-տրակտորիստներս, պարտավորվում ենք ամբողջ ուշադրությունն ու միջոցառումներն ուղղել՝ կիզանյութը տնտեսաբար ծախսելու գործի վրա։ Կիզանյութի նորման 10 տոկոսով իջեցնելու պարտավորագրությունն տալով, մենք միաժամանակ պարտավորվում ենք վոչ մի դեպքում թույլ չտալ կիզանյութի թափթփումը և արտահոսումը։

Պատրաստման պունկտերը և կիզանյութի փոխադրման տրանսպորտը մենք կապահովենք լավագույն կոմյերիտ-հարվածայիններով և կպայքարենք կիզանյութի թափթփման ու արտահոսման դեմ։ Զեռք կբերենք ցիստերնների սարքավորումը, ինչպես նաև հոգատար վարմունք կապահովենք կիզանյութի փոխադրմանը դեպի հողամասերը և հարդարանքի պունկտերը։

Տրակտորը կանգ առնելուց հետո մոտորը 5 րոպեյից ավելի չբանեցնել։ Տրակտորը, առանց գործի, առաջ չքշել և հետևվից կցված գործիքների խանգարման դեպքում մոտորը չբանեցնել։ Կլապանների կարգավորումը կատարել մեխանիկի տված հրահանգների համաձայն, ապահովել նմանապես կիզանյութի նորմալ ծախսը վորոշող ժիկլերի կարգավորումը։

Հանձն առնելով այս պարտավորությունները, մենք ութերորդ հողամասի կոմյերիտական տրակտորիստներս, սոցիալիստական մրցման ենք կանչում այս կետերի իրագործման համար տասնմեկյերրորդ հողամասի կոմյերիտ-տրակտորիստներին։

Հարվածային կոմյերիտական հերթափոխություն՝
Կուրսխին, Պարասոչկա, Նովոբրանցեվ, Լեվչենկո, Կոլդաշով, Կլրժնիկով»։

Այս նամակը բնորոշ է նրանով, որ այստեղ ցայտուն կերպով արտահայտված է սոցիալիստական վերաբերմունքը դեպի աշխատությունը, ինչպես նաև յուրաքանչյուր բանվորի արտադրության վրա ունեցած իր ընդհանուր հոգացողությունը։ Հիշեք, թե ինչպես էր գնահատում Վլադիմիր Իլյիչը անձնազոհ պայքարի դեպքերը, պայքար, որ մղում էին բանվորներն իրենց արտադրության համար։ Այսպես էր գրում նա իր «խոշոր նախաձեռնություն» հոդվածում. «Կոմունիզմն սկսվում է այնտեղ, ուր յերևան է գալիս շարքային բանվորի անձնազոհ, ծանր աշխատանքը հաղթահարող հոգատարությունը՝ թե իրենց աշխատանքի արտադրողության ավելացման և թե հացի, քարածուխի, յերկաթի և այլ արտադրանքների յուրաքանչյուր փթի պահպանման համար»։

Կիզանյութի տնտեսման ուղղությամբ մղված պայքարը «Գիգանտ» կոմյերիտականների համար դարձել է պատվի խնդիր։ Կոմսոմոլը բոլշևիկորեն կռվում էր կիզանյութի ամեն մի կաթիլի համար, ջախջախելով կոմյերիմիության նախաձեռնությունն արգելակող անշարժությունը, բյուրոկրատիզմը։ Կիզանյութի տնտեսման համար մղվող պայքարը դարձավ ասպարեզ դասակարգային կռիվների մեր թշնամիների հետ, քյալլադյոզների ու աջ ոպորտունիստների դեմ—դասակարգային թշնամու այդ գործակալների դեմ։

Կոմյերիտուհի—տրակտորիստուհի Միխայլովային բազմիցս նախազգուշացում արվեց՝

Կիզանյութը տնտեսիր։ Տրակտորը պահպանիր։

Խոսքերը չոգնեցին։ Բուքսերի վերցրին Միխայլովային—ոգնությունից հրաժարվեց։

Գարնանացանի ընթացքում նա յերեք անգամ ջարդեց տրակտորը և սիստեմատիկորեն գերածախսում էր կիզանյութը։

Ի պատասխան կոմյերիտ բջիջի նախազգուշացման Միխայլովան ասում է.

— Ինձ անհարմար է շեֆություն անել իմ տրակտորի վրա. թող մի ուրիշը վերցնի շեֆությունը՝ իսկ կիզանյութը տնտեսելու բոլորովին պետք չկա։

Միխայլովան կազմալուծում էր սոցմրցումը, վիժեցնում էր աշխատանքը։

Վոչ, Միխայլովայի տեղը չի կոմյերիտմիությունը։ Միխայլովաները մեր շարքերում վոչ այլ ինչ են, յեթե վոչ դասակարգային թշնամու գործակալները, որոնք ներսից քանդում են սոցիալիստական շինարարությունը։

Միխայլովայի արտաքսումը կոմյերիտբջիջի կողմից վերածվեց քաղաքական մի մեծ կամպանիայի. արտաքսվերով կոմսոմոլի շարքերից, բջիջն ընկերական դատ կազմակերպեց Միխայլովայի դեմ։ Դատը ոգտագործվեց Միխայլովայի տրակտորի ջարդվածքների և ֆնաուսմների դետալների քննության համար։ Ուսումնասիրեցին կիզանյութի գերածախսման պատճառները։ Այս դատն արտադրական դաս յեղավ յուրաքանչյուրի համար։

Բջիջն ուղիղ վարվեց՝ վտարելով իր շարքերից Միխայլովային։ Նրա տեղը կոմսոմոլ մտան մի անգամից տասը յերիտասարդ հարվածայիններ։ Ամբողջ հողամասը կոմյերիտական դարձավ։

Շեֆության արդյունքները։ Արդյունքները մենք կպարզենք հաղթանակների թվերով։ Ցանքի հարվածային որերին խորհտնտն ունեցան կիզանյութի մոտ 30 հազար կիլոգրամ տնտեսում, այնինչ նախկին 2 և կես տարում գերածախս է յեղել։ Այս է կոմյերիտի մարտական արշավը կիզանյութի տնտեսման համար։

«Գիգանտի» կոմսոմոլն այս հողամասում փայլուն հաղթանակ տարավ։

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Յերկրորդ հողամասի կոմյերիտական գիշերային հերթափոխությունը գարունքից հսկայական աշխատանք էր անցկացրել բերքատվությունը պահպանելու ուղղությամբ, որով և հաղթանակ էր պատրաստել կոմբայններով կատարված բերքահավաքի համար։ Բերքի պահպանման միտքը հղացավ կոմյերիտ—տրակտորիստ Սերովը, որն անցյալ տարի կատարում էր բերքահավաքի աշխատանքը։

Անցած տարվա բերքահավաքի փորձը հարկադրեց Սերովին մտածել այն մասին, որ վատորակ տափանումը և ցանքը նվազեցնում են հացահատիկի վորակը, վատ են մաքրում մոլախոտերը—այս բոլորը քայքայում և արագապես շարքերից դուրս է հանում մի այնպիսի բարդ մեքենա, որպիսին կոմբայնն է։ Կոմբայնը, աշխատանքի ժամանակ, յեթե միայն հողը պետքին պես չի մշակված, չափազանց ուժեղ կերպով յերերվում է, որից նրան ամրացնող մասերը թուլանում են և պատճառ դառնում նրա առանձին դետալների կոտրվելուն, ինչպես և գայկանների կորչելուն։

Հողի վատորակ մշակումը նպաստում է մոլախոտերի արագ զարգանալուն, որը դժվարացնում է կոմբայնի աշխատանքը. մոլախոտերով խառն ցանքը հնար չի տալիս կոմբայնին լավ մաքրել հացահատիկը։

Այս բոլորի հետևանքով տեղի յեն ունենում պարապուրդներ և փչանում է հացահատիկը։

Այս մասին վկայում է անցած տարվա փորձի հաշվառումը։ Այս ամենից հետևում է այն, որ արդեն գարունքից սկսած հարկավոր է լրջորեն զբաղվել սոցիալիստական բերքի պահպանման գործով։

Գիշերային հերթափոխի կոմյերիտականները Սերովի այս առաջարկն ընդունեցին և բերքի պահպանման հաշիվը ներկայացրին բոլոր կոմյերիտբջիջներին։ Այս նախաձեռնությունն ընդունելություն գտավ ամենքի կողմից։ Խորհտնտի բոլոր հերթափոխությունները ու, յերկրորդ հողամասի կոմյերիտականների որինակին հետևելով, կոմյերիտխմբերը ստեղծեցին ցանքի տափանման վորակն ստուգելու համար։ Յերրորդ հողամասի կոմյերիտականները կազմակերպեցին տափանումից հետո դաշտերում մնացած քոլերի այրումը։ Սովորաբար քոլը թողնում եյին ուղղակի դաշտերում, իսկ դրանից տուժում եր ցանքի վորակը։ Զափազանց վտանգավոր եր քոլը բերքահավաքի ժամանակ. նա ընկնում եր կոմբայնի մեջ, վորի պատճառով կոտրվում եյին շնիկները (шнеки), կեղտոտվում եր հացահատիկը։ Յերրորդ հողամասի կոմյերիտները, քոլերը դաշտերից հավաքելու նպատակով շաբաթորյակ հայտարարեցին։ Յեվ քոլը վոչնչացվեց։ Կոմյերիտական այս փորձն ոգտագործեցին հողամասերից շատերը։

Ութերորդ հողամասի կոմյերիտականները միորյա շուրջկալ (облава) հայտարարեցին՝ ստուգելու համար, վորքան խնամքով է կատարվում հողի մակերևույթի մշակումը։ Վատ մշակված հողի մակերևույթը պատճառ է դառնում կոմբայնի չափազանց ուժեղ խանգարման։ Ուստի յերկրորդ անգամ տափանեցին այն տեղերը, ուր շուրջկալը գրսևորեց վատ մշակված մակերևույթով հողաբաժինները։

Վեցերորդ հողամասի կոմյերիտները կոչ արին ամբողջ խորհտնտին ցանել անվրեպ, այսինքն անցան կտորներ չթողնել։ Անցան տեղերի պատճառով բերքավորությունը պակասում է, մոլախոտերը զարգանում են և բերքահավաքի մեքենաների աշխատանքը դժվարանում է։ Անվրեպ ցանքի համար մղվող այս պայքարը, քանի վոր նա ծառայում եր մոլախոտերի վոչնչացմանը, կազմում եր բերքահավաքի պահպանման բաղկացուցիչ մասը։

«Գիգանտ» խորհտնտեսության վողջ կոմսոմոլը՝ իրեն գլուխ ունենալով իր շտաբը—խորհտնտի կոմյերիտական կոմիտեն—մարտորեն եր կռվում գարնանացանի վորակի համար, դրանով հաղթանակ եր պատրաստում բերքահավաքի համար, դրանով նպաստում եր կոմբայնի ջարդվածքներից ու պարապուրդներից զերծ մնալուն։

Այս է գիգանտյան կոմսոմոլի մղած պայքարի գործնական ուղին։

Խորհտնտների վողջ կոմյերիտ կազմակերպություններին անհրաժեշտ է հենց գարունքից ոգտագործել բերքահավաքի պահպանման այս փորձը։ Հիմա վարն է դնում—արշավ հայտարարել վարի վորակի համար։ Աշունքից սկսել հաջորդ տարվա բերքի պահպանումը։ 1932 թվի բերքատվության համար «Գիգանտի» կոմսոմոլն արդեն իսկ ցել անելու պայքար է կազմակերպում։ Մենք առաջարկում ենք հայտարարել բերքահավաքի անընդհատ կոմյերիտական պահպանում, անընդհատ արշավ վորակի համար։

Հավաքման այս կամպանիային «Գիգանտ» խորհտնտեսությունը 23 որում պետք է անցկանի բերքահավաքը 181 հազար հեկտար տարածության վրա։ Այսպես է դիրեկտիվի պլանը։ Սակայն հարվածայինների նախաձեռնությամբ առաջադրվում են հանդիպական պլաններ։ Ութերորդ կոմյերիտական հողամասի հարվածայինները բերքահավաքը 20 որում անցկացնելու ինիցիատորներ հանդիսացան. դա նշանակում է, վոր «Գիգանտն» որական 9 հազար հեկտարից ավելի յեն հավաքելու։ Դա նշանակում է, վոր մենք կոմբայնն ոգտագործելու յենք այնպես, վոր վերցնենք նրանից այն բոլորը, ինչ վոր առտադրականապես հնարավոր է, վորպեսզի սոցիալիստական հողագործության դաշտերում առավելագույն չափով ոգտագործած լինենք կոմբայնները։ Տեմպերը պահանջում են, վոր կոմբայնը 21 ժամ աշխատի։ Ութերորդ կոմյերիտական հողամասի հարվածայիններն ասացին.

— Մենք կրճատում ենք կոմբայնը և տրակտորը կիսանյութով լցնելու ժամանակամիջոցը. մենք կանցկացնենք բերքահավաքը առանց պարապուրդ ունենալու, առանց կորուստի յեվ առանց վնաս հասցնելու հացահատիկին։

ԿՏԻՐԱՊԵՏԵՆՔ ԿՈՄԲԱՅՆԻ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

Ուրեմն՝ 20 որ։ Այս որերն են վորոշում խորհտնտի հաղթանակը Պետք է մարտորեն նախապատրաստվել։ Բոլշևիկյան տեմպեր են պետք՝ կոմբայնների նորոգման ու հավաքման և պահեստի մասերի պատրաստման գործում և վերջապես ամենագլխավորը—պետք է պատրաստել ուժեղ կադրեր, վորոնք մանրամասնորեն ծանոթ լինեին ամերիկական բարդ մեքենայի—կոմբայնի հետ։ Այդ կադրերն են—կոմբայնավարները, շտուրվալնիները, մեխանիկները։ Բերքահավաքի համար կադրերի պատրաստումը հանդիսանում է այն հիմնական ողակը, վորը վորո-

շում է բերքահավաքի անցկացման հաջողություններն առանց կորուստների, պարապուրդների և առանց հացահատիկը փչացնելու։

«Հիմնական թերությունն այն է, որ կոմբայնով աշխատելու դեպքում պարապուրդները չափազանց մեծ էին և հացահատիկի կորուստը նորմայից ավելի էր», ժամանակում էր ընկ. Յակովլևը խորհուրդների 6-րդ Համամիութենական համագումարում։ Յեթե անցյալ տարի կոմբայններն աշխատանքային ժամանակի 40-45 տոկոսը պարապ են մնացել, դրա պատճառն այն է, որ կոմբայնավարներն ու շտուրվալներները վատ են պատրաստված յեղել, այն ինչ նրանք են հանդիսանում կոմբայնի տեխնիկական ղեկավարները։

Անցյալ տարի «Գիգանտ» խորհտնտում կոմբայնավարները բերքահավաքից հիսուն որ առաջ էին սկսել պատրաստվել։

Անցյալ տարվա սխալները հաշվի յեն առնված։ Այժմ «Գիգանտը» կադրեր կպատրաստե։

Յերկամյա կուրսեր են կազմակերպված կոմբայնավարներ պատրաստելու համար։ Այդ կուրսերն ընդգրկել են 300 հոգի։ Տեսական ուսուցումը սերտորեն կապված է գործնական աշխատանքի հետ։ Բոլոր կուրսանտները—դաշտային նավերի այդ ապագա հրամանատարները—անմիջականորեն մասնակցում են կոմբայնների հավաքման ու նորոգման աշխատանքներին։ Կուրսերի ուսումնական ծրագիրը կառուցված է կոմբայնի հավաքման գործնական աշխատանքների սերտ առնչությամբ։ Որինակի համար մեջ բերենք հետևյալ փաստերը։ խեղերը (կոմբայնի հնձող մասը) տեղը հարմարեցնելուց առաջ հատուկ դաս է վերամշակվում խեղերի նշանակության մասին կոմբայնի աշխատանքում։ Դասատուն միաժամանակ ղեկավարում է կոմբայնի նորոգման և հավաքման գործնական աշխատանքները։ Կոմբայնի հավաքման ժամանակ կատարված գործնական աշխատանքը ապագա յուրաքանչյուր կոմբայնավարի համար արժեքավոր է նրանով, որ նա ծանոթանում է կոմբայնի բոլոր մասերի հետ։

Կուրսանտների ինիցիատիվային խումբը սարքված կոմբայնների վոռակի ինֆնաստուգումը կատարելու միտքը հղացավ։ Այդ խմբի ղեկավարն է մի մասնագետ-ինժեներ։ Ստուգման պրոցեսում հայտաբերվում են այնպիսի կոմբայններ, որոնք անխնամ կերպով են սարքված՝ մասերն ուղիղ չեն դրված, լավ պրկված չեն և այլն։ Հայտաբերելով սարքման վատորակ լինելը, ինիցիատիվային խումբը, արհեստանոցների ստուգիչ բաժնի հետ միասին, խոտանում է կոմբայնի սարքումը։ Կոմբայնը նորից գնում է սարքման ցեխը։ Խոտանված սարքման պատճառները վերաշակում և ուսումնասիրում են բոլոր կուրսանտները։ Վերամշակման այս մեթոդը նախազգուշացնում է մյուս բրիգադներին խույս տալու նման սխալների կրկնումից։

Կոմբայնների սարքման և նորոգման սկզբից արդեն խստաբար վերացված է դիմազրկությունը։ Յուրաքանչյուր կոմբայնավարի ամրացվում է մի կոմբայն, որի վրա նա պիտի աշխատի։ Այս կոմբայնները միշտապես ամրացվում են նաև այն ընկերների խմբին, որոնք նորոգել են նրանց։ Ներկայումս կոմբայններն արդեն բաշխված են հողամասերին։ Սա հնարավորություն կտա հողամասի յուրաքանչյուր մեխանիկ-կոմբայնավարին և բանվորին ծանոթ լինել կոմբայնների իրենց խմբին (взвод)։

Այսպես ուրեմն, կոմբայնավարների նախապատրաստումը «Գիգանտում» հաջող է անցնում դլխավորապես նրա համար, որ տեսական ուսուցումն անքակտելիորեն կապված է պրակտիկայի հետ։ Այս տարի, յերբ ամբողջ բերքը պիտի հավաքվի բացառապես կոմբայնների միջոցով և կոմբայններն են վորոշելու բերքահավաքի հաջողությունները, մենք տալիս ենք թե տեսականապես և թե գործնականապես լավ պատրաստված կոմբայնավարներ։

«Գիգանտը» բերքը հավաքող բանվորների կադրերը վերցնում է բացառապես կոլտնտներից, որոնք «Գիգանտի» հետ կապված են խորհտնտային-կոլտնտային համաձայնությամբ։ Այս տարի ընդամենը 3000 կոլտնտականներ են աշխատելու՝ խորհտնտեսության բերքը հավաքելու համար։

Բացի կոմբայնավարներից, որոնք պատրաստվում են բանվորների մնայուն կադրերից, խորհտնտին պետք պիտի լինեն 600-ի չափ շտուրվալներներ։ Այս վերջինների նախապատրաստումն առաջ տեղի յեր ունենում բերքահավաքի սկզբից 10 որ առաջ։ Շտուրվալները պատրաստվում էին յուրաքանչյուր հողամասում կազմակերպված հատուկ կուրսերում։

Ներկայումս ութերորդ կոմյերիտական հողամասը շտուրվալներ պատրաստելու հետևյալ փորձն ունի։ Դեռ գարնանը կոլտնտեսականների միջից վերցված շտուրվալների համար կազմակերպված էին կարճատև կուրսեր։ Այդ կոլտնտեսականներն աշխատում էին գարնանացանի ժամանակ (նրանք աշխատելու յեն նույն հողամասում նաև բերքահավաքի ժամանակ)։ Կուրսերի ղեկավարներն էին՝ մեխանիկն, ագրոնոմը և լավ վորակյալ կոմբայնավարը։

Տասնորյա այդ կուրսերը տարրական ծանոթություն տվին կոմբայնի կոնստրուկցիայի և շտուրվալների պարտականությունների մասին։ Գարնանացանի ընթացքում ութերորդ հողամասը կարողացավ 50 շտուրվալնի պատրաստել իր համար։ Ընկերների այդ խումբն, անկասկած, բերքահավաքից առաջ էլ կանցնի կուրսերը, որոնք սերտորեն կապված են լինելու շտուրվալների կոմբայնի վրա տանելու աշխատանքի հետ։ Ութերորդ հողամասի՝ գարունքից սկսած շտուրվալ-

նիները պատրաստելու՝ այս մեթոդը նրանով է նշանավոր, որ նման նախապատրաստումը տալիս է տեխնիկապես գրագետ, կոմբայնի հետ լավ ծանոթ շտուրվալնի, որը, հարկավոր դեպքում, ի վիճակի կլինի փոխարինել կոմբայնավարին յեվ ընդհանրապես նրա մշտական ոգնականը կլինի:

Ութերորդ հողամասի կոմյերիա ըջիջը կադրերի նախապատրաստման պլանում կոմբայնավարների կուրսերի ծրագիրն է վերամշակել մասնագետների հետ միասին: Այդ կուրսերը կազմակերպվելու յեն բերքահավաքման պրոցեսում: Հիշյալ կուրսերն ընդգրկելու յեն այն ընկերներին, որոնք գարնանն ավարտել են շտուրվալնիների կուրսերը:

Դա ի՞նչ կտա մեզ:

Կադրերի նախապատրաստման այս ձևը հնարավորություն կտեղծի հենց գործնական աշխատանքի պրոցեսում, ուղղակի հողամասում, հենց բերքահավաքի ընթացքում կոմբայնավարների կադրեր կսիրել: Այս ձևով հնարավորություն կտեղծվի տեսական ուսուցումն ավելի յեվս սերտ կերպով զուգորդել գործնական աշխատանքի հետ կոմբայնի վրա: Ութերորդ կոմյերիտական հողամասի ուսուցման այս փորձը խոշոր առավելություն ունի նաև նրա համար, որ ոգնեցնել շտուրվալնին ավելի վարակատարյալ է դառնում յեվ կոմբայնն ամեն կողմից լավ հասկացող, որպիսի հանգամանքը նպաստում է անցած տարվա սխալների վերացմանը:

Ի՞նչ ունեցինք մենք անցյալ տարի:

Անցյալ տարվա բերքահավաքման կամպանիային շտուրվալնին կարողանում եր կարգավորել միայն խեղերի (կոմբայնի հնձող մասի) աշխատանքը և մինչև իսկ անկարող եր յուղել կոմբայնը: Շտուրվալնիի այսպիսի նեղ նախապատրաստումն այն հետևանքն եր ունենում, որ նա չեր կարողանում խեղերի աշխատանքի կարգավորումը շնորհով զուգորդել կոմբայնի ընդհանուր աշխատանքի հետ, մի հանգամանք, որ շատ եր արգելակում աշխատանքը: Այսպես կոմբայնի աշխատանքի բարդությունը նրանումն է, որ պետք է իմանալ ինչպես հարկն է զուգորդել բոլոր մոտորների աշխատանքը: «Նկատի պետք է ունենալ, որ կոմբայնն ամենաբարդ կոմպլեկտավոր մեքենաներից մեկն է: Նա բարդ է, որովհետև պահանջում է չորս մոտորների հաճաձայնեցրած աշխատանքը, այսինքն տրակտորի մոտորի, կոմբայնի յերկու մոտորի և բենզոտարի մոտորի: Մոտորներից որևե մեկի խանգարումը խափանում է ամբողջ աշխատանքը: Պարզապես պետք է ասել, որ առաջի տարին, կոմբայնների մասսայական ոգտագործման պահին, տեղի եյին ունենում շատ անհամաձայնություններ, դեռ ավելին,—խորհտնտներից շատերում կոմբայնի տեսքից խուճապի նման բան եր ստեղծվում: Մեքենայից կարծես վախենում եյին մարդիկ» (Ցակովլեվ):

Ցավ յեթե անցյալ տարի, որինակի համար, կոմբայններն իրենց աշխատանքի ժամանակամիջոցի 40-45 տոկոսը անգործ եյին մնում, ապա բերքահավաքման այդ ամենայեռուն պահին տեղի ունեցող ճեղքվածքների պատճառները հատկապես նրանումն են թաքնված, որ կադրերը զուրկ եյին հարկավոր պատրաստությունից:

Ահա ինչու կադրերի խնդիրն ինչպես ամբողջ «Գիգանտի», այնպես եվ յուրաքանչյուր հողամասի համար հանդիսանում է կենսական և որվա չարիք դարձած խնդիր, որովհետև վերջին հաշվով կադրերն են, որ որոշում են բերքահավաքի հաջողությունը:

Սակայն բերքահավաքման կամպանիայում հաղթանակը տարած լինելու համար կոմբայնավարի և շտուրվալնիի կոմբայնի հետ լավ ծանոթ լինելը բոլորովին բավական չե: Վոչ պակաս կարևոր է, որ կոմբայնն ուսումնասիրե նայեվ այն տրակտորիստը, որը պետք է աշխատի բերքահավաքի ժամանակ: Աչք շատ բան է կախված կոմբայնը վարող տրակտորիստից: Բոլոր մոտորների աշխատանքի խելացի զուգակցումը կախված է այն բանից, թե ինչպես կկարողանա նա կարգավորել ամբողջ կցանքի (сцепка) շարժումը: Այդ անվիճելի յե: Ցավ յեթե տրակտորիստը լավ չիմանա իր կոմբայնը, ապա անխուսափելի յեն կոմբայնի պարապուրդները ու ջարդվածքները: Ահա թե ինչու անգին արժեք ունի յոթերորդ հողամասի կոմյերիտականների փորձը, որոնք արդեն ներկայումս, բերքահավաքը չսկսած, կազմակերպեցին կոմբայնավարների խմբակներ, ուր յեվ սովորեցնում են տրակտորիստներին: Այդ խմբերի դեկավարները մեխանիկներն են, որոնք կոմբայնի վրա աշխատելու փորձ ունեն:

«Գիգանտում» ներկայումս ընդարձակ ծավալ է ստացել կոմբայնի վրա աշխատելու անցյալի փորձն ունեցող վորակավորյալների շեֆությունը նորելուկ ու սակավափորձ կոմբայնավարների վրա: Սրա ինիցիատորն է մի յերիտասարդ հարվածային, ընկ. Զուբը, որը յերրորդ տարին է, ինչ խորհտնտումն է աշխատում: Տեխնիկական շեֆության այս ձևը ներկայումս անցել է յերկրի բոլոր խորհտնտերը:

Բերքահավաքի հաղթանակը տանելու համար, մեզ անհրաժեշտ է խնամքով ուսումնասիրել անցյալ տարվա արտադրական թերացումներն ու ճեղքվածքները: Այս նպատակով «Գիգանտի» կոմսոմոլը գումարում է անցյալ տարի կոմբայնի վրա աշխատած հարվածային-կոմբայնավարների համախորհտնտային կոնֆերանս:

Կոմսոմոլի Յերկրային կոմիտեն գումարեց հարվածային-կոմյերիտականների յերկրային հավաք: Կոմբայնավարների աշխատանքի փորձն ընդհանրացված է և հուշագիր-բրոշյուրով լույս ընծայված: Լավագույն հարվածայինների, անցյալ տարվա բերքահավաքման կամպանիայի այդ հերոսների որինակի ուժով մենք կկարողանանք հաջողություն ձեռք բերել և այս տարի:

Սակայն կոմբայնի համար կադրերի նախապատրաստման հարցերը միայն խորհտնտների առջև դնելը բավական չե: Ամենամոտ տա-

բինները մեզ հարկավոր պիտի լինեն կոլտնտային դաշտերում աշխատելու համար հաղարավոր շտուրվալնիներ և կոմբայնավարներ։ Ահա թե ինչու կարևոր է վորպեսզի «կոմբայնի տասնորյակը», վոր ներկայումս անցկացվում է խորհտնտում, մասսայական արշավի վերածվի՝ աշխատանքի փորձը կոմբայնի կոլտնտեսականներին փոխադրելու համար։

Խորհուրդների 6-րդ համագումարում ընկ. Յակովլևն ասաց, վոր «Մի քանի տարվա ընթացքում կոմբայնները կլինեն բերքը հավաքող հիմնական մեքենաները վոչ միայն խորհտնտներում, այլև կոլտնտներում։ Դրա համար պետք է անմիջապես կադրեր պատրաստել»։

Անկասկած է, վոր կոլտնտների համար կոմբայնավարների հիմնական կադրերը կազմելու յեն նրանք, ովքեր մասնակցում են խորհտնտի բերքահավաքին, իսկ այս տարի «Գիգանտի» բերքահավաքին կմասնակցեն յերեք հազար կոլտնտեսականներ։

«Գիգանտի» կոմսոմոլը հաշվի առավ այս։ Վորոշված է այժմ իսկ կոլտնտների կոմբայնների համար կոմբայնավարների ու շտուրվալնիների կադրեր պատրաստել։ Նշված է բերքահավաքի ընթացքում յերեք հազար կոլտնտականներին ել ընդգրկել տեխնիկական ուսուցմանը, կազմակերպել կոմբայնավարների և շտուրվալնիների մասսայական կուրսեր, վորոնք յերկերթ աշխատանք են տանելու բերքահավաքի ժամանակ։

Կարևորն այն է, վոր կոլտնտեսականների լայն մասսաները հասկանան, թե ինչ վիթխարի, իսկապես վոր վճռական, նշանակություն ունեն կոմբայնները՝ խորհտնտների և կոլտնտների տնտեսությունների ամրացման համար։

«Գիգանտի» կոմսոմոլը շրջակա տասը կոլտնտներն ուղարկում է հարվածային-կոմբայնավարների բրիգադներ՝ բացատրական աշխատանք տանելու համար, փորձի փոխադրման համար, կոլտնտեսականներին կոմբայնների հետ ծանոթացնելու համար։

«Գիգանտ» խորհտնտի կոմսոմոլը, «կոմբայնի տասնորյակին» կազմակերպեց յերիտասարդական 50 եքսկուրսիա կոմբայնի սարքմանը հորդման և աշխատանքի գործնական, փորձնական ստուգումը կատարելու համար։ Մասսայական եքսկուրսիաներն անցկացվելու յեն բերքահավաքի ժամանակ։

«Գիգանտ» խորհտնտի կոմսոմոլը, հանրային ուշադրությունը դեպի կոմբայնը գրավելու համար, առաջադրեց «կոմբայնի տասնորյակ» անցկացնելու հարցը։ Տասնորյակի խնդիրները նրանումն են կայանում, վոր հանրային հոդատարության առարկա դառնա կոմբայնը, վոր ձեռք բերվի կոմբայնավարների տեսական ուսուցման բարձրացումը և լայն մասսաներին ծանոթություն տրվի կոմբայնի, բարդ մեքենայի մասին։ Առաջուց, մինչև բերքահավաքը, նշել մի շարք միջոցառումներ, վորոնք կանխեին կոմբայնների ջարդվածքները և հացահատիկի

կորուստը։ «Կոմբայնի տասնորյակը» տեխնիկային տիրապետելու հրդոր արշավը հանդիսացավ։ Կոմբայնի տեխնիկային տիրապետել—ահա տասնորյակի գործնական խնդիրը։ Համամիութենական «կոմբայնի տասնորյակի» ինիցիատորները—«Գիգանտի» կոմյերիտները,—ահագին աշխատանք անցկացրին։ Խորհտնտի կենտրոնական բազայի կոմյերիտ բջիջը կազմակերպեց պահեստի մասերի խոտանքի (брак) և վատ սարքված ու նորոգված կոմբայնների ցուցահանդես։ «Կոմբայնի տասնորյակի» որերին բջիջը տեխնիկական խմբակներ կազմակերպեց։ Կոմյերիտ բջիջը շուրջկալ հայտարարեց՝ կոմբայնների պահեստի մասերը պատրաստող ցեխերի հետազոտման համար։

«Գիգանտ» տպագիր լրագրի եջերում կոմյերիտներն անցկացնում եյին կոմբայնավարների հեռակա արտադրական կոնֆերանս։ Այս կոնֆերանսը նպաստեց կոմսոմոլին խնամքով ուսումնասիրել կոմբայնավարների անցյալ տարվա բերքահավաքման աշխատանքի փորձը։ Կոմբայնավարների աշխատանքի փորձն ընդհանրացնելով, կոմիտեն կարողացավ՝ կոմբայնավարների արտադրական առաջարկների վրա հիմնված՝ կազմել բերքահավաքման աշխատանքի մարտական պլանը։ Յուրաքանչյուր բջիջի աշխատանքում այս պլանը հանդիսանում է մի լավ ոգնական։ Թե վորքան արժեքավոր են կոմբայնավարների առաջարկները, կարելի յե դատել կոմբայնավար-կոմյերիտական ընկ. Մոսկովոյի հեռակա կոնֆերանսում ունեցած յելույթից։

«Իմ, վորպես կոմբայնավարի, աշխատանքի հաջողություններն,—ասում է Մոսկովոյը,—բացատրվում են նրանով, վոր յես կարողացա իմ ագրեգատի բոլոր բանվորների աշխատանքի մեջ համաձայնություն ձեռք բերել։ Նրանք ուշադրությամբ հետևում եյին իմ ազդանշաններին։ Ագրեգատում յես սահմանեցի միանձնյա խիստ ղեկավարություն։ Ամենքը պարտական են ստորադասվել կոմբայնավարին, վոչ թե նրա համար, վոր յես ավագ եմ, այլ նրա համար, վոր աշխատանքի պայմաններն են այդ պահանջում։

Մեր ագրեգատում խիստ պատասխանատվության եր սահմանված՝ հանձնարարված գործի համար։ Շտուրվալնիները պատասխանատու եյին իրենց կոմբայնի համար, յուղելու համար։ Հարդ վայր գցողը պատասխանատու յեր հարդի գցման համար, շղթաներն ու փայտե մասերը յուղելու համար։ Մեր ագրեգատի տրակտորիստուհին պատասխանատու յեր վոչ միայն տրակտորի, այլ և յերկու կոմբայնների մոտորների համար։

Սկզբում յես չեյի հավատում ագրեգատի բանվորներին, լիովին վստահ չեյի նրանց վրա։ Անդադար ման եյի գալիս և անձամբ եյի ստուգում ամեն բան, թեև իմ անվստահությունը նրանցից ծածկում եյի։ Հետո յես համոզվեցի, վոր մեր կոլեկտիվը ձեռք-ձեռ-

քի ված է աշխատում և ամենքն էլ լուրջ են վերաբերվում իրենց գործին։

Ցեռ ամեն կերպ աշխատում էր ոգնել ընկերներիս նրանց աշխատանքում, սովորեցնել նրանց։ ցույց էր տալիս, թե վորտեղ ինչ յուղ է հարկավոր, թե վոր բանը վոր բանից կախում ունի։ Թող ամեն կոմբայնավար միտքը պահի—ինչքան քիչ գիտենան ագրեգատի տղաներն իրենց մեքենան, այնքան ավելի դժվար կլինի իր աշխատանքը։

Արձակ ժամանակ լինելուն պես, այսինքն յերբ անձրևի կամ յեղյամի պատճառով կոմբայնը չեր կարող աշխատել, մենք ուսուցմամբ եյինք զբաղվում։ Մնացած որերում, հերթափոխությունից հետո, յես տալիս եյի նրանց լիակատար հանգիստ—արևի տակ ամբողջ որն աշխատելուց շատ եյին հոգնում տղաները։ Վատ հանգստացողը վատ էլ կաշխատի։ Բայց ամեն անգամ, յերբ մեքենան կոտրվում եր կամ կապրիզ եր անում, մենք միշտ քննության եյինք առնում դրանց պատճառները։ Ագրեգատում մենք ունեյինք արտադրական խորհրդակցություն։

Իբրև շտուրվալնիներ, իմ մոտ աշխատում եյին «Գիգանտի» հարեվան կոմունայից յերկու կոլտնտեսականներ։

Վորքան շուտ հավաքենք «Գիգանտում, այնքան շուտ կոգնենք կոլտնտների դաշտերի հավաքմանը։ Նրանք ամեն ջանք եյին գործ դնում հարվածայնորեն աշխատել, վորովհետև գիտեյին, վոր իրենց աշխատանքից «Գիգանտում» կախում ունի իրենց կոմունայի բերքի հավաքումը։

Բերքը փոխադրելու տրանսպորտ բավականաչափ ունեյինք։ Բայց աշխատանքի խափանումներ յեղան, վորովհետև սկզբում բեռնատար մեքենաները կոմբայնին չեյին ամրացված։ Պատահում եր այնպես, վոր նշան ես անում, որինակ, բեռնատար մեքենային, վոր գա, այն ինչ շոֆերը առիթ է փնտռում մեքենան ուղղել դեպի ուրիշ կոմբայն, վորովհետև դեպի այն կողմ ճանապարհն ավելի լավ եր։ Արտադրական խորհրդակցության մեջ մենք վորոշեցինք յուրաքանչյուր կոմբայնի մի ավտոմեքենա ամրացնել։

Իսկ Սիբիրի խորհտնտներում, ուր մենք աշխատում եյինք «Գիգանտի» բերքահավաքումը վերջացնելուց հետո, գործավարձային սիստեմի բացակայության պատճառով, տրանսպորտը վատ եր։ «Գիգանտի» փորձի վրա հիմնված, մենք շոֆերներին փոխադրեցինք գործավարձային վճարման, և արտադրողականությունն անմիջապես բարձրացավ։ Յուրաքանչյուր ավտոմոբիլ 7 կամ 8 ռեյսի տեղ որական 12-13 ռեյս եր անում և ամեն մեկ ռեյսի համար ստանում եր մեկ-մեկ ռուբլի»։

«Գիգանտը», վոտքից գլուխ զինված է գիմավորում բերքահավաքը վոր ամբողջ տարվա հաջողության վորոշողն է։ Յեվ նա պատվով կանցկացնե բերքահավաքը։ դրան յերաշխավոր է խորհտնտի նախընթաց ամբողջ աշխատանքը։ դրան յերաշխավոր է մասսաների ենտուզիազմը, բանվորների անձնվիրությունն ու սերը դեպի գործը և մրցման ծավալուն ալիքները։

Բոլշևիկյան յերկրորդ բերքատվության համար մղված պայքարում, կուսակցական կազմակերպության ղեկավարությամբ, սոցիալիստական հողագործության հարվածայինների առաջին շարքերում կլինի «Գիգանտի» կոմյերիտը։

Գիշերվա հերթափոխություններում աշխատելն ավելի դժվար է—հացաբուլյան ավելի թաց է, իսկ գիշերվա հերթափոխությունների ըստ սպասարկումն ավելի վատ է։ Ցերեկն ամենքն էլ հետևում են բերքահավաքի ընթացքին—և՛ հողամասի վարիչը, և՛ մեխանիկը, և՛ մեխանիկի ոգնականը, և՛ ագրոնոմը, այնինչ գիշերները շատ անդամ վոչ վոք էլ չի լինում—քնած են։ ուժերը պետք է այնպես դասավորել, վոր գիշերվա հերթափոխությունը հողամասում ավելի լավ սպասարկվի, քան թե ցերեկվանը։ Կոմբայններն իրենց վրա պետք է վերցնեն հերթափոխությունների կոմյերիտական պահպանումը։ Չէ՞ վոր ջարդված քների մեծագույն մասը պատահում է գիշերները։ Այստեղ արձանագրված է մեր փորձերից վոչ բոլորը։ Ամբողջ փորձը հաշվելու համար մենք պարտավորվում ենք կատարել մեր գործնական աշխատանքի հիման վրա կոմբայնավար—հարվածայինի հուշագիրը—նա կոգնի կադրերի ուսուցմանը։ Պետք է ասել, վոր «կոմբայնի տասնորյակի» գլխավոր խնդիրը—դա կոմբայնավարների կադրերի նախապատրաստման ստուգումն է։ Կոմբայնն—այդ հուժկու և բարդ մեքենան—պետք է հավատարիմ և կարող ձեռքերում գտնվի։

Կոմբայնավարները բերքատվության բոլշևիկյան հավաքման առաջամարտիկները պետք է լինեն։

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм ССР
Ս. ԱՄ Ա. ՄԱՍՍԻՍՅԱՆ
ՍՅՈՒՍԻՍՅԱՆ ՍԵՎԱՆ

Ответственный редактор
М. М. Гигоян
Техредактор
Г. М. Маркарян

№ 2247

С. Х.

Сд. в наб. 4/III —1932 г.
Сд. в печат 31/III—1932 г.
Об'ем 4 3/4 печ. листа
Тираж 2000 экз.

Ростов н-Д. ГЕТСКК Пс-ф А —05—148х210 № 1228 Уполкрайлита № 1256

Ազգային գրադարան
NL0205007

259

12784

С-39-1
48

На армянском языке

М. ОСИПОВ

УДАРНАЯ БРИГАДА СОЦИАЛИСТИЧЕСКОГО ЗЕМЛЕДЕЛИЯ

Из-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ"

ԳՐԱՊԱՀԵՍՏԸ՝
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ, ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ., 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՅԵՆՏՐ)